Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
20 հունիսի 2021թ.

ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն

Վերջնական զեկույց

Վարշավա
27 հոկտեմբերի, 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓԱԳԻՐ 1

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ 8

III. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 9

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 10

V. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 13

VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ 16

VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ 18

VIII. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՄԻՋԱՎԱՅՐ 20

IX. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 23

X. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 26

A. ԶԼՄ ՄԻՋԱՎԱՅՐ 26

B. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ 27

C. ԺՀՄԻԳ ԸՆԴԱ ՄԵԴԻԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 28

XI. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ 30

XII. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ 35

XIII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐ 36

XIV. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ 39

XV. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ 41

A. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ 41

B. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ 43

ՀԱՎԵԼՎԱԾ I – ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 46

ՀԱՎԵԼՎԱԾ II: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ 48

ԺՀՄԻԳ-Ի ՄԱՍԻՆ 56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
20 հունիսի 2021թ.

ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույց [1]

I. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի իշխանությունների հրավերով և 2021թ. ապրիլի 28-30-ը իրականացված Կարիքների գնահատման առաքելության հիման վրա, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) մայիսի 18-ին գործուղեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ)՝ 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունները դիտարկելու նպատակով: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատեց ընտրական գործընթացի համապատասխանությունը ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների այլ չափորոշիչներին, ինչպես նաև ներպետական օրենսդրությանը:
Ընտրությունների օրը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին միացան ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ) և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) պատվիրակությունները՝ կազմավորելով Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ):

Հունիսի 21-ին հրապարակված «Նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ հայտարարությամբ» ԸՄԴԱ-ն եզրակացրել էր, որ ընտրությունները «եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով՝ հաշվի առնելով վերջինիս կազմակերպման համար նախատեսված կարճ ժամանակահատվածը: Այդուհանդերձ, դրանք բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և առանցքային մրցակիցների կողմից գործածվող աճող սադրիչ հռետորաբանությամբ: Իրավական դաշտն, ընդհանուր առմամբ, համապարփակ է, սակայն այն փաստը, որ փոփոխություններն ընդունվել են ընտրությունների անցկացման ժամկետին այդքան մոտ ժամանակահատվածում, հանգեցրել է որոշակի իրավական անորոշության: Ընտրությունները կազմակերպող և անցկացնող մարմինն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ ու մասնագիտորեն և վայելել է ընտրական շահառուների վստահությունը: Ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, հիմնարար իրավունքներն ու ազատություններն, ընդհանուր առմամբ, հարգվել են: Մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Այդուհանդերձ, քարոզչության բացասական տոնայնությունը և անձնավորվածությունը խոչընդոտել են քաղաքական շեշտադրմամբ բանավեճերի անցկացմանը: Ընդհանրապես, քարոզարշավի ամբողջ ընթացքում կանայք եղել են հետին պլանում: Ընտրությունների օրը, այդ թվում՝ նաև ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ, դրական են գնահատվել»:

Արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման մասին որոշումը կայացվել է 2020թ. նոյեմբերին Ադրբեջանի հետ կնքված հրադադարի հայտարարության արդյունքում տեղի ունեցած հակակառավարական ցույցերի արդյունքում: Հրադադարի

[1] Սույն զեկույցի անգլերեն տարբերակը միակ պաշտոնական փաստաթուղթն է: Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանություն:

հայտարարությունը հաջորդել էր Լեռնային Ղարաբաղում և դրա շուրջ տեղի ունեցած 44-օրյա պատերազմին: Ընտրությունները կայացել են Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվող լարվածության համատեքստում: Քովիդ-19 համավարակի և պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական անկումը ևս ազդեցություն է ունեցել ընտրական միջավայրի վրա: Ազգային անվտանգության հարցերը գերակայել են քաղաքական դիսկուրսում՝ ստվերելով քաղաքական այլ հիմնախնդիրներ, և կոշտ հռետորաբանությունը ավելի է սրել արդեն իսկ բևեռացած քաղաքական միջավայրը:

Իրավական դաշտը հիմնականում նպաստավոր է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար և ապահովել է ընտրական գործընթացի բաղադրիչների համապարփակ կարգավորում՝ չնայած որոշ նախապես մատնանշված թերություններին, որոնք մնում են չշտկված: 2016թ. ընդունված ընտրական օրենսգիրքը փոփոխվել է 2021թ. ապրիլ և մայիս ամիսներին՝ ընտրությունները նշանակելուց կարճ ժամանակ առաջ: Փոփոխությունները հանրայնորեն քննարկվել և աջակցության են արժանացել կուսակցությունների և քաղաքացիական հասարակության խմբերի մեծ մասի կողմից. առաջարկվող ընտրական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկումը հիմնականում ընկալվել է որպես ներառական: Այդուհանդերձ, Ազգային ժողովի կողմից փոփոխությունների ուշ ընդունումը և հետագա ուժի մեջ մտնելը քիչ ժամանակ են թողել կարգավորումները կիրառելու և ընտրողներին նոր ընթացակարգերի մասին իրազեկելու համար:

Ապրիլի փոփոխությունների համաձայն՝ տարածքային բաց ցուցակների վերացման արդյունքում ընտրողներն այժմ փակ համամասնական համակարգի մեկ համապետական ցուցակով ընտրում են առնվազն 101 պատգամավոր՝ հնգամյա ժամկետով: Մանդատների բաշխմանը մասնակցելու համար կուսակցությունները պետք է ստանան ընտրողների քվեների առնվազն հինգ տոկոսը, իսկ կուսակցությունների դաշինքները՝ քվեների առնվազն յոթ տոկոսը: Համակարգը նախատեսում է նաև լրացուցիչ մանդատների տրամադրում «կայուն սահմանադրական մեծամասնություն» երաշխավորելու համար՝ միևնույն ժամանակ ապահովելով ընդդիմության ներկայացվածություն բոլոր մանդատների առնվազն մեկ երրորդի չափով: Օրենքը նախատեսում է մինչև չորս լրացուցիչ մանդատ Ազգային ժողովում, որոնք տրամադրվում են ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին՝ առավել մեծ թվով չորս ազգային փոքրամասնություններից (եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր) յուրաքանչյուրին մեկ մանդատ սկզբունքով:

Ընտրությունների վարչարարությունն իրականացվում է եռաստիճան համակարգով, որը կազմված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ԿԸՀ), 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից (ԸԸՀ) և 2,008 տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ): ԿԸՀ-ն իր աշխատանքն իրականացրել է կոլեգիալ, թափանցիկ և արհեստավարժ կերպով՝ պահպանելով օրենքով սահմանված բոլոր վերջնաժամկետները, չնայած նախապատրաստական աշխատանքների համար սահմանված սեղմ ժամկետին: Թեև ԿԸՀ-ն ունի նորմատիվ ակտեր ընդունելու իրավասություն, ընտրության օրը կազմված ընտրական ընթացակարգերի վերաբերյալ պարզաբանումների զգալի մասը չեն ընդունվել ԿԸՀ նիստերի ընթացքում և չեն հանդիսացել ֆորմալ ԿԸՀ որոշումների առարկա: ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցների մեծ մասը վստահություն է հայտնել ԿԸՀ-ի՝ իր մանդատն արհեստավարժ կերպով իրացնելու

կարողության վերաբերյալ: Որոշ մտավախություններ են հնչել ընտրական վարչարարության մարմինների՝ իրենց անկախությունը պահպանելու ունակության վերաբերյալ: Թեև ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները ԸԸՀ-ների աշխատանքը գնահատել են որպես ընդհանուր առմամբ արհեստավարժ և թափանցիկ, ԸԸՀ որոշումները չեն հրապարակվել առցանց և միատեսակ եղանակով չեն ցուցադրվել հանրությանը տեղեկացնելու համար՝ հակառակ օրենքի պահանջի:

ՏԸՀ անդամներն առաջադրվել են համապատասխան ԸԸՀ-ների և արձակված Ազգային ժողովում ներկայացված երեք խմբակցությունների կողմից: Բազմաթիվ ԸԸՀ-ներ ստիպված են եղել լրացուցիչ առաջադրումներ անել, քանի որ խորհրդարանական խմբակցությունները, մասնավորապես Լուսավոր Հայաստանը, բավարար թվով թեկնածուներ չէին առաջադրել բոլոր ՏԸՀ-ների համար: Օրենքի համաձայն՝ ՏԸՀ ղեկավար պաշտոնները բաշխվել են արձակված ԱԺ-ի խմբակցությունների միջև՝ վերջիններիս ներկայացվածությանը համաչափ, և այդպիսով ղեկավար պաշտոնների ճնշող մեծամասնությունը բաժին է ընկել իշխող կուսակցությանը: Ե՛վ ԿԸՀ, և՛ ԸԸՀ անդամները մտահոգություն են հայտնել առ այն, որ կուսակցությունների կողմից առաջադրված ՏԸՀ անդամներից շատերը, հատկապես ՏԸՀ նախագահներն ու քարտուղարները, բավարար կրթություն և փորձառություն չեն ունեցել՝ իրենց պարտականությունները պատշաճ կերպով կատարելու համար: Կանայք կազմել են բոլոր ՏԸՀ անդամների երկու երրորդը, սակայն թերներկայացված են եղել ԿԸՀ և ԸԸՀ մակարդակում և, ընդհանրապես, ընտրական վարչարարության մարմինների ղեկավար պաշտոններում:

Ընտրողների գրանցումը ներառել է ընտրությունների օրվա դրությամբ 2,6 մլն. ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների, այդ թվում՝ արտերկրում բնակվող զգալի թվով ընտրողների, որոնք մնում են ընտրացուցակներում, քանի որ պահպանում են ՀՀ-ում պաշտոնական բնակությունը: Ընտրությունների օրվա դրությամբ, 18 տարին լրացած բոլոր քաղաքացիները ունեցել են ընտրական իրավունք, բացառությամբ ծանր հանցագործության համար դատապարտվածների և դատարանի որոշմամբ մտավոր հաշմանդամության հետևանքով անգործունակ ճանաչվածների: Մտավոր հաշմանդամության հիմքով ընտրական իրավունքից զրկելը հակասում է միջազգային չափանիշերին: Օրենքին համապատասխան՝ ապահովվել է ընտրացուցակների հասանելիությունը հանրությանը տեղեկացնելու համար մինչև ընտրությունների օրը, և ընտրողներին հնարավորություն է ընձեռվել դիմել ուղղումներ կատարելու համար: ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներն, ընդհանուր առմամբ, գոհ են եղել թափանցիկության մակարդակից, և ընտրողների ցուցակների ճշգրտության առումով մտահոգություններ չեն հնչել:

ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունը (ԱՎՎ) մանրամասն տեղեկություններ չի հրապարակել Ընտրողների ռեգիստրում և ընտրացուցակներում կատարված թարմացումների վերաբերյալ, ինչը, թեև չլինելով օրենքի պահանջ, սահմանափակել է Ընտրողների ռեգիստրի և ընտրացուցակների կառավարման ընդհանուր թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Ընտրությունների օրն ընտրողների նույնականացման տեխնիկական սարքավորումները (ԸՆՍ), որոնց մեջ առկա էր տվյալ տեղամասի ընտրացուցակի էլեկտրոնային պատճենը, օգտագործվել են ընտրողների նույնականացման համար՝ վերջիններիս անձը հաստատող

փաստաթղթերը և մատնահետքերը սքանավորելու միջոցով: Ընտրությունների օրվանից հետո ԿԸՀ-ն հրապարակել է բոլոր տեղամասային կենտրոններից ստացած ստորագրված ընտրացուցակները, ինչպես պահանջվում է օրենքով: Այս պահանջը հակասում է տվյալների պաշտպանության և գաղտնիության պահպանման միջազգային ստանդարտներին ու լավագույն գործելակերպին՝ անհատ ընտրողների մասնակցության տեսանկյունից: Այդուհանդերձ, այս ընտրությունների համատեքստում ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներն աջակցություն են հայտնել այս միջոցի կիրառմանը՝ որպես թափանցիկության բարձրացման և ընտրախախտումների կանխարգելման արդյունավետ գործիք:

Ներառական գործընթացով ԿԸՀ-ն գրանցել է 22 կուսակցությունների և 4 կուսակցությունների դաշինքների նախընտրական ցուցակները՝ ընդհանուր թվով 2,623 թեկնածուով, այդ թվում՝ 965 կին (37 տոկոս)՝ ընտրողներին ընձեռելով կուսակցությունների և դաշինքների միջև լայն ընտրության հնարավորություն: Մեկ կուսակցության բացարկից հետո ընտրությունների մրցապայքարին մասնակցել են 21 կուսակցություն և 4 դաշինք: Բոլոր ցուցակները լիովին կատարել են 30 տոկոս գենդերային ներկայացվածության, ինչպես նաև յուրաքանչյուր եռյակում երկու սեռի թեկնածու ունենալու պահանջները: Օրենքը թեկնածուների ինքնաառաջադրում չի նախատեսում՝ հակառակ 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.5 պարբերության:

Հիմնարար իրավունքներն ու ազատություններն, ընդհանուր առմամբ, պահպանվել են, և մրցակիցները հնարավորություն են ունեցել ազատ քարոզարշավ իրականացնել: Այս արտահերթ ընտրությունների համար պաշտոնական քարոզարշավի ժամկետը 12 օր էր՝ օրենքի պահանջի համաձայն, այն դեպքում, երբ հերթական ընտրությունների ժամանակ այն տևում է 35-ից 45 օր: Այդուհանդերձ, քարոզարշավին նախորդող ժամանակահատվածի վերաբերյալ կարգավորումների բացակայության պայմաններում որոշ կուսակցություններ սկսեցին քարոզչություն իրականացնել պաշտոնական մեկնարկի ամսաթվից շուտ: Մրցակիցներից ոմանք ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին մտահոգություններ հայտնեցին, որ պաշտոնական քարոզարշավի կարճ տևողությունն այս ընտրությունների ժամանակ առավելություն է ընձեռել ավելի կայացած կուսակցություններին: Քարոզարշավն առանձնացել է բևեռացման բարձր աստիճանով և հաճախակի բախումնային բնույթով: Բանավեճային միջավայրը ստվերվել է ընդհուպ մինչև ընտրությունների օրը շարունակվող ծայրաստիճան կոշտ, անհանդուրժող, սադրիչ և խտրական հռետորաբանությամբ: Կանայք ակնհայտորեն դուրս էին թողնված քարոզարշավային միջոցառումներից՝ շատ հազվադեպ հանդես գալով որպես խոսնակ: Բացի այդ, մրցակիցների քարոզարշավներում նկատելիորեն բացակայում էին կանանց և ազգային փոքրամասնություններին վերաբերող ուղերձները: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է քաղաքական գործիչների և գործատուների կողմից մասնավոր հատվածի և հանրային ծառայողների նկատմամբ գործադրվող ճնշումների դեպքեր՝ քարոզարշավային միջոցառումներին հաճախելու համար: ԸՄԴԱ-ին ներկայացվել են նաև ընտրակաշառքի կիրառման դեպքերի մասին մի շարք հաղորդումներ՝ մասնավորապես ավելի մեծ կուսակցությունների կողմից: Ընտրակաշառքի առնչությամբ քրեական գործեր են հարուցվել ընդդիմադիր թեկնածուների նկատմամբ:

Քարոզարշավի ֆինանսավորման կանոնները թույլ են տալիս ֆինանսավորում և՛ հանրային և՛ մասնավոր աղբյուրներից: Համապատասխան օրենքով սահմանվում են քարոզարշավի մուտքերի և ծախսերի առավելագույն սահմանաչափեր: Թեև կանոնները մանրամասն են, առկա են մի շարք թերություններ, որոնք թույլ են տալիս շրջանցել իրավական կարգավորումները: Մասնավորապես և չնայած վաղուց ու բազմաթիվ անգամներ կրկնված ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականներին՝ քարոզչական ծախսերի իրավական սահմանումը չի ներառում կազմակերպչական ծախսերը, ինչպես օրինակ՝ տարածքների վարձակալության, տրանսպորտային, հաղորդակցության և քարոզարշավում ներգրավված անձնակազմի վարձատրության ծախսերը՝ մրցակիցներին հնարավորություն տալով այդպիսի ծախսերն օգտագործել որպես սահմանված սահմանաչափերի շրջանցման միջոց: ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) պատասխանատու է ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների կողմից քարոզարշավի ֆինանսավորման օրենսդրության պահպանման վերահսկողության համար: Բոլոր մրցակցող կուսակցություններն ու դաշինքները պահպանել են ֆինանսական հաշվետվությունների ներկայացման սահմանված վերջնաժամկետները: Հայտարարագրված ծախսերի մեծ մասն արվել է քարոզչական գովազդի և տպագիր նյութերի վրա: Մրցակիցներից և ոչ մեկը չի հայտարարագրել սահմանաչափերը գերազանցող ծախսեր: ՎՎԾ-ն ֆինանսական հաշվետվությունները հրապարակել է առցանց, ինչը նպաստել է ֆինանսական թափանցիկությանը:

Արտահայտվելու ազատությունը, որը երաշխավորված է Սահմանադրությամբ, հարգվել է: ԶԼՄ միջավայրը բազմազան է, թեև շատ մասնավոր հեռարձակողներ ունեն ընդգծված քաղաքական փոխկապակցվածություն: Հեռուստատեսությունը մնում է քաղաքական լրատվության հիմնական աղբյուր, թեև սոցիալական ցանցերից օգտվողների թիվը ևս զգալիորեն աճել է: Օրենքը ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների համար նախատեսում է անվճար եթերաժամանակ հանրային հեռարձակողների եթերով, ինչպես նաև թույլ է տալիս գովազդ ձեռք բերել հանրային և մասնավոր ԶԼՄ-ներում: ԺՀՄԻԳ ԸԴԱ ԶԼՄ մշտադիտարկումը ցույց է տվել, որ բազմաթիվ խոշոր ԶԼՄ-ներ տեսանելի ջանք են գործադրել լուսաբանելու մրցակիցների մեծամասնությանը, նպաստելով ընտրողների՝ տեղեկացված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությանը: Միևնույն ժամանակ, որոշ ալիքներ, որոնք ընկալվում են որպես այս կամ այն կուսակցության հետ բացահայտորեն փոխկապակցված, այդ մրցակիցներին տրամադրել են արտոնյալ վերաբերմունք: Հանրային հեռուստաընկերությունն, ընդհանուր առմամբ, հավասարակշիռ կերպով է լուսաբանել մրցակիցներին, սակայն հեռարձակողը խմբագրել էր ընդդիմադիր կուսակցություններից մեկի գովազդային հոլովակը՝ առերևույթ զրպարտիչ խոսքի պատճառով: Այդ գործողության առնչությամբ բերված բողոքը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ճանաչվել էր անընդունելի: Նորաստեղծ մի շարք կուսակցություններ, վկայակոչելով ավանդական ԶԼՄ-ներով անբավարար լուսաբանումը, նախընտրել էին օգտվել սոցիալական ցանցերից: Մի շարք լրատվամիջոցներ կազմակերպել են բանավեճեր և հարցազրույցներ, մասնավորապես Հանրային հեռուստաընկերությունը: Սակայն մրցակից կուսակցությունների ու դաշինքների կեսից ավելիի առաջնորդները հրաժարվել էին Հանրային հեռուստատեսության եզրափակիչ երկու բանավեճերին մասնակցելուց, ինչը բացասաբար էր ազդել այդ բանավեճերի տեղեկատվական արժեքի վրա:

Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողով, իսկ ԿԸՀ դեմ բողոքներն ընդդատյա են Վարչական դատարանին: Չնայած նախկին ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականներին՝ բողոքարկման իրավունքը սահմանող կանոնները մնում են նեղ: ԿԸՀ-ն ստացել է 22 դիմում-բողոքներ, ԿԸՀ-ի 21 որոշումների կապակցությամբ բողոքարկումներ են արվել Վարչական դատարան նախքան քվեարկության օրը: ԿԸՀ-ի կողմից դիմում-բողոքների քննությունը եղել է բաց և կոլեգիալ, բոլոր մասնակիցները հնարավորություն են ունեցել արտահայտել իրենց տեսակետները, իսկ որոշումները հրապարակվել են պաշտոնական վերջնաժամկետների պահպանմամբ: Վարչական դատարանի լսումները, որոնք դիտարկվել են ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից, ընթացել են թափանցիկ և բաց նիստերով, մասնակիցներին հնարավորություն է ընձեռվել իրենց փաստարկները ներկայացնել դատարանին: Այդուհանդերձ, դատարանը միշտ չէ, որ հետեւողական է եղել ընտրական օրենսդրության իր մեկնաբանության հարցում:

Մինչև հունիսի 5-ի վերջնաժամկետը ԿԸՀ-ն հավատարմագրել է 19 տեղական դիտորդական կազմակերպություն՝ ընդհանուր թվով 8,748 դիտորդով, 8 միջազգային կազմակերպություն և դիվանագիտական առաքելությունների և արտերկրյա պատվիրակությունների 70 անդամ՝ ընտրությունների դիտարկում իրականացնելու նպատակով: Տեղական դիտորդական որոշ խմբեր մտահոգություն հայտնեցին, որ հավատարմագրման դիմումների ներկայացման օրենքով սահմանված վաղ վերջնաժամկետը՝ քվեարկության օվանից 15 օր առաջ, դժվարացնում է դիտորդների հավաքագրման գործընթացը: Չնայած նախկին ԺՀՄԻԳ հանձնարարականների՝ Ընտրական օրենսգիրքը տեղական դիտորդական կազմակերպություններից պահանջում է իրենց կանոնադրության մեջ ունենալ ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության նպատակների հստակ հղումներ ընտրությունների նշանակմանը նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում՝ դրանով անհարկի սահմանափակում կիրառելով դիտարկելու հնարավորության նկատմամբ:

Քվեարկության օրն ընդհանուր առմամբ խաղաղ էր՝ ԿԸՀ կողմից հայտարարված 49,4 տոկոս մասնակցությամբ: ԸՄԴԱ դիտորդները դրական են գնահատել բացումն ու քվեարկության ընթացքը դիտարկված տեղամասային կենտրոնների մեծ մասում: Այդուհանդերձ, ԸՄԴԱ դիտորդները արձանագրել են կուսակցությունների կամ դաշինքների վստահված անձանց կողմից քվեարկության գործընթացին միջամտելու որոշ դեպքեր, հաճախակի կուտակումներ, ինչպես նաև Քովիդ-19 համավարակի կանխարգելիչ միջոցառումների համընդհանուր անտեսում: Տեղամասային կենտրոնների մեծ մասը անհասանելի էր հաշմանդամություն ունեցող անձանց համար: ԸՄԴԱ դիտորդները հաղորդել են լարվածության կամ անհանգստության մի քանի դեպքերի մասին, ինչպես նաև արձանագրել են ընտրակաշառքի և ընտրողների վրա ճնշումների առանձին դեպքեր: ԸՄԴԱ դիտորդները չեն հաղորդել տեխնիկական սարքավորումների հետ կապված խնդիրների մասին, և ընտրողների նույնականացման ընթացակարգերը համարյա ամենուր պահպանվել են: ԸՄԴԱ դիտորդները զեկուցել են միայն մի քանի ընթացակարգային խախտումների դեպքերի մասին, ինչպես օրինակ՝ խմբային քվեարկություն, ինչպես նաև քվեարկության գաղտնիության պահպանման մի շարք խնդիրներ: Չնայած լուրջ ընթացակարգային սխալների և խախտումների

սահմանափակ թվին, ձայների հաշվարկը դրական է գնահատվել տեղամասային կենտրոնների մեծ մասում, որտեղ այն դիտարկվել և բնութագրվել է թափանցիկության բարձր մակարդակով: Սակայն ԸՄԴԱ դիտորդները հաղորդել են ձայների հաշվարկին անհարկի միջամտությունների դեպքերի մասին, հիմնականում՝ վստահված անձանց կողմից: Ձայների հաշվարկի և տվյալների համաձայնեցման ընթացակարգերը, ընդհանուր առմամբ, պահպանվել են, թեև զգալի թվով ՏԸՀ-ներ դժվարություններ են ունեցել արդյունքների արձանագրությունները լրացնելու հարցում: Աղյուսակավորման ընթացակարգերը ԸԸՀ-ներում հիմնականում պահպանվել են, արձանագրվել են շատ քիչ թվով ընթացակարգային բացթողումներ կամ խախտումներ: Այդուհանդերձ, շատ ԸԸՀ-երում հանձնման-ընդունման գործընթացը պատշաճ կազմակերպված չի եղել, և հաճախակի հաղորդումներ են եղել տարածքի անբավարարության և կուտակումների վերաբերյալ, որոնք բացասաբար են ազդել գործընթացի վրա: ԸՄԴԱ-ի կողմից դիտարկված բոլոր ԸԸՀ-ները երեք ժամը մեկ փակցրել են ամփոփ միջանկյալ արդյունքները հանրությանը տեղեկացնելու համար, ինչպես պահանջվում է օրենքով: ԸՄԴԱ դիտորդները աղյուսակավորման գործընթացին միջամտությունների դեպքերի մասին չեն հաղորդել:

Օրենքի պահանջին համապատասխան՝ հունիսի 22-ին ԿԸՀ-ն հայտարարեց և հրապարակեց նախնական արդյունքները՝ ըստ տեղամասային կենտրոնների: Հունիսի 22-25-ը կատարվեցին ընդհանուր թվով 83 վերահաշվարկ 16 ԸԸՀ-ում: Վերահաշվարկները մեծ մասամբ արձանագրեցին կամ մանր անճշտություններ, կամ որևէ փոփոխություն չկատարեցին արդյունքներում: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված վերահաշվարկները իրականացվել են արհեստավարժ և թափանցիկ կերպով:

Չնայած նախկին հանձնարարականներին՝ օրենքը սահմանափակում է ընտրությունների արդյունքների բողոքարկման իրավական կարգավիճակը: Վարչական դատարանը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ ընտրությունների արդյունքների վերաբերյալ բողոքներ չի ստացել: ԿԸՀ-ն ստացել է 4 դիմում ընտրությունների ընդհանուր արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով: Այն քննել է դիմումները և հայտարարել, որ ո՛չ ընտրությունների նախապատրաստական փուլում, ո՛չ ընտրությունների օրը չեն եղել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել արդյունքների վրա: Չորս կուսակցություններ և դաշինքներ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԿԸՀ որոշումը բողոքարկեցին Սահմանադրական դատարան: Հուլիսի 17-ին Սահմանադրական դատարանը մերժեց դիմումները և ուժի մեջ թողեց ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԿԸՀ որոշումը: Դատարանը որոշեց, որ թեև տեղի էին ունեցել հայտարարություններ որոշ առերևույթ խախտումների մասին, դրանք առանձին դեպքեր էին և չէին կարող ազդել ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա:

Սույն զեկույցը ներկայացնում է մի շարք հանձնարարականներ ի աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորություններին ու չափանիշերին առավել համապատասխանեցման ջանքերի: Առաջնահերթ հանձնարարականները վերաբերում են իրավական դաշտին, ընտրական վարչարարությանը, ընտրական իրավունքին, ընտրողների գրանցմանը, վարչական ռեսուրսի չարաշահմանը, քարոզարշավի խախտումներին առնչվող պատժամիջոցներին, քարոզարշավի ֆինանսավորմանը և հանրային հեռարձակող լրատվամիջոցներին:

ԺՀՄԻԳ-ը պատրաստակամություն է հայտնում աջակցել իշխանություններին ընտրական գործընթացների հետագա բարելավման և սույն ու նախկին զեկույցներում ներառված հանձնարարականների կյանքի կոչման գործում:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Հետևելով 2021թ. հունիսի 20-ի խորհրդարանական ընտրությունները դիտարկելու՝ Հայաստանի իշխանությունների հրավերին և 2021թ. ապրիլի 28-30-ը իրականացված Կարիքների գնահատման առաքելության հանձնարարականների հիման վրա, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) մայիսի 18-ին գործուղեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ): Առաքելությունը՝ Էոդան Մըրֆիի գլխավորությամբ, կազմված էր Երևանում տեղակայված 16 վերլուծաբաններից բաղկացած հիմնական թիմից և 26 երկարաժամկետ դիտորդներից, որոնք մայիսի 27-ից գործուղվել էին երկրի տարածքում գտնվող 10 տարբեր վայրեր: Առաքելության անդամները ներկայացնում էին ԵԱՀԿ 21 մասնակից պետություններ: ԸԴԱ-ն երկրում մնաց մինչև հուլիսի 3-ը:

Ընտրությունների օրվա դիտարկման համար ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին միացան պատվիրակություններ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովից և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովից՝ կազմավորելով ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը (ԸՄԴԱ): Մարգարետա Սեդերֆելթը նշանակվել էր ԵԱՀԿ գործող նախագահի կողմից որպես հատուկ համակարգող և ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար: ԵԱՀԿ ԽՎ պատվիրակությունը ղեկավարում էր Կարի Հենրիկսենը, իսկ ԵԽԽՎ պատվիրակությունը՝ Ջորջ Կատրուգալոսը: ԸՄԴԱ-ում ներգրավված հաստատություններից յուրաքանչյուրն ընդունել է 2005թ. Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագիրը: Գործուղվել են ընդհանուր թվով 344 դիտորդներ ԵԱՀԿ մասնակից 37 պետությունից, այդ թվում՝ 247 դիտորդ գործուղված ԺՀՄԻԳ-ի կողմից, ինչպես նաև 73 հոգուց բաղկացած պատվիրակություն ԵԱՀԿ ԽՎ և 24 հոգուց բաղկացած պատվիրակություն ԵԽԽՎ-ի կողմից: ԸՄԴԱ անդամների 41 տոկոսը կանայք էին:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատել է ընտրական գործընթացի համապատասխանությունը ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորություններին ու չափանիշերին, ինչպես նաև ներպետական օրենսդրությանը: Վերջնական զեկույցը հաջորդում է «Նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ հայտարարությանը», որը հրապարակվել է 2021թ. հունիսի 21-ին:[2]

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն շնորհակալություն է հայտնում ՀՀ իշխանություններին ընտրությունների դիտարկման հրավերի համար և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու Արտաքին գործերի նախարարությանը՝ իրենց աջակցության և համագործակցության համար: Այն նաև իր երախտիքն է հայտնում այլ հանրապետական և տեղական պետական կառույցներին, քաղաքական կուսակցություններին և դաշինքներին, թեկնածուներին, քաղաքացիական հասարակության, ԶԼՄ-ների, միջազգային

[2] Տե՛ս՝ նախկին ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության զեկույցները Հայաստանի մասին:

կազմակերպությունների ներկայացուցիչներին և այլ զրուցակիցներին՝ իրենց տեսակետները կիսելու և համագործակցության համար:

III. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հայաստանը խորհրդարանական հանրապետություն է, որտեղ գործադիր իշխանությունը պատկանում է վարչապետին՝ որպես կառավարության ղեկավար: 2021թ. մարտի 18-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց հունիսի 20-ին տեղի ունենալիք արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասին: Վերաբերելի իրավական վերջաժամկետների համապատասխան՝ նա հրաժարական տվեց ապրիլի 25-ին, և մայիսի 10-ի նախագահի հրամանագրով նշանակվեցին ընտրություններ: Արտահերթ ընտրություններ անցկացնելու որոշումը կայացվել էր հակակառավարական ցույցերի արդյունքում, որոնք տեղի էին ունեցել 2020թ. նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ Ադրբեջանի հետ հրադադարի հայտարարության ստորագրմանը հաջորդող ամիսներին: Հրադադարի մասին հայտարարությունը հաջորդել էր Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցած 44-օրյա պատերազմին:

Ընտրությունները կայացան Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվող լարվածության մթնոլորտում: Այս ընտրությունների ընթացքում քաղաքական դիսկուրսում ազգային անվտանգության հարցերը գերիշխում էին: Քովիդ – 19 համավարակի և պատերազմի արդյունքում առաջացած տնտեսական անկումը ևս իր ազդեցությունն ունեցավ ընտրական միջավայրի վրա: Քաղաքական միջավայրն ընդհուպ մինչև ընտրությունների օրը ծայրաստիճան բևեռացված էր՝ հաճախ անձնավորությունների թիրախավորմամբ և բնութագրվում էր ագրեսիվ մեղադրանքներով ու սադրիչ հռետորաբանությամբ:[3]

Նախորդող խորհրդարանական ընտրությունները ևս արտահերթ ընտրություններ էին, որոնք տեղի ունեցան 2018թ. դեկտեմբերին՝ վարչապետ Փաշինյանի հրաժարականի արդյունքում: Նա այդ պաշտոնը ստանձնել էր 2018թ. մայիսին Ազգային ժողովում կայացած քվեարկությամբ, որը հաջորդել էր Սերժ Սարգսյանի հրաժարականին: Պրն. Սարգսյանի գլխավորած Հայաստանի Հանրապետական Կուսակցությունը հաղթել էր 2017թ. ապրիլի խորհրդարանական ընտրություններում, սակայն նախորդ տասնամյակի ընթացքում նախագահի պաշտոնը զբաղեցնելուց հետո 2018թ. ապրիլին նրա նշանակումը վարչապետի պաշտոնում պատճառ էր դարձել բողոքի ցույցերի և ավարտվել իր հրաժարականով: Պրն. Փաշինյանի Քաղաքացիական պայմանագիր կուսակցության գլխավորած Իմ Քայլը դաշինքը հաղթել էր 2018թ. ընտրություններում 70.4 տոկոս ձայներով՝ ստանալով Ազգային ժողովի 132 մանդատներից 88-ը: Բարգավաճ Հայաստանն ու Լուսավոր Հայաստանը միակ այլ կուսակցություններն էին, որ հաղթահարել էին 5 տոկոսի շեմը՝ համապատասխանաբար 8.3 տոկոս (26 մանդատ) և 6.4 տոկոս (18 մանդատ) ձայներով:

[3] Քրեական գործ էր հարուցվել նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ 2018թ. հուլիսին՝ սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքով: Դատավարությունն ավարտվեց 2021թ. մարտին Սահմանադրական դատարանի կողմից մեղադրանքի հիմքում ընկած հոդվածը հակասահմանադրական ճանաչելով՝ որոշակիության և համարժեքության սկզբունքներին չհամապատասխանելու հիմքով (տե՛ս՝ Դիմումներ և բողոքներ):

Կանայք թերներկայացված են հանրային պաշտոններում: Նախքան այս ընտրությունները կանայք ներկայացնում էին խորհրդարանի 24 տոկոսը, զբաղեցնում 12 նախարարական պաշտոններից մեկը և Հայաստանի 10 մարզերի մարզպետների պաշտոններից և ոչ մեկը:

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խորհրդարանական ընտրությունները կարգավորվում են 1995թ. Սահմանադրությունով (վերջին անգամ փոփոխված 2015թ. հանրաքվեով), 2016թ. Ընտրական օրենսգրքով և այլ օրենքներով:[4] Հայաստանը նաև կողմ է հանդիսանում ժողովրդավարական ընտրություններին առնչվող հիմնական միջազգային պայմանագրերի:[5] Ընդհանուր առմամբ, իրավական դաշտը նպաստավոր է ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար:

Ընտրական օրենսդրության դաշտը ապահովում է ընտրական վարչարարության, ընտրողների ցուցակներին և ընտրողների նույնականացմանն առնչվող հարցերի համապարփակ կարգավորում: Թեև թեկնածուների գրանցմանը, քարոզարշավի անցկացմանն ու ֆինանսավորմանը վերաբերվող կարգավորումները մանրամասն են, որոշ թերություններ, որ նախկինում մատնանշվել են ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից, մնում են չկատարված:[6] Դրանց թվին են պատկանում երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրական իրավունքների սահմանափակումները, քարոզարշավի ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրման կարճ ժամկետները, ինչպես նաև քարոզարշավային ծախսերի նեղ սահմանումը: Դիմումների և բողոքների քննումը, ինչպես նաև ընտրախախտումներին արձագանքումը կարգավորող իրավական դաշտը, պատշաճ լինելով հանդերձ, ևս կարող էր շահել լրացուցիչ բարելավումից: (*Տե՛ս՝ Քարոզարշավի ֆինանսավորում և Դիմումներ և Բողոքներ*):

Ընտրական օրենսգիրքն ընդունվել է 2016թ. և մի քանի անգամ փոփոխվել է այդ ժամանակից ի վեր:[7] 2021թ. ապրիլին և մայիսին, ընտրությունների նշանակումից կարճ

---

4 Ներառյալ «Քաղաքական կուսակցությունների», «Հավաքների ազատության», «Վարչական դատավարության» և «Վարչական իրավախախտումների» մասին օրենքները, ինչպես նաև Քաղաքացիական և Քրեական օրենսգրքերը:

5 Դրանց թվում են 1950թ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), 1965թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (ICERD), 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), 2003թ. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան (UNCAC) և2006թ. ՄԱԿ-ի Կոնվենցիան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին (CRPD): Հայաստանը նաև անդամակցում է Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովին (Վենետիկի հանձնաժողով), և Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբին (ԳՐԵԿՈ):

6 Տե՛ս՝ 2016թ. ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի համատեղ կարծիքը համապատասխանաբար Ընտրական օրենսգրքի նախագծի և Ընտրական օրենսգրքի վերաբերյալ:

7 2018թ. Ընտրական օրենսգրքի և խորհրդարանական ընտրություններին առնչվող այլ օրենսդրության փոփոխությունները, ի թիվս այլ կարգավորումների, սահմանեցին պետական ռեսուրսների չարաշահման դեմ

ժամանակ առաջ, Ազգային ժողովն ընդունեց փոփոխությունների երկու փաթեթ:[8] Ապրիլի 1-ի փոփոխություններով վերացվեցին թեկնածուների բաց տարածքային ցուցակները՝ ներմուծելով համապատասխան ընթացակարգային փոփոխություններ, այդ թվում՝ թեկնածուների գրանցման, մանդատների բաշխման և քվեարկության օրվա ընթացակարգերում: Փոփոխությունների այս փաթեթն ընդունվեց 132 պատգամավորից 82-ի ձայնով, և բոլորը, բացի երկուսից, իշխող կուսակցությունից էին:[9] Թեև մեկ միասնական համապետական ցուցակին անցումը բավական տևական ժամանակ քննարկվել և պաշտպանվել էր բազմաթիվ քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից, այսպիսի նշանակություն ունեցող փոփոխությունը ընտրությունների օրվան այդքան մոտ չի համապատասխանում լավագույն գործելակերպին, և ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ զրուցակիցներ մտահոգություններ հայտնեցին ընտրություններին այդքան մոտ փոփոխություններ կատարելու առումով:[10] Հանրապետության նախագահն ընտրեց ընդունված փոփոխությունների փաթեթը չստորագրելու ճանապարհը՝ վկայակոչելով դրանց ընդունման ժամկետները և Ազգային ժողովում կոնսենսուսի բացակայությունը:[11] 2021թ. մայիսի 7-ին ընդունվեց փոփոխությունների երկրորդ, ավելի ընդգրկուն փաթեթ: Թեև փոփոխությունների երկրորդ փաթեթը կիրառելի չէր այս ընտրությունների ժամանակ, դրանց ընդունումը համընկավ ընտրական գործընթացի մեկնարկի հետ, և ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցներից շատերը նշեցին, որ բավարար ժամանակ չէին ունեցել ծանոթանալու նոր ընդունված օրենքին, քանի որ կենտրոնացել էին ընթացիկ ընտրությունների վրա: Մինչև փոփոխությունների երկու փաթեթների ընդունելն ու ստորագրելն ընտրական գործընթացի շահառուները վստահ չէին, թե որ փոփոխությունները կկիրառվեին տվյալ ընտրությունների ժամանակ, ինչն ազդել էր իրավական որոշակիության վրա և սահմանափակ ժամանակ էր թողել նոր կանոնակարգերի իրականացմանը և ընտրողներին նոր ընթացակարգերի մասին իրազեկելու համար:[12]

Իրավական որոշակիություն ապահովելու համար ընտրությունների իրավական կարգավորումներում փոփոխություններ պետք է կատարվեն ընտրությունների

միջոցներ, վերացրեցին ԶԼՄ ներկայացուցիչների՝ ընտրությունների համար հավատարմագրման սահմանափակումները և առավել խիստ պատժամիջոցներ սահմանեցին ընտրախախտումների համար:

8 Առաջարկվող բարեփոխումների հանրային իրազեկումները սկսվեցին 2020թ.-ին և փոփոխությունները վերանայվեցին: Տե՛ս՝ ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի Համատեղ հրատապ կարծիքը Ընտրական օրենսգրքի և առնչվող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ:

9 Բարգավաճ Հայաստանն ու Լուսավոր Հայաստանը չեն մասնակցել քվեարկությանը: Լուսավոր Հայաստանը հիմնականում առարկություններ ուներ փոփոխությունների ժամկետների հետ կապված, իսկ Բարգավաճ Հայաստանը բոյկոտում էր խորհրդարանական քվեարկությունների մեծ մասը՝ սկսած 2021թ. հունվարից:

10 Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի II.2.b մասում նշված է՝ «բ. Ընտրական օրենքի հիմնարար տարրերը, մասնավորապես պատշաճ ընտրական համակարգը, ընտրական հանձնաժողովների կազմը եւ ընտրատարածքների սահմանների նախագծումը, չպետք է փոփոխության ենթարկվեն ընտրությունից առաջ մեկ տարուց պակաս ժամկետում, կա՛մ նման փոփոխության հնարավորությունը պետք է նախատեսված լինի Սահմանադրության դրույթներում, կա՛մ էլ հասարակ օրենքից բարձր որևէ փաստաթղթում»:

11 Սահմանադրությամբ նախագահի ստորագրության համար նախատեսված 21-օրյա ժամկետի ավարտից հետո փոփոխությունները ստորագրվեցին ԱԺ նախագահի կողմից և օրինական ուժի մեջ մտան 2021թ. ապրիլի 27-ին:

12 ԿԸՀ-ն տեղեկացրեց ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իր կանոնակարգերը ժամանակին թարմացնելու համար իրենք այդ գործընթացն սկսել են օրենքի նախագծի հիման վրա՝ վստահ չլինելով, թե ի վերջո որ դրույթներն էին ընդունվելու: ԺՀՄԻԳ-ն ու Վենետիկի հանձնաժողովը նախկինում նշել էին, որ «սկզբունքորեն պետք է խուսափել ընտրությունների օրվան շատ մոտ կատարվող ցանկացած օրենսդրական փոփոխությունից, քանի որ այն հանգեցնում է անորոշության: Բացի դրանից, հանրությունն ու շահառուները պետք է նոր կանոնների հարմարվեն ավելի սեղմ ժամկետներում»:

անցկացումից բավականին շուտ՝ ներառական գործընթացի միջոցով: Օրենսդրական փոփոխությունների և դրանց կիրարկման միջև ընկած ժամկետները պետք է թույլ տան իրականացնել ընտրողների բավարար ուսուցում, իսկ ընտրական գործընթացի շահառուներին՝ կիրառելի կանոնակարգումներին ծանոթանալու հնարավորություն:

Այս արտահերթ խորհրդարանական ընտրություններում ընտրվել է առնվազն 101 պատգամավոր փակ համամասնական ընտրակարգով՝ մեկ համապետական ընտրատարածքում: Պատգամավորներն ընտրվում են հինգ տարի ժամկետով: Մանդատների բաշխմանը մասնակցության իրավունք ունենալու համար կուսակցությունները պետք է ստանան առնվազն հինգ տոկոս, իսկ երկու կամ ավելի կուսակցությունների դաշինքները՝ առնվազն յոթ տոկոս ձայներ:[13] Մայիսին ընդունվել է փոփոխություն, որով հինգ տոկոսի շեմը կրճատվում է, սակայն վերջինս այս ընտրությունների ժամանակ կիրառելի չէր: Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ եթե շեմը հաղթահարող կուսակցությունները / դաշինքները երեքից պակաս են, խորհրդարան են անցնում առավել մեծ թվով ձայներ հավաքած երեք կուսակցությունները/ դաշինքները: Համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից բացի, օրենքով սահմանվում է մինչև չորս խորհրդարանական մանդատ՝ չորս ամենամեծ ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրին մեկ մանդատ սկզբունքով (եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր):[14]

Սահմանադրությամբ խորհրդարանական ընտրությունների համար սահմանվում է համամասնական ընտրակարգ և բազմակուսակցական համակարգ: Սահմանադրությունը նաև ամրագրում է, որ Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է «կայուն խորհրդարանական մեծամասնություն» (որն, ըստ Ընտրական օրենսգրքի, սահմանվում է Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 54 տոկոս) կառավարություն ձևավորելու համար: Եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանում է առնվազն 50 + 1 տոկոս մանդատներ, բայց 54 տոկոսից պակաս, այդ կուսակցությանը կամ դաշինքին տրամադրվում են լրացուցիչ մանդատներ՝ պահանջվող կայուն մեծամասնությանը հասնելու համար:[15] Եթե ոչ մի կուսակցության կամ դաշինքի չի հաջողվում ստանալ 50 + 1 տոկոս ձայներ և ոչ մի կուսակցության կամ դաշինքի չի հաջողվում կազմել կոալիցիա ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո վեցօրյա ժամկետում, երկու ամենաշատ ձայներ հավաքած թեկնածուների ցուցակների միջև անցկացվում է երկրորդ փուլ առաջին ընտրությունների օրվանից 28 օր անց: Երկրորդ փուլում մրցակցող երկու կուսակցություններին կամ դաշինքներին

---

13 ԺՀՄԻԳ-ն ու Վենետիկի հանձնաժողովը նախկինում նշել են, որ «դաշինքները կարող են նպաստել առավել մեծ համագործակցությանը և առավել կայուն կառավարության ձևավորմանը: Ուստի դաշինքների համար շեմը կարող է լինել նույնը, ինչ որ կուսակցությունների համար»:

14 2011թ.-ին անցկացված ամենավերջին մարդահամարի տվյալներով՝ եզդիները կազմում են բնակչության 1.1 տոկոսը, ռուսները՝ 0.3 տոկոսը, իսկ ասորիներն ու քրդերը՝ յուրաքանչյուրը 0.1 տոկոսից պակաս: ԺՀՄԻԳ-ն ու Վենետիկի հանձնաժողովը նախկինում նշել էին, որ «ազգային փոքրամասնություններին լրացուցիչ մանդատների տրամադրումը կարող է փոխել քաղաքական հավասարակշռությունը կուսակցությունների միջև»: Արձակված խորհրդարանում Իմ Քայլը դաշինքին էին պատկանում փոքրամասնությունների բոլոր չորս մանդատները:

15 Ընտրական օրենսգիրքը նաև նախատեսում է, որ եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանում է ԱԺ-ի մանդատների ընդհանուր թվի երկու երրորդից ավելին, շեմը հաղթահարած ավելի փոքր կուսակցություններին ու դաշինքներին տրամադրվում են լրացուցիչ մանդատներ, որպեսզի ընդդիմադիր կուսակցությունները միասնաբար ստանան մանդատների ընդհանուր թվի մեկ երրորդը:

թույլատրվում է կազմել նոր քաղաքական դաշինքներ առաջին փուլին մասնակցած կուսակցությունների հետ:

V. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունների վարչարարությունն իրականացվում է եռաստիճան համակարգով, որը ներառում է ԿԸՀ-ն, 38 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ (ԸԸՀ) և 2,008 տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ): ԿԸՀ-ն մշտական հիմունքներով գործող մասնագիտական մարմին է՝ կազմված 7 անդամներից, որոնք ընտրվում են վեցամյա ժամկետով՝ առավելագույնը երկու հաջորդական ժամկետ վերընտրվելու իրավունքով: ԿԸՀ-ն իր ներկա կազմով ընտրվել է 2016թ. հոկտեմբերին:[16] ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներից շատերը վստահություն հայտնեցին ԿԸՀ-ի՝ իր մանդատը արհեստավարժ կերպով իրացնելու կարողության վերաբերյալ: Որոշ ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներ, սակայն, մտավախություններ հայտնեցին ընտրությունների վարչարարության մարմինների՝ իրենց անկախության պահպանման ունակության առումով:

ԿԸՀ-ն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ և արդյունավետ կերպով՝ պահպանելով բոլոր իրավական վերջաժամկետները՝ չնայած նախապատրաստական աշխատանքների համար ունեցած կարճ ժամանակին: ԿԸՀ նիստերը հեռարձակվել են առցանց, և դրանց մասնակցել են կուսակցությունների և դաշինքների վստահված անձինք, դիտորդներ, լրատվամիջոցներ:[17] Նիստերի օրակարգերը և ընդունված որոշումները սահմանված ժամկետներում հրապարակվել են ԿԸՀ կայում: ԿԸՀ-ն մշակել է ընտրությունների օրվա ընթացակարգեր և ուղեցույցներ ՏԸՀ անդամների, տեխնիկական սարքավորումների մասնագետների, ինչպես նաև դիտորդների, վստահված անձանց և ԶԼՄ ներկայացուցիչների համար:

Թեև ԿԸՀ-ն ունի նորմատիվ կանոնակարգեր ընդունելու իրավասություն, ընտրությունների օրվա ընթացակարգերի վերաբերյալ պարզաբանումների զգալի մասը չեն ընդունվել ԿԸՀ նիստերում և չեն հանդիսացել ֆորմալ ԿԸՀ որոշումների առարկա: Կարևոր է այն, որ քվեաթերթիկների վավերության որոշումը, քվեատուփերի կնքումը և շրջիկ արկղերին առնչվող ընթացակարգերը պատշաճ կերպով չեն կանոնակարգվել: Քովիդի հետ կապված ընթացակարգերը տեղամասերի գործառնությունների համար ընդունվել են , սակայն դրանք հաշվի չեն առել հնարավոր կուտակումները:

Ընտրական ընթացակարգերի վերաբերյալ բոլոր կանոններն ու պարզաբանումները, այդ թվում՝ քվեաթերթիկների վավերությունը, քվեատուփերի կնքումը և ձայների հաշվարկն ու աղյուսակավորումը՝ ներառյալ շրջիկ արկղով քվեարկվածները, պետք է լինեն համապարփակ, ընդունվեն ԿԸՀ ֆորմալ նիստերում և կիրարկվեն միատեսակ կերպով:

---

16 ԱԺ մշտական հանձնաժողովի հանձնարարականի հիման վրա ԿԸՀ անդամներն ընտրվում են խորհրդարանական քվեարկությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի ձայներով: Մինչև 2016թ. ԿԸՀ անդամները նշանակվում էին նախագահի կողմից: Հինգ անդամները՝ ներառյալ նախագահը, նախագահի տեղակալն ու քարտուղարը, առաջին անգամ նշանակվել են 2011թ.-ին: Անդամներից երկուսը նշանակվել են 2014 և 2015թթ.-ին:

17 ԿԸՀ-ն երկու փակ նիստ է անցկացրել հունիսի 11-ին և 12-ին՝ Գլխավոր դատախազության կողմից հարուցված քրեական վարույթներին առնչվող հարցերով:

ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները և շատ զրուցակիցներ նշեցին, որ ընտրությունների օրվանից 20 օր առաջ մեկնարկած ԿԸՀ ընտրողների ուսուցման արշավների տեսանելիությունը սահմանափակ է եղել ամբողջ երկրի տարածքում: Այն իրականացվել է պաստառների, գրքույկների, ինչպես նաև քվեարկության նոր ընթացակարգերի մասին հեռուստատեսային և ռադիոգովազդի միջոցով՝ ներառյալ չորս փոքրամասնությունների լեզուներով և տեսալսողական խնդիրներ ունեցող անձանց համար հասանելի ձևաչափով: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները նյութեր էին նախապատրաստել մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար: Թեև օրենքով թույլատրվում է աջակցված քվեարկություն, տեղամասային կենտրոնների հասանելիությունը մնում է հատկապես սահմանափակ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար (*տե՛ս՝ Ընտրությունների օր*), իսկ այլ պատշաճ քվեարկության ընթացակարգեր և միջոցներ, որ կերաշխավորեին հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար իրենց քաղաքական իրավունքների իրականացումը, առկա չեն:[18]

Պետք է դիտարկել լրացուցիչ միջոցների ներդրումը հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրական գործընթացին մասնակցությունը խթանելու համար:

ԸԸՀ-ները մշտական հիմունքներով գործող մասնագիտական մարմիններ են՝ կազմված յոթ անդամներից, որոնք նշանակվում են ԿԸՀ-ի կողմից վեցամյա ժամկետով: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդներն ԸԸՀ-ների աշխատանքը գնահատել են որպես արհեստավարժ և համագործակցային: ԸԸՀ նիստերը բաց էին և բնութագրվում էին կոնսենսուսային մոտեցմամբ: Չնայած օրենքի պահանջին՝ ԸԸՀ որոշումների հանրային ցուցադրումը հետևողական չէ, և ԸԸՀ որոշումները չեն հրապարակվում: Բացի այդ, օրենքը չի պահանջում ԸԸՀ արդյունքների արձանագրությունների հրապարակում, ինչը սահմանափակում է ընտրական վարչարարության աշխատանքի թափանցիկությունը և հաշվետվողականությունը ընտրական գործընթացի կառավարման տեսանկյունից:

ԿԸՀ-ն պետք է կանոնավոր կերպով և համապատասխան ժամկետների պահպանմամբ իր կայքում հրապարակի ԸԸՀ նիստերի օրացույցը, բոլոր ԸԸՀ որոշումները, և ԸԸՀ արդյունքների ստորագրված արձանագրությունները՝ ըստ առանձին տեղամասերի արդյունքների: Բացի այդ, հանրային հետաքրքրություն ներկայացնող ամբողջ տեղեկատվությունն ու բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ նախնական արդյունքների արձանագրությունները և նախնական ընտրացուցակները, պետք է մնան հասանելի առցանց:

ՏԸՀ-ները ժամանակավոր հիմունքներով գործող մարմիններ են, որոնք ձևավորվում են յուրաքանչյուր ընտրությունների ժամանակ՝ առնվազն յոթ անդամներով, որոնք առաջադրվում են խորհրդարանում ներկայացված խմբակցությունների և ԸԸՀ-ների

[18] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդվածը նախատեսում է հավասար մասնակցություն հանրային և քաղաքական կյանքում: 2020թ. իրականացված տեղամասային կենտրոնների հասանելիության գնահատման մեջ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության Ագաթ ՀԿ-ն և Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը (IFES) նշել էին, որ 1,987 գնահատված տեղամասերից (բոլոր 2,008 տեղամասերի 99 տոկոսը) որևէ մեկը չէր կարող բնորոշվել որպես լիովին հասանելի:

կողմից: Այս ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ՏԸՀ կազմված էր 7-8 անդամից, որոնցից երկուսը նշանակված էին համապատասխան ԸԸՀ-ի և ևս երկուսը՝ արձակված խորհրդարանում ներկայացված յուրաքանչյուր երեք խմբակցությունների կողմից: Թեև ՏԸՀ-ների մեծ մասը, ԿԸՀ ժամանակացույցին համապատասխան, կազմավորված էր հունիսի 2-ի դրությամբ, բազմաթիվ ԸԸՀ-ներից պահանջվեց լրացուցիչ անդամներ առաջադրել, քանի որ խորհրդարանական ուժերը, մասնավորապես Լուսավոր Հայաստանը, բավարար թվով թեկնածուներ չէր առաջադրել բոլոր ՏԸՀ-ներում:[19] Օրենքին համապատասխան՝ ՏԸՀ նախագահի և քարտուղարի պաշտոնները բաշխվել էին արձակված ԱԺ-ի խմբակցությունների միջև՝ իրենց ներկայացվածության համաչափ, որի արդյունքում ՏԸՀ ղեկավար պաշտոնների մեծ մասը բաժին էր ընկել իշխող կուսակցությանը: ԹԵև ՏԸՀ անդամ դառնալ ցանկացող յուրաքանչյուր ոք պետք է նախ սերտիֆիկացման դասընթաց անցնի և թեստ հանձնի, օրենքով ՏԸՀ անդամի նվազագույն կրթական որակավորման պահանջներ սահմանված չեն: Ե՛վ ԿԸՀ և՛ ԸԸՀ անդամները մտահոգություն հայտնեցին կուսակցությունների կողմից առաջադրված բազմաթիվ հանձնաժողովների անդամների կրթության և փորձի վերաբերյալ, հատկապես ՏԸՀ նախագահների և քարտուղարների վերաբերյալ:[20]

Ընտրական վարչարարության մարմինների և ընտրական գործառնությունների արհեստավարժությունն ու հուսալիությունը բարձրացնելու նպատակով ԿԸՀ-ն պետք է դիտարկի ՏԸՀ նախագահների և քարտուղարների նկատմամբ նվազագույն որոկավորման չափանիշների կիրառումը և ապահովի կուսակցությունների կողմից առաջադրված հանձնաժողովների բոլոր անդամների վերապատրաստումը: Խորհրդարանական խմբակցություններն ու կուսակցությունները պետք է դիտարկեն առավել որակավորված թեկնածուներին առաջնահերթության տրամադրումը:

ՏԸՀ անդամների վերապատրաստման դասընթացները դրական են գնահատվել ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդների կողմից:[21] Որոշ ԸԸՀ անդամներ այն կարծիքին էին, որ ՏԸՀ վերապատրաստման դասընթացները պետք է ավելի երկար տևեն և ավելի համապարփակ լինեն: Ըստ ԸԸՀ-երի՝ մասնակցությունը տատանվել է 75-ից 90 տոկոսի սահմաններում: ԿԸՀ-ն հաստատեց, որ վերապատրաստումներին չհաճախող հանձնաժողովի անդամների մեծ մասը կուսակցությունների կողմից առաջադրվածներն էին, այդ թվում նրանք, ովքեր պետք է զբաղեցնեին նախագահի և քարտուղարի պաշտոնները: Թեև առանց բավարար նախնական իրազեկման հրաժարական ներկայացրած ՏԸՀ անդամներն արագ փոխարինվեցին համապատասխան խորհրդարանական խմբակցությունների և ԸԸՀ-ների կողմից, փոխարինող հանձնաժողովի անդամների մի մասը չկարողացավ հաճախել վերապատրաստումներին:[22]

---

19 Ընտրությունների օրը ԿԸՀ-ի կողմից հրապարակված ՏԸՀ անդամների ցանկը չի պարունակում կուսակցական պատկանելիության մասին նշում:

20 ԿԸՀ-ն հաստատեց, որ ՏԸՀ կուսակցական անդամների զգալի մասը նախկին փորձառություն չուներ: ԸԸՀ նախագահներից մեկը գանգատվեց ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդներին, որ որոշ ՏԸՀ կուսակցական անդամներ, ներառյալ նախագահներ, լիարժեք գրագետ չէին:

21 ԿԸՀ վերապատրաստումները ՏԸՀ անդամների և տեխնիկական սարքավորման մասնագետների համար կազմակերպվել էին համապատասպանաբար Այ Էֆ Ի Էս-ի (IFES) և ՄԱԶԾ-ի (UNDP) կողմից:

22 Ըստ ԿԸՀ-ի՝ մոտ 16,000 ՏԸՀ անդամների մոտ յոթ տոկոսը հարկ եղավ փոխարինել հրաժարականների արդյունքում:

ԿԸՀ-ն և բոլոր ԸԸՀ-ները պահպանել են յուրաքանչյուր սեռից առնվազն երկու անդամ ներառելու օրենքի պահանջը: ԿԸՀ յոթ անդամներից երեքը կանայք են (42 տոկոս)՝ ներառյալ նախագահի տեղակալը: ԸԸՀ մակարդակում 266 անդամներից 94-ը կանայք էին (35 տոկոս), որոնցից մի քանիսն են զբաղեցնում որոշումներ կայացնող պաշտոններ, այդ թվում՝ երկու նախագահ (հինգ տոկոս) և վեց նախագահի տեղակալ (16 տոկոս): Սեռային բաշխվածության մասին տվյալները ԸԸՀ և ՏԸՀ մակարդակում ընդհանուր անդամների և ղեկավար պաշտոնների մասով պետք է առանձնացվեն, դրանք հասանելի չեն, ինչը հակասում է միջազգային չափորոշիչներին:[23]

Միջազգային չափանիշերին համապատասխան՝ պետական մարմինները, ինչպես օրինակ ԿԸՀ-ն և ԱՎՎ-ն, պետք է տրամադրեն ընտրական գործընթացներում սեռային բաշխվածության մասին տվյալներ՝ ներառյալ նախնական և վերջնական ընտրացուցակներում գրանցված ընտրողների, ստորին օղակի ընտրական հանձնաժողովների կազմի, ընտրացուցակներում ընդգրկված թեկնածուների քանակի և ընտրողների մասնակցության մասին:

VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Ընտրությունների օրվա դրությամբ բոլոր 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու իրավունք, բացառությամբ ծանր հանցագործության համար դատապարտվածների և մտավոր հաշմանդամության հիմքով դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչվածների: Մտավոր հաշմանդամության հիմքով ընտրական իրավունքից զրկելը հակասում է միջազգային չափանիշերին:[24]

Միջազգային չափանիշերին համահունչ ընտրական հավասար իրավունքի ապահովման համար մտավոր հաշմանդամության հիմքով ընտրելու իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:

Ընտրողների գրանցումը պասիվ գործընթաց է, որտեղ ընտրողների մասին տվյալները ինքնաշխատ կերպով տրամադրվում են Բնակչության պետական ռեգիստրից: Ընտրողների ռեգիստրը վարվում է ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության (ԱՎՎ) կողմից և ներառում է բոլոր ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներին, ովքեր պահպանել են ՀՀ-ում իրենց պաշտոնական մշտական բնակությունը: Հունիսի 20-ին գրանցված ընտրողների ընդհանուր թիվը 2,595,512 էր: Թեև արտերկրում գտնվող ընտրողները չունեն ընտրելու իրավունք, զգալի թվով արտերկրում բնակվող ընտրողներ մնում են ընտրացուցակներում, քանի որ պահպանում են ՀՀ-ում

[23] Համաձայն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի թիվ 23 Ընդհանուր Հանձնարարականի 48դ պարբերության՝ պետությունները պետք է տրամադրեն «վիճակագրական տվյալներ՝ բաշխված ըստ սեռի, ցույց տալով այդ իրավունքներից օգտվող կանանց հարաբերակցությունը տղամարդկանց նկատմամբ»:

[24] Ըստ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 12 և 29 հոդվածների՝ «Մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն իրավունակություն կյանքի բոլոր ոլորտներում» և ապահովում են «քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը:» Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածի թիվ 1 Ընդհանուր մեկնաբանության 48-րդ պարբերությունը նշում է, որ «անձի որոշում կայացնելու ունակությունը չի կարող հիմք հանդիսանալ հաշմանդամություն ունեցող անձանց ... ընտրելու և ընտրվելու իրավունքի որևէ բացառման համար»:

իրենց պաշտոնական բնակությունը:[25] ԺՀԻՄԳ ԸԴԱ զրուցակիցներից և ոչ մեկը ընտրողների ռեգիստրի ճշգրության վերաբերյալ մտահոգություն չի հայտնել:

Իրավական դաշտը բազմաթիվ միջոցներ է նախատեսում ընտրողների ցուցակների թափանցիկությունն ու հասանելիությունն ապահովելու համար՝ ընտրացուցակների հանրային ցուցադրումից մինչև առցանց հրապարակում՝ որոնման և ներբեռնման հնարավորությամբ: Նախնական ընտրացուցակները, որոնք հեռացվել էին ոստիկանության կայքից, վերջնական ցուցակների հրապարակման պահից, փակցված են եղել տեղամասերում հանրությանը իրազեկման համար մինչև մայիսի 31 վերջնաժամկետը: Ընտրողները հնարավորություն են ունեցել դիմել իրենց և այլ ընտրողների վերաբերյալ ցուցակներում ուղղումներ, ավելացումներ և հեռացումներ կատարելու համար մինչև հունիսի 10-ը:[26] Ըստ ԱՎՎ-ի՝ 16,563 ընտրողներ դիմել են ընտրությունների մասնակցության նպատակով գրանցման հասցեի ժամանակավոր փոփոխության համար, որից 8,207-ը՝ ՏԸՀ անդամներ: Փոփոխություններն ընդհանուր առմամբ կազմել են գրանցված ընտրողների 0.1-ից 0.5 տոկոսը՝ ըստ ԸԸՀ-ների (առավելագույնը 333 ավելացումներով և 345 հեռացումներով), բացառությամբ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 23 ԸԸՀ-ի, որտեղ այդպիսի փոփոխությունները կազմել են գրանցված ընտրողների 2 տոկոսը (1,978 անձ հանվել է ցուցակներից): ԱՎՎ ներկայացրած հաշվետվությունների հիման վրա՝ ընդհանուր թվով 1,067 ընտրող, որոնք չկային ընտրացուցակներում, ներառվել են ընտրությունների օրը կազմվող լրացուցիչ ցուցակներում, ամբողջ երկրի տարածքում գտնվող 278 տեղամասերում: Մասնավորապես՝ Վանաձոր քաղաքում նման ընտրողները կազմել են 54 տոկոս՝ լրացուցիչ ընտրացուցակներում ներառված 579 ընտրողներով:

ԱՎՎ կողմից հրապարակված տվյալները չէին պարունակում տեղեկություններ սեռային բաշխվածության մասին, սակայն ԺՀՄԻԳ ԸԴԱ խնդրանքով ԱՎՎ կողմից տրամադրված տեղեկատվության մեջ նշվում էր, որ կանայք ներկայացնում են գրանցված ընտրողների մոտ 53 տոկոսը: ԱՎՎ-ն նաև մանրամասներ չի հրապարակել ընտրողների ռեգիստրում և ընտրացուցակներում արված թարմացումների ընդհանուր թվի վերաբերյալ՝ ներառյալ նոր ընդգրկված և մահացած ընտրողների մասով՝ այդպիսով սահմանափակելով ընտրողների ռեգիստրի և ընտրացուցակների կառավարման ընդհանուր թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

ԱՎՎ-ն պետք է պարբերական և մանրամասն տեղեկություններ հրապարակի կատարված թարմացումների և ուղղումների տեսակի ու թվի վերաբերյալ՝ այդ թվում՝ նոր ներառված և մահացած ընտրողների մասին:

Ընտրությունների օրը ընտրողների նույնականացումն իրականացվել է անձը հաստատող փաստաթուղթը և մատնահետքը՝ տեխնիկական սարքավորման միջոցով սքանավորելու եղանակով, որոնց մեջ ներբեռնված է եղել համապատասխան

[25] Արտերկրում գտնվող միայն դիվանագետներն ու զինծառայողները և վերջիններիս ընտանիքի անդամները կարող են քվեարկել: Դիվանագիտական և զինվորական ընտրացուցակներում գրանցված 650 ընտրողներից 500-ը մասնակցել են էլեկտրոնային քվեարկությանը հունիսի 11-ից 13-ը:

[26] Այլ ընտրողի անունից ներկայացվող դիմումները պետք է լինեն նոտարական հաստատմամբ: Ընդհանուր թվով 2,415 ընտրողներ հեռացվել են ընտրացուցակներից: ԱՎՎ-ն հայտնաբերել է ընդհանուր թվով 2,287 չգրանցված մահերի դեպքեր արտերկրում՝ ընտանիքի անդամների կողմից ներկայացված մահվան վկայականների և ԱՎՎ կողմից իրականացված տնային այցերի հիման վրա:

տեղամասային կենտրոնի ընտրացուցակը: Օրենքի համաձայն՝ հունիսի 22-ին ԿԸՀ-ն հրապարակեց բոլոր տեղամասային կենտրոնների սքանավորված ստորագրված ընտրացուցակները՝ թույլ տալով հանրությանը ստուգումներ կատարել մինչև ընտրական վեճերի լուծման ժամկետի ավարտը:[27] Այս պահանջը հակասում է միջազգային չափանիշերին և լավագույն գործելակերպին, որոնք պահանջում են տվյալների պաշտպանություն և անհատ ընտրողների մասնակցության գաղտնիության պահպանում:[28] Այդուհանդերձ, այս ընտրությունների համատեքստում ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցները իրենց աջակցությունն են հայտնել այդ միջոցի կիրառմանը՝ որպես թափանցիկության ապահովման և ընտրակեղծիքների կանխարգելման գործիք:

Ընտրողների ցուցակներին պատշաճ մուտք ապահովելով հանդերձ՝ պետք է դիտարկել ընտրողների տվյալների պաշտպանության և մասնակցության գաղտնիության երաշխավորման հնարավորությունը, այդ թվում՝ գաղտնիության միջոցների կիրառմամբ:

VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցություններն ու դաշինքները կարող են ներկայացնել յուրաքանչյուրը մեկ փակ համապետական ցուցակ՝ կազմված 80-ից 300 թեկնածուներից: Կանայք և տղամարդիկ պետք է կազմեն թեկնածուների առնվազն 30 տոկոսը՝ ցուցակի յուրաքանչյուր հաջորդական եռյակում երկու սեռի ներկայացուցիչ ներառելու պահանջով:[29] Այս քվոտան բարձրացվել է 2018թ. ընտրությունների ժամանակ գործող 25 տոկոսից:

Թեկնածու առաջադրվելու համար պետք է լինել 25 տարին լրացած ընտրելու իրավունք ունեցող անձ, հանդիսանալ ՀՀ քաղաքացի և բնակիչ նախորդ չորս տարիների ընթացքում, ինչպես նաև տիրապետել հայերեն լեզվին: Այլ քաղաքացիություն ունեցող անձինք չեն կարող առաջադրվել: Թեև Հայաստանն ընդունում է երկքաղաքացիությունը, Քրեական օրենսգրքի վերջին փոփոխություններով քրեականացվել է երկքաղաքացիությունը թաքցնելը, այդ թվում՝ ընտրությունների ժամանակ առաջադրվելու նպատակով՝ դրա համար սահմանելով մինչև հինգ տարի ազատազրկում:[30]

---

27 2021թ. ապրիլի փոփոխությունները նշում են, որ ստորագրված ընտրացուցակները պետք է մնան հասանելի մինչև ԿԸՀ կողմից աղյուսակավորման գործընթացի ավարտը, կամ, եթե առկա են բողոքարկումներ, մինչև վերջիններիս լուծումը: Ստորագրված ընտրացուցակները ժամանակ առ ժամանակ անհասանելի են եղել ԿԸՀ կայքի տեխնիկական խնդիրների պատճառով:

28 Տե՛ս՝ Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի՝ ընտրություններին մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակման վերաբերյալ Մեկնաբանական հայտարարության IV.A պարբերությունը և ՔՔԻՄԴ 16-րդ Ընդհանուր մեկնաբանության 10-րդ պարբերությունը գաղտնիության իրավունքի մասին: Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի 4.c կետը ևս նշում է, որ «իրականում քվեարկած անձանց ցուցակները չպետք է հրապարակվեն»:

29 30 տոկոսի գենդերային քվոտան ընդունվել է 2016թ.-ին, բայց ուժի մեջ է մտել առաջին անգամ այս ընտրությունների ժամանակ՝ համաձայն Ընտրական օրենսգրքի անցումային դրույթների: Գենդերային պահանջը չի կիրառվում ցուցակի՝ ազգային փոքրամասնություններին նվիրված երկրորդ մասի նկատմամբ:

30 ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի Ընտրական օրենսգրքի և առնչվող օրենսդրության վերաբերյալ համատեղ հրատապ կարծիքի 109-րդ պարբերությունում նշվում է, որ երկքաղաքացիության ընդհանուր արգելքը խախտելու համար սահմանված քրեական պատիժը «պետք է դիտարկվի ՄԻԵԿ-ի Առաջին արձանագրության 3-րդ հոդվածի լույսի ներքո»: Ընտրվելու իրավունքի բլանկետային սահմանափակումը

Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց ընտրվելու իրավունքի սահմանափակումները պետք է վերանայվեն, և այդ առնչությամբ քրեականացումը պետք է վերացվի:

Դատավորները, դատախազները, զինվորականները, ոստիկանները, հանրային ծառայության այլ կատեգորիաներ և ընտրական հանձնաժողովների անդամները նույնպես չեն կարող առաջադրվել: Թեկնածուների ցուցակները պետք է ներառեն մինչև 30 տոկոս անկուսակցական թեկնածուների: Օրենքն ինքնաառաջադրվելու հնարավորություն չի տալիս, ինչը հակասում է 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.5 պարբերությանը:[31]

Ներառական գործընթացով ԿԸՀ-ն գրանցեց 22 կուսակցությունների և 4 դաշինքների ընտրացուցակները:[32] Մինչև հունիսի 10-ի վերջնաժամկետը մեկ կուսակցության բացարկից հետո[33] ընտրապայքարում մնաց 25 ուժ՝ ներառելով 2,498 թեկնածու, որոնցից 925-ը կանայք էին (37 տոկոս):[34] Բոլոր ցուցակները պահպանել են գենդերային պահանջը, այդ թվում՝ 39 թեկնածուի բացարկից ու գրանցման չեղարկումից հետո: 25 ցուցակից միայն երկուսն էին գլխավորում կանայք: Ընտրապայքարի մասնակիցների թվում էին արձակված ԱԺ-ում ներկայացված երեք մեծ կուսակցություն,[35] ինչպես նաև այն կուսակցությունները, որոնք փոխկապակցված էին 1991թ.-ից 2018թ. պաշտոնավարած բոլոր երեք նախագահների հետ:[36] Մեկ դաշինք և երեք կուսակցություն գրանցել էին ընդհանուր թվով 13 թեկնածու ազգային փոքրամասնությունների համար նախատեսված չորս տեղի համար:[37]

երկքաղաքացիության հիմքով կարող է դիտվել որպես անհամաչափ սահմանափակում: Քանի դեռ Հայաստանն ընդունում է երկքաղաքացիությունը, երկու քաղաքացիություն ունենալը չպետք է ԱԺ պատգամավոր ընտրվելու իրավունքից զրկվելու հիմք հանդիսանա և ուստի չպետք է քրեականացվի»: Տե՛ս՝ նաև ՄԻԵԴ, Տանասեն ընդդեմ Մոլդովայի (Tănase v. Moldova), 27 ապրիլ 2010թ., Հայց Հ. 7/08:

31 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.5 պարբերությամբ ԵԱՀԿ մասնակից պետությունները պարտավորվում են «հարգել քաղաքացիների՝ քաղաքական կամ հանրային պաշտոնների ձգտելու իրավունքը, լինի դա անհատական կարգով, թե քաղաքական կուսակցությունների կամ կազմակերպությունների կազմում՝ առանց խտրականության»:

32 12 տարբեր ցուցակներից 26 թեկնածուի գրանցումը մերժվեց անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության հիմքով (ա) վերջին 4 տարիների ընթացքում ՀՀ քաղաքացի հանդիսանալու և Հայաստանում բնակվելու մասին փաստաթուղթ (19 դեպք), (բ) հայերենին տիրապետելու մասին փաստաթուղթ (15 դեպք), (գ) թեկնածուի՝ ցուցակում ընդգրկվելու գրավոր համաձայնություն (8 դեպք), (դ) անձը հաստատող փաստաթղթի պատճենի բացակայություն (3 դեպք) և (ե) բնակության մասին տեղեկանքի կեղծ փաստաթղթի ներկայացում (2 դեպք):

33 Բացարկ հայտնեցին Հայոց արծիվներ, Միասնական Հայաստան կուսակցությունները:

34 Ընդհանուր թվով 35 թեկնածու հրաժարվեց իրենց թեկնածությունից, իսկ 4 թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչվեց կեղծ փաստաթղթեր ներկայացնելու հիմքով:

35 Քաղաքացիական պայմանագիր, Լուսավոր Հայաստան և Բարգավաճ Հայաստան:

36 Լևոն Տեր-Պետրոսյան (Հայ Ազգային Կոնգրես), Ռոբերտ Քոչարյան (Հայաստան դաշինք) և Սերժ Սարգսյան (Պատիվ ունեմ դաշինք): Թեև Ս. Սարգսյանը թեկնածու չէր այս ընտրություններում, նա ակտիվորեն մասնակցել է դաշինքի քարոզարշավին:

37 Յուրաքանչյուր կուսակցություն և դաշինք կարող է առաջադրել մինչև 4 թեկնածու՝ չորս ազգային փոքրամասնությունների համար նախատեսված մանդատներից յուրաքանչյուրի համար (յուրաքանչյուր ցուցակում փոքրամասնությունների առավելագույնը 16 թեկնածուով):

Բոլոր գրանցված կուսակցություններն ու դաշինքները կատարել են պահանջվող 10 մլն. ՀՀ դրամի ֆինանսական ավանդի մուծումը:[38] Ավանդը վերադարձվում է, եթե տվյալ ուժն անցնում է խորհրդարան կամ եթե ստանում է վավեր քվեների չորս տոկոսից ավելին:

VIII. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՄԻՋԱՎԱՅՐ

Այս արտահերթ ընտրությունների ժամանակ, օրենքի համաձայն, քարոզարշավի պաշտոնական ժամկետը 12 օր էր՝ ի տարբերություն հերթական ընտրությունների համար սահմանվող 35-ից 40 օրվան:[39] Պաշտոնական քարոզարշավն սկսվեց հունիսի 7-ին և ավարտվեց հունիսի 18-ին՝ քարոզչությունն արգելված լինելով ընտրությունների նախորդ օրը և ընտրությունների օրը:[40] Լռության օրն, ընդհանուր առմամբ, պահպանվել է, սակայն Պատիվ ունեմ դաշինքի բողոքի հիման վրա ԿԸՀ-ն նախազգուշացում հրապարակեց Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանին՝ ընտրություններին նախորդող օրը քարոզչություն իրականացնելու համար: ԿԸՀ որոշումն ընտրությունների օրվանից հետո անվավեր ճանաչվեց Վարչական դատարանի կողմից:[41]

Ինչպես նախաքարոզարշավային շրջանում, քարոզչության ժամանակահատվածում ևս ազգային անվտանգության հետ կապված իրադրությունը գերիշխում էր քաղաքական դիսկուրսում: Տնտեսական իրավիճակը՝ առավել սրված Քովիդ-19 համավարակի և պատերազմի պատճառով, քարոզչության հաջորդ ամենակարևոր թեման էր: Բևեռացումն առավել սրվեց քարոզարշավի ընթացքում, երբ որոշ մրցակիցների կողմից միմյանց հասցեին հնչեցին վարկաբեկիչ և սադրիչ մեղադրանքներ՝ խնդիրների բովանդակային քննարկման փոխարեն:[42] ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդների կողմից եղան գնալով ավելի ու ավելի աճող անհանդուրժող, սադրիչ և խտրական հռետորաբանության մասին հաղորդումներ՝ ընդհուպ մինչև ընտրությունների օրն ընկած ժամանակահատվածում: Մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ այդ հռետորաբանության քննադատությամբ և կոչ արեց բոլոր մրցակից ուժերին, մասնավորապես ներկա առաջնորդներին (կամ պաշտոնատար անձանց), ինչպես

---

38 Ընտրական օրենսգրքի 2021թ. մայիսի փոփոխություններով ընտրական ավանդի գումարը նվազեցվում է 7.5 մլն դրամի՝ կուսակցությունների համար և բարձրացնում է 15 մլն. դրամի՝ դաշինքների համար, ինչը ուժի մեջ է մտնելու 2022թ.-ից: 1 եվրոն հավասար է մոտ 635 ՀՀ դրամի:

39 Մրցակիցներից մի քանիսը մտահոգություն հայտնեցին քարոզարշավի կարճ տևողության պահով՝ նշելով, որ Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխություններն էլ գումարած, իրենց չափազանց քիչ ժամանակ էր մնացել ընտրողներին իրենց ծրագրերի մասին իրազեկելու համար: Մրցապայքարի 25 մասնակիցների մեծ մասը ակտիվ քարոզչություն չի իրականացրել մարզերի մեծ մասում:

40 Մինչև լռության օրը տեղադրված քարոզչական նյութերը կարող են մնալ առցանց նաև լռության ժամանակահատվածում (Ընտրական օրենսգիրք, հոդված 19):

41 Ն. Փաշինյանն իր Դիմատետրի էջում տեսանյութ էր տեղադրել լռության օրը՝ քաղաքացիներին հորդորելով գնալ քվեարկության:

42 Վարչապետ Փաշինյանը նախկին նախագահ Քոչարյանին մեղադրեց «քրեական բանդայի» մաս լինելու մեջ և սպառնաց «ոհմակի ատամները ջարդել»: Ն. Փաշինյանը նաև հայտարարեց պետական ծառայողների զտումներ իրականացնելու իր մտադրության մասին՝ դուրս մղելով ընդդիմության ներկայացուցիչներին, խոսեց «կադրային ջարդի» մասին և նշեց, որ «վենդետա» է անելու բոլոր նրանց հետ, ում մեղադրում է վարչակարգում կամ որպես մասնավոր բիզնեսմեններ իր դեմ աշխատելու մեջ (Քաղաքացիական պայմանգրի Թալինում կայացած հավաքի ժամանակ, հունիսի 8-ին): ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդների կողմից դիտարկված հավաքների ընթացքում (Աշտարակում՝ հունիսի 8-ին, Երևանում՝ հունիսի 11-ին, Տաշիրում ու Վանաձորում՝ հունիսի 12-ին), նախկին նախագահ Քոչարյանը գործող վարչապետին մեղադրեց «դավաճան» և «խելագար» լինելու մեջ՝ նշելով, որ նա պետք է հեռանա երկրից:

օրինակ վարչապետին, ձեռնպահ մնալ նման բառամթերքի օգտագործումից:[43] ԿԸՀ-ն նույնպես կոչ արեց մրցակիցներին ձեռնպահ մնալ այդպիսի հռետորաբանությունից:[44]

Հանրային պաշտոնատար անձինք, քաղաքական կուսակցությունները, նրանց թեկնածուներն ու աջակիցները պետք է ձեռնպահ մնան սադրիչ հռետորաբանություն օգտագործելուց: Պետք է ստեղծվեն հստակ սահմանված ապաքրեական զսպող միջոցներ՝ միաժամանակ հարգելով խոսքի ազատությունը:

Հիմնարար իրավունքները, ինչպես օրինակ՝ հավաքների ազատությունը, հիմնականում հարգվել են ամբողջ քարոզարշավի ընթացքում, և մրցակիցները հնարավորություն են ունեցել ազատ քարոզչություն իրականացնել ամբողջ երկրի տարածքում: Թեև ընտրողները լայն ընտրություն են ունեցել կուսակցությունների ու դաշինքների միջև, քարոզարշավի ընթացքում ամենամեծ տեսանելիությունն ունեին վարչապետ Փաշինյանի գլխավորած Քաղաքացիական պայմանագիրը և նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած Հայաստան դաշինքը: Քարոզչական ուղերձները ագրեսիվ էին՝ մի կողմից նախկին նախագահներ Քոչարյանի և Սարգսյանի հասցեին կոռուպցիոն մեղադրանքներով և մյուս կողմից ներկա վարչակարգի առերևույթ ձախողումների քննադատությամբ՝ մասնավորապես կապված պատերազմի վարման հետ: Նկատվել էին նաև Ռ. Քոչարյանին թիրախավորող բացասական քարոզչական նյութեր որոշ տեղամասային կենտրոններում ընտրությունների օրը և դրանից առաջ, իսկ Ն. Փաշինյանի դեմ մի քանի տիպի սև քարոզչություն պարունակող տեսահոլովակներ էին շրջանառվել սոցիալական ցանցերում, ինչպես նաև հեռուստատեսությամբ՝ ներառյալ հանրային հեռուստաընկերության եթերում:[45]

ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները նկատեցին, որ դեմ առ դեմ քարոզչական միջոցառումներն անցել են խաղաղ ամբողջ երկրի տարածքում:[46] Դիտարկված բազմաթիվ միջոցառումների ժամանակ չեն պահպանվել կառավարության կողմից պարտադրված հակահամաճարակային միջոցառումները: Երթերը, ավտոերթերը, դոնեդուռ քարոզչությունը, հանրային հանդիպումներն ու հատուկ խմբերի հետ հանդիպումները, ինչպես նաև սոցիալական ցանցերի և հեռուստագովազդի լայն օգտագործումն այս քարոզարշավի բնորոշ բաղադրիչներից էին: Մրցակիցները նաև լայնորեն օգտվել են մեծ գովազդային վահանակներից ու պաստառներից, այդ թվում՝ ԿԸՀ կողմից վճարովի գովազդի համար հավասար հիմունքներով մրցակիցներին տրամադրված վայրերում: Կուսակցություններն ու դաշինքները մտահոգություններ էին հնչեցրել քարոզարշավի ընթացքում պաստառների և գովազդային վահանակների

43 Տե՛ս՝ Մարդու իրավունքների պաշտպանի 2021թ. մայիսի 31-ի հայտարարությունը:

44 Հունիսի 7-ին ԿԸՀ-ն կոչ հրապարակեց ուղղված քաղաքական կուսակցություններին՝ մնալու Ընտրական օրենսգրքի սահմաններում և բացառելու փոխադարձ վիրավորանքները, ատելության խոսքը և բռնության կոչերը քարոզչության ընթացքում:

45 Օրինակ՝ վարչապետ Փաշինյանը պատկերվում էր որպես Ադրբեջանի նախագահի դաշնակից, և նրա կուսակցության ձևափոխված լոգոյի վրա պատկերված էր այդ երկրի դրոշը:

46 Սակայն հունիսի 16-ին Քաղաքացիական պայմանագրի Եղեգնաձորի հավաքի ընթացքում ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները ականատես եղան Հայաստան դաշինքի հինգ աջակիցների բռնի ձերբակալությանը ոստիկանության կողմից: Հինգն էլ ավելի ուշ բաց թողնվեցին, սակայն մեկի վրա նկատելի էին ակնառու ֆիզիկական վնասվածքների հետքեր: Այդ անձնավորությունը դիմեց դատարան իր նկատմամբ բռնության գործադրման փաստով: Նույն անձն իր մեքենան գտավ հրդեհված հուլիսի 11-ին:

վնասման ու ոչնչացման հետ կապված, սակայն գրանցվել էին ընդամենը մի քանի պաշտոնական բողոք:[47]

Չնայած 30 տոկոս գենդերային քվոտային՝ կանայք հիմնականում քարոզարշավային միջոցառումներից դուրս էին թողնված և հազվադեպ էին հանդես գալիս որպես խոսնակ:[48] Բացի այդ, քարոզչության ընթացքում նկատելիորեն բացակայում էին կանանց և ազգային փոքրամասնություններին վերաբերող ուղերձները:

Վարչապետ Փաշինյանը նախաքարոզչական շրջանում մարզեր կատարած իր աշխատանքային այցերն օգտագործեց տեղական ինքնակառավարման մարմինների հետ հանդիպումներում իր նախընտրական ուղերձներն առաջ մղելու, ինչպես նաև տեղերում իր կուսակցության նախընտրական շտաբեր այցելելու համար: Թեև դրանք չէին որակվում որպես քարոզչական միջոցառումներ, հանդիպումների ընթացքում հնչում էին նախընտրական ուղերձներ և ցուցադրվում էին քարոզչական նյութեր, ինչպես օրինակ՝ Քաղաքացիական պայմանագրի լոգոյով պաստառներ:[49] Ընտրական օրենսգիրքը թույլատրում է պետական պաշտոնյաներին և հանրային ծառայողներին քարոզչություն իրականացնել միայն ոչ աշխատանքային ժամերին, սակայն հստակ չի սահմանում աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերը:[50] Քարոզչության շրջանում պետական պաշտոնատար անձի կողմից աշխատանքային այցի ընթացքում կուսակցության շտաբ կամ պետական գրասենյակ այցելելը խախտում է իշխող կուսակցության և պետության միջև սահմանագծերը, ինչը հակասում է ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններին:[51] Ամբողջ քարոզարշավի ընթացքում պարբերաբար հնչել են նաև վարչական ռեսուրսի չարաշահման մասին պնդումներ, սակայն դրանք բավարար ու միատեսակ կերպով չեն քննվել:[52]

---

47 Եղել են քարոզչական նյութերի վանդալիզմի դեպքեր, այդ թվում՝ Երևանում և Արագածոտնի մարզում երկու դեպքի մասին հաղորդում է ներկայացվել Պատիվ ունեմ դաշինքի կողմից, սակայն մրցակիցներից շատերը պաշտոնական բողոքներ չեն ներկայացրել ոստիկանություն կամ ԿԸՀ՝ վկայակոչելով արդյունավետ միջոցի հարցում իրենց անվստահությունն ու ժամանակի սղությունը: Այդուհանդերձ, մինչև հունիսի 19-ը Գլխավոր դատախազությունը ստացել է 42 հաղորդում քարոզչական նյութերի հետ կապված գույքային վնասի առնչությամբ, սակայն քրեական գործ է հարուցել միայն 8 դեպքով: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները հաղորդել են Լոռի, Տավուշ և Վայոց Ձորի մարզերում Ռոբերտ Քոչարյանի գիրքը գովազդող վահանակների վանդալիզմի դեպքերի մասին, թեև դրանք չէին հանդիսանում քարոզչական նյութ: Դեմոկրատական կուսակցության առաջնորդի՝ Տիգրան Արզաքանցյան հիմնադրամի բարեգործական գործունեությունը գովազդող վահանակներին արտաքին վնասներ են հասցվել Լոռու մարզում:

48 153 դիտարկված հավաքներից միայն 24-ի դեպքում էին կանայք հանդես եկել որպես խոսնակ (16 տոկոս), իսկ դիտարկված քարոզարշավային 73 միջոցառումներից 51-ի (70 տոկոս) դեպքում որևէ կին խոսնակ առկա չէր:

49 Օրինակ՝ կուսակցության պաստառները, որ դիտարկվել էին Վանաձորում (Լոռու մարզ) ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների կողմից մայիսի 30-ին, ինչպես նաև 20 այլ միջոցառումներ, որոնք լուսաբանվել էին թեկնածուի Դիմատետրի էջում:

50 Գործող վարչապետ Փաշինյանը պաշտոնական արձակուրդ վերցրեց հունիսի 7-ից 18-ը, ինչպես և կառավարության մյուս անդամները, մարզպետները և քարոզարշավում ներգրավված այլ պետական պաշտոնատար անձինք:

51 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերությունը նշում է, որ պետք է լինի «հստակ սահմանազատում պետության և քաղաքական կուսակցությունների միջև. մասնավորապես, քաղաքական կուսակցությունները չպետք է միաձուլվեն պետության հետ»:

52 Տե՛ս՝ ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսի չարաշահումը կանխելու եւ դրան արձագանքելու» համատեղ ուղեցույցներ: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները ստացել են քարոզչության նպատակով աշխատավարձերի բարձրացման, պետական փոխադրամիջոցների կամ շինությունների օգտագործման մասին հաղորդումներ 10 մարզերից 4-ում և Երևանում:

Վարչական ռեսուրսի չարաշահման մասին օրենքներն ու կանոնակարգերը պետք է առավել մանրամասն մշակվեն, արժանահավատ հաղորդումները պետք է պատշաճ կերպով հետաքննվեն, և պետք է ներմուծվեն պատշաճ, համարժեք և զսպող պատժամիջոցներ:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է հիմնական մրցակիցների հետ փոխկապակցված գործատուների կողմից մասնավոր և պետական սեկտորի աշխատողների նկատմամբ գործադրվող ճնշումների դեպքեր՝ քարոզարշավային միջոցառումներին հաճախելու նպատակով:[53] ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները նկատել են որոշ խնդիրների մասին բարձրաձայնելու համատարած դժկամություն վատթարացած տնտեսական իրավիճակի և ճնշումների ու աշխատանքից ազատումների նախկին փորձի ֆոնին:[54] ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ներկայացվել են նաև ընտրակաշառքի մասին մի շարք հաղորդումներ, մասնավորապես մեծ կուսակցությունների կողմից, և իշխանությունների կողմից ընտրակաշառքի մեղադրանքով հետաքննություն է սկսվել վեց ընդդիմադիր գործիչների նկատմամբ, որից հինգը՝ քարոզարշավի ընթացքում և ընդհուպ մինչև ընտրությունների օրը տեղի ունեցած դեպքերի առնչությամբ:[55]

Ընտրական գործընթացի նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով մեծ ջանքեր են անհրաժեշտ ընտրակաշառքի կիրառման ու ընտրողների վրա ճնշումների դեպքերին արձագանքելու համար՝ ինչպես քաղաքացիական իրազեկման արշավների, այնպես էլ հետաքննությունների ու քրեական հետապնդումների միջոցով: Ճնշումների և ընտրակաշառքի դեպքերի մասին հաղորդումը ապահովելու համար, արդեն իսկ առկա անանուն ահազանգերի տարբերակները պետք է միավորվեն և իրագործվեն որպես առանձին մեխանիզմ՝ վստահելի կազմակերպության կողմից:

IX. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Քարոզարշավի ֆինանսավորումը հիմնականում կարգավորվում է Ընտրական օրենսգրքով և Կուսակցությունների մասին օրենքով:[56] Նախորդ ընտրությունների

---

53 Հայաստան դաշինքի թեկնածուներից մեկը ձերբակալվեց իր ստորադասների նկատմամբ ճնշումներ գործադրելու մեղադրանքով: Ավելի ուշ նա ազատ արձակվեց, քանի որ ձերբակալությունն անօրինական էր ճանաչվել: Նա այնուհետև լքեց երկիրը և հետախուզվում է նույն մեղադրանքով:

54 ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդների հաղորդումները 10 մարզից 8-ում և Երևանում ցույց են տալիս, որ առկա է աշխատակազմի նկատմամբ ճնշումների կիրառման գործելակերպ՝ այս կամ այն կուսակցության կամ դաշինքի օգտին:

55 Հունիսի 8-ին, Բարգավաճ Հայաստանի թեկնածուներից մեկը ձերբակալվեց Գեղարքունիքի մարզում ընտրակաշառք տալու մեղադրանքով: Հունիսի 11-ին Արմավիրի նախկին քաղաքապետը, որը հանդես էր գալիս Պատիվ ունեմ դաշինքի ցուցակում, նույնպես ձերբակալվեց Արմավիրի մարզում: Հունիսի 18-ին Պատիվ ունեմ դաշինքի մեկ այլ թեկնածու ձերբակալվեց ընտրակաշառքի մեղադրանքով Երևանի Զեյթուն վարչական շրջանում: Երեք ձերբակալված թեկնածուներից բացի, 14 քրեական գործ էր հարուցվել նախքան ընտրությունների օրը ընտրակաշառք տալու կասկածով, որի արդյունքում Պատիվ ունեմ դաշինքի ևս երկու թեկնածու ձերբակալվել էր նույն մեղադրանքով: Հուլիսի 12-ին, Մարդու իրավունքների պաշտպանը զեկուցեց, որ իր գրասենյակը բողոքներ էր ստացել այն մասին, որ իրավապահ մարմինները քաղաքացիների նկատմամբ ճնշումներ են գործադրում Հայաստան դաշինքի թեկնածուներից մեկի և Սյունիքի մարզի մի քանի համայնքապետերի դեմ ցուցմունք տալու նպատակով առերևույթ ընտրակաշառքի դեպքի շրջանակներում:

56 Կուսակցությունների մասին օրենքը փոփոխվել է 2020թ. դեկտեմբերին, *այդ թվում՝* կուսակցությունների և քարոզարշավի ֆինանսավորման մասով: Ընտրական օրենսգրքի 2021թ. մայիսի փոփոխությունների հետ միասին՝ փոփոխված դրույթներով փարատվում են նախապես հնչած մի շարք մտահոգություններ, քանի որ ընդլայնվում է քարոզչական ծախսի սահմանումը և ֆինանսական վերահսկողության գործառույթը ԿԸՀ-ից

ժամանակ առնվազն երեք տոկոս ստացած կուսակցություններն ու դաշինքներն օգտվում են տարեկան պետական ֆինանսավորումից. նախընտրական քարոզչության ուղղակի ֆինանսավորում չի կատարվում:[57] Ընտրություններին մասնակցող կուսակցություններից ու դաշինքներից պահանջվում է բացել հատուկ բանկային հաշիվ քարոզչության համար նախատեսված գործարքների համար:[58] Քարոզարշավը կարող է ֆինանսավորվել ընտրողների կողմից կատարվող նվիրատվություններից, ինչպես նաև թեկնածուների սեփական միջոցներից և կուսակցությունների կողմից փոխանցված միջոցներից:[59] Քարոզարշավի ֆինանսավորումը առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից, ինչպես նաև արտերկրյա և անանուն աղբյուրներից, արգելվում է: Արգելված աղբյուրներից ցանկացած ֆինանսավորում, ինչպես նաև սահմանված առավելագույն չափը գերազանցող մուտքերը փոխանցվում են պետական բյուջե: Օրենքը քարոզարշավի ծախսերը սահմանափակում է 500 մլն. ՀՀ դրամի յուրաքանչյուր կուսակցության կամ դաշինքի համար:

Թեև քարոզարշավի ֆինանսավորման կանոնակարգումները մանրամասն են, մի շարք թերություններ թույլ են տալիս շրջանցել իրավական կարգավորումները: Մասնավորապես, չնայած վաղուց արված ԺՀՄԻԳ հանձնարարականի՝ քարոզարշավային ծախսի իրավական սահմանումը չի ներառում կազմակերպչական ծախսերը, ինչպես օրինակ՝ տարածքների վարձակալության, փոխադրամիջոցների, հաղորդակցության, և քարոզչության մեջ ներգրավված աշխատակիցների վարձատրության ծախսերը՝ մրցակիցներին հնարավորություն տալով այս ծախսերն օգտագործել որպես սահմանաչափերը շրջանցելու պատճառ: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է, որ որոշ կուսակցություններ օգտագործում են բարեգործական կազմակերպություններ և անձնական համբավը քարոզչական ծախսերի սահմանաչափերը շրջանցելու համար:[60] Թեև Կուսակցությունների մասին փոփոխված օրենքն արգելել է առևտրային կազմակերպություններից կուսակցության ֆոնդեր կատարվող նվիրատվությունները և սահմանել է համապատասխան պատժամիջոցներ, որոշ ԺՀՄԻԳ զրուցակիցներ նշեցին, որ այդ արգելքը կարող է շրջանցվել՝ մեծ կորպորատիվ նվիրատվությունները մասերի բաժանելով և անհատ քաղաքացիների մանր նվիրատվությունների տեսքով ներդնել քարոզարշավի համար նախատեսված կուսակցությունների ֆոնդեր : Մինչ իրավական դաշտի վերջին փոփոխություններով սահմանվել են պատժամիջոցներ, քարոզարշավի ֆինանսավորման կանոնների

փոխանցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Այդ փոփոխությունների մեծ մասն ուժի մեջ է մտնելու 2022թ.-ից:

57 2018թ. խորհրդարանական ընտրությունների հիման վրա՝ հետևյալ կուսակցություններն ու դաշինքները ֆինասավորում են ստանում պետական բյուջեից. Իմ Քայլը, Բարգավաճ Հայաստան, Լուսավոր Հայաստան, Հայաստանի Հանրապետական Կուսակցություն և Հայ Հեղափոխական դաշնակցություն:

58 Քարոզարշավի հիմնադրամ չբացելը ԿԸՀ-ի համար հիմք է դիմելու վարչական դատարան տվյալ քաղաքական միավորի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով:

59 Ըստ օրենքի՝ մուտքերը սահմանափակվում են մինչև 500,000 ՀՀ դրամի ընտրողների համար, 5 միլիոնի՝ թեկնածուների համար, և 100 միլիոնի՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների համար:

60 Տիգրան Արզաքանցյան հիմնադրամն ընկալվում էր որպես Դեմոկրատական կուսակցության տեսանելիությունը բարձրացնող միջոց, մասնավորապես Երևանում և Տավուշի մարզում: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները նաև հաղորդել են Արագածոտնի մարզում Դեմոկրատական կուսակցության կողմից հիմնադրամի տարածքի օգտագործման դեպքի մասին: Նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի գիրքը գովազդող վահանակներ էին դիտարկվել ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից բոլոր մարզերում: Այս լայնատարած գովազդը բարձրացրել էր պրն. Քոչարյանի տեսանելիությունը, սակայն չէր խանգարել այլ թեկնածուներին տեղադրել իրենց գովազդը ԿԸՀ-ի կողմից հատկացված վահանակների վրա:

խախտումների համար սահմանված քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող ամենակարևոր փոփոխություններից մի քանիսը ուժի մեջ են մտնելու միայն 2022թ.-ից:

Այս ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը պատասխանատու էր մասնակից կուսակցությունների և դաշինքների կողմից քարոզարշավի ֆինանսավորման օրենսդրության պահպանումը վերահսկելու համար: ՎՎԾ-ն պատասխանատու էր մուտքերի և ծախսերի՝ իրավական սահմանաչափերին համապատասխանությունը ստուգելու համար: ՎՎԾ-ն տեղեկացրեց ԺՀԻՄԳ ԸԴԱ-ին, որ թեկնածուների սահմանաչափերը գերազանցող մուտքերը փոխանցվել էին պետական բյուջե, ինչպես պահանջվում է օրենքով: ՎՎԾ-ն նաև տեղեկացրեց ԺՀԻՄԳ ԸԴԱ-ին, որ իրենք ստուգել էին մրցակից կուսակցությունների և դաշինքների կողմից ներկայացված տեղեկությունները Կենտրոնական Բանկի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ներկայացրած տվյալների հետ համադրությամբ:[61] Այնուհանդերձ, այլ նշանակալի ծախսեր, ինչպիսիք են գովազդային վահանակների և տպագիր նյութերի վրա կատարվող ծախսերը, մանրակրկիտ ստուգման չեն ենթարկվում: ՎՎԾ-ն տեղեկացրեց ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ այդպիսի դեպքերում վերստուգումն իրականացվում է բողոքների հիման վրա, սակայն այս ընտրութունների ընթացքում այդ կապակցությամբ բողոքներ չէին ստացվել:

Ինչպես նախկինում նշվել է ԺՀՄԻԳ հանձնարարականներում, իրավական դաշտը պետք է փոփոխվի՝ սահմանելով բոլոր քարոզարշավային ծախսերի և մուտքերի հայտարարագրում և հաշվառում՝ ներառյալ կազմակերպչական և նախքան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը կատարված ծախսերը, իսկ քարոզարշավի ֆինանսավորման վերստուգիչ լիազորություն ունեցող կազմակերպությունները պետք է օժտվեն իրենց պարտականությունները կատարելու համար բավարար ռեսուրսներով:

ՎՎԾ-ն հրապարակել է յուրաքանչյուր մրցակից կուսակցության և դաշինքի մուտքերի և ծախսերի մասին ամփոփ տեղեկություններ և վերջիններիս նախընտրական և հետընտրական ֆիանսական հաշվետվությունները տեղադրել է առցանց՝ նպաստելով ֆինանսական թափանցիկությանը: Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններն ու դաշինքները պահպանել են ֆինանսական հաշվետվությունների ներկայացման սահմանված վերջնաժամկետները: Ծախսերի մեծ մասն կատարվել է քարոզչական գովազդի և տպագիր նյութերի վրա: Մրցակիցներից ոչ մեկը չի հայտարարագրել սահմանաչափերը գերազանցող ծախսեր: Որոշ կուսակցություններ մարզերում իրենց շտաբերի տարածքների վարձակալությունը ներառել էին քարոզչական ծախսերում:[62] Հաշվի առնելով քարոզարշավի կարճ տևողությունը և հաշվետվությունների ներկայացման սեղմ ժամկետները, ֆինանսական հոսքերի տարբերությունը մեծ չէր միջանկյալ և վերջնական հաշվետվությունների միջև:[63]

---

61 Մրցակիցները չեն հայտարարագրել սոց. ցանցերում գովազդի վրա արված ծախսեր, իսկ ՎՎԾ-ն ընդունեց, որ իրենք նման ծախսերի վերահսկման միջոցներ չունեն:

62 Թեև այդպիսի ծախսերը չեն մտնում հաշվետվությունների պահանջների մեջ, ՎՎԾ-ն բացատրեց, որ մրցակիցները դրանք ներկայացնում են որպես քարոզչական ծախսեր, երբ ծախսերի ընդհանուր գումարը չի գերազանցում օրենքով նախատեսված սահմանաչափը:

63 Միջանկյալ հաշվետվությունները ներկայացվել են հունիսի 16-ին՝ քարոզարշավի մեկնարկից 10 օր անց, ինչն այս ընտրությունների դեպքում ստացվում էր ընտրություններից չորս օր առաջ: Ուստի վերջնական հաշվետվությունները ներառում էին միայն մի քանի օրվա քարոզչական ծախսեր:

X. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

A. ԶԼՄ ՄԻՋԱՎԱՅՐ

ԶԼՄ դաշտը բազմազան է և ներառում է 50 հեռարձակող, այդ թվում՝ համապետական սփռում ունեցող 6 հեռուսատաալիք և 4 ռադիոկայան, ավելի քան 35 պարբերական տպագիր լրատվամիջոց և ավելի քան 200 առցանց լրատվական կայք:[64] Առցանց աղբյուրների և սոցիալական ցանցերի դերը, մասնավորապես Դիմատետրինը, արագ աճում է, և վերջիններս դարձել են ընտրությունների մասին տեղեկատվության փոխանակման նշանակալի հարթակներ: Այդուհանդերձ, հեռուստատեսությունը մնում է քաղաքական լրատվության ամենակարևոր աղբյուրը, հատկապես մայրաքաղաքից դուրս: Հանրային հեռուսատաընկերությունը, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից և գովազդներից, շարունակում է ընկալվել որպես իշխանամետ խմբագրական քաղաքականություն ունեցող լրատվամիջոց: Միևնույն ժամանակ ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցները նշեցին, որ տարբեր մասնավոր հեռարձակողներ ևս ունեն բավական վաղեմի փոխկապակցվածություն քաղաքական այս կամ այն ուժի հետ: Թեև օրենքով արգելվում է քաղաքական ուժի կողմից սեփականատիրությունը, առկա գործելակերպը, համաձայն որի քաղաքական կուսակցությունների կամ քաղաքական գործիչների ֆինանսական միջոցները ուղղվում են տարբեր խողովակներով, ընկալվում է որպես հեռուստատեսային միջավայրում քաղաքական բազմազանություն ապահովման փաստացի ընդունված իրավիճակ:[65]

ԶԼՄ սեփականության լիարժեք թափանցիկությունն ապահովելու համար պետք է ձեռնարկվեն օրենսդրական միջոցներ՝ սահմանելու, որ լրատվամիջոցների սեփականատերերի մասին ամբողջ տեղեկատվությունը բացահայտվի հանրության համար, իսկ այդպիսի բացահայտումը պետք է պարտադրված լինի օրենքով:

Արտահայտվելու ազատությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ, և միջազգային կազմակերպություններն այս բնագավառում ընդհանուր բարելավումներ են արձանագրել 2018թ.-ից ի վեր: Զրպարտությունն ապաքրեականացվել էր 2010թ.-ին, սակայն Քաղաքացիական օրենսգրքի 2021թ. ապրիլի փոփոխություններից մեկով եռապատկվել է առավելագույն նյութական վնասի փոխհատուցումը, որը կարող է պահանջվել վիրավորանքի և զրպարտության համար:[66] ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներն

---

64 Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ) ներկայացրել է հեռարձակողների թիվը, իսկ տպագիր և առցանց լրատվամիջոցների թիվը ներկայացվել է Այրեքս մեդիա կայունության ինդեքս 2019- Հայաստան-ի կողմից (IREX Media Sustainability Index 2019 – Armenia.)

65 15-րդ հոդվածը (2) թվարկում է այն սուբյեկտների և անձանց կատեգորիաները, որոնք կարող են լինել մասնավոր հեռարձակողի հիմնադիր կամ փայատեր: Այն, *ի թիվս այլոց*, ներառում է ԱԺ պատգամավորների և նրանց հետ փոխկապակցված անձանց, քաղաքական կուսակցություններ, կառավարական մարմինների անդամներ և նրանց հետ փոխկապակցված անձանց, քաղաքական կուսակցությունների հիմնադրամներ: Հեռարձակողները պարտավոր են հայտնել, թե ովքեր են իրենց հիմնադիրներն ու փայատերերը, սակայն այս պահանջը չկատարելու համար պատժամիջոց չի սահմանվում, ինչպես նաև առկա չէ որևէ իրավական կառուցակարգ այն պարտադրելու համար:

66 Տե՛ս՝ տասը տեղական լրատվական և իրավապաշտպան կազմակերպությունների հայտարարությունը, որով նրանք քննադատում են այդ փոփոխությունը: Նախագահը փոփոխության առնչությամբ դիմել է

ընդգծեցին քաղաքականության ոլորտում նկատվող կոշտ, անհանդուրժող և սադրիչ հռետորաբանության աճող մակարդակը: Քաղաքական միջավայրը, որտեղ ամենօրյա ռեժիմով տարբեր կարծիքներ բախվում են ատելության և մեղադրանքների հետ, հատկապես սոցիակական ցանցերում, բացասաբար է ազդում հանրային դիսկուրսի վրա:[67] Բացի այդ, վերջին ժամանակներս իրենց մասնագիտական պարտականությունները կատարող լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերի թիվը հարցեր է առաջացնում մամուլի ազատության հանդեպ հարգանքի վերաբերյալ:[68]

B. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հունիսի 1-ին, ինչպես պահանջվում է օրենքով, ԿԸՀ-ն վիճակահանությամբ ընտրություններին մասնակցող կուսակցություններին և դաշինքներին բաշխեց 30 րոպե անվճար եթերաժամանակ Հանրային հեռուստատեսությամբ և 60 րոպե հանրային ռադիոյով՝ երկուսն էլ ամենադիտվող ժամին: Բացի այդ, մրցակից կուսակցություններից կամ դաշինքներից յուրաքանչյուրն իրավունք ուներ ձեռք բերել մինչև 60 րոպե ժամանակ Հանրային հեռուստատեսության եթերում և մինչև 90 րոպե հանրային ռադիոյի եթերում: 32 մասնավոր հեռարձակող, այդ թվում՝ 26 մարզային հեռարձակող, ևս մրցակիցներին հնարավորություն ընձեռեցին եթերաժամ ձեռք բերել վճարովի գովազդի համար:[69]

Օրենքի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ) վերահսկում է բոլոր հեռարձակողներին պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում, այդ թվում՝ սեփական մեդիա մշտադիտարկման միջոցով:[70] Այդ կերպ, 2018թ.-ին, շատ ողջունելի քայլով ՀՌՀ-ն Ընտրական օրենսգրքի՝ բոլոր հեռարձակողների նկատմամբ սահմանված «անաչառ և դատողություններից զերծ» լուսաբանում տրամադրելու պահանջը մեկնաբանել էր այնպես, որ թույլատրվի իրականացնել մրցակիցների առավել համապարփակ լուսաբանում՝ յուրաքանչյուր մրցակցին հավասար ժամանակով լուսաբանում տրամադրելու ֆորմալ մոտեցման փոխարեն:[71] Օրենսդրության պահանջին համապատասխան՝ ՀՌՀ-ն թողարկեց մեկ նախընտրական մշտադիտարկման զեկույց և մեկ վերջնական զեկույց:[72] ՀՌՀ-ն արձանագրել էր, որ որոշ հեռուստա- և ռադիոընկերություններ անհամաչափ էին բաշխել եթերաժամանակը՝ ի օգուտ որոշ

Սահմանադրական դատարան՝ սահմանադրական վերահսկողության համար: Որոշում դեռ ընդունված չէ, նիստը հետաձվել է մինչև հոկտեմբեր:

67 Ապրիլի 14-ին հայկական մեդիա ՀԿ-ները դատապարտեցին լրագրողների նկատմամբ սպառնալիքներն ու վիրավորանքները:

68 Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի Ապրիլի 23-ի և Հայաստանի ժուռնալիստների միության մայիսի 11-ի, 31-ի, և հունիսի 3-ի հայտարարությունները վերաբերվում են ArmNews TV/tert.am կայքի, 5-րդ ալիքի, 168.am կայքի և Հրապարակ օրաթերթի լրագրողների աշխատանքը խոչընդոտելուն և նրանց նկատմամբ ֆիզիկական բռնությանը:

69 Քաղաքական սուբյեկտները կարող են քաղաքական գովազդ տեղադրել մասնավոր լրատվամիջոցներում (հեռարձակվող և տպագիր), այդ թվում՝ նախքան քարոզարշավի մեկնարկը:

70 Օգտվելով սեփական մեթոդաբանությունից, որը հասանելի է իր կայքում և ԿԸՀ կայքում, ՀՌՀ-ն մշտադիտարկել է 38 հեռարձակող: Թեև գերակշիռ մասով այն կենտրոնացած էր անվճար և վճարովի եթերաժամանակի հետ կապված պահանջների պահպանման վրա, ՀՌՀ-ն նաև մշտադիտարկել է մրցակից ուժերին նորությունների թողարկումներում և այլ քաղաքական ծրագրերում հատկացված ժանամակը: Այդուհանդերձ, այն չի գնահատել լուսաբանման տոնայնությունը:

71 Մասնավոր հեռարձակողների՝ պաշտոնական քարոզչության ժամանակահատվածից դուրս թողարկվող քաղաքական ծրագրերի նկատմամբ նման պահանջներ չեն գործում:

72 Մշտադիտարկման զեկույցներ են հրապարակվել հունիսի 16-ին և 25-ին: Երկուս էլ հասանելի են ՀՌՀ և ԿԸՀ կայքէջերում:

կուսակցությունների և դաշինքների, սակայն հանձնաժողովն արձանագրված անհամաչափությունները չէր դիտարկել որպես հավասար պայմանների պահանջի խախտում:[73]

Կարելի է դիտարկել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կարողությունների ամրապնդումը՝ քաղաքական լուսաբանման լիարժեք և անկախ մեդիա մշտադիտարկում իրականացնելու համար, այդ թվում՝ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Հանձնաժողովը պետք է իրացնի իր՝ կանոնավոր կերպով այդպիսի մշտադիտարկում իրականացնելու օրենքով սահմանված իրավունքը քաղաքական ծրագրերի բազմազանություն ապահովելու նպատակով:

ՀՌՀ-ն պաշտոնական գրություններով արձագանքել է Հայաստան և Պատիվ ունեմ դաշինքների կողմից երկու ֆորմալ բողոքներին, սակայն դրանք հրապարակված չեն: Թեև այդ երկու գրությունները ներկայացվել էին պաշտոնական քարոզարշավի ընթացքում (համապատասխանաբար հունիսի 8-ին և 9-ին), երկուսն էլ վերաբերվում էին «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդման թողարկմանը, որը հեռարձակվել էր Հ1-ի եթերում նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը: Հուլիսի 1-ին ՀՌՀ-ն իր նիստում քննեց լռության օրվա արձանագրված վեց խախտման դեպք, և բոլոր համապատասխան հեռարձակողներին տրվեց նախազգուշացում:[74]

C. ԺՀՄԻԳ ԸՆԱ ՄԵԴԻԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԺՀՄԻԳ ԸՆԱ-ն իր մեդիա մշտադիտարկումն սկսեց մայիսի 24-ին՝ յոթ հեռուստաալիքի, մեկ ռադիոկայանի և երեք առցանց լրատվական կայքի որակական և քանակական վերլուծությամբ:[75] Քաղաքական զարգացումների մեդիա լուսաբանման նկատելի տարբերություններ կային պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ և հետո: Դիտարկված հեռարձակողները, մասնավորապես Հանրային հեռուստաընկերությունը, նվազեցրին ներկա կառավարության և գործող վարչապետի իրենց լուսաբանման ծավալը, և քարոզչության ժամանակահատվածում լուսաբանումը հիմնականում տրամադրեցին մրցակից կուսակցություններին ու դաշինքներին: Ընտրություններին առնչվող հեռուստատեսային բովանդակության զգալի մասը քարոզչական գովազդներն էին՝ հաճախակի բացասական քարոզչությամբ, հիմնականում Հայաստան դաշինքի կողմից:[76]

---

73 Խախտումների դեպքում ՀՌՀ-ն կարող է նախազգուշացումներ կամ տուգանքներ կիրառել մասնավոր հեռարձակողների նկատմամբ (2020թ. Տեսալսողական մեդիայի մասին օրենքի 55-րդ հոդված): Այն կարող է հանձնարարել հանրային հեռարձակողներին վերացնել հայտնաբերված թերությունները, կարող է նաև միջնորդություն ներկայացնել Հանրային հեռարձակողի խորհուրդ՝ համապատասխան հանրային հեռարձակողի գլխավոր տնօրենի նկատմամբ ավելի խիստ միջոցներ կիրառելու վերաբերյալ (հոդված 32):

74 Դեպքերի մեծ մասը կապված էր հեռարձակման ընթացքում մրցակիցների պաստառների տեսանելիության հետ:

75 ԺՀՄԻԳ ԸՆԱ-ն մշտադիտարկել է համապետական սփռմամբ Հ1, Արմենիա ԹիՎի, Կենտրոն ԹիՎի, Շանթ ԹիՎի և Երկիր Մեդիա, ինչպես նաև մայրաքաղաքային սփռմամբ Արմնյուզ ԹիՎի հեռուստաալիքների ամենադիտվող ժամի եթերը (փրայմ թայմ): Այն նաև մշտադիտարկել է Ա-ԹիՎիի և 5-րդ Ալիքի հիմնական երեկոյան լրատվական թողարկումները (պաշտոնական քարոզարշավի ընթացքում): ԺՀՄԻԳ ԸՆԱ-ն նաև մշտադիտարկել է հանրային ռադիոյի լրատվական թողարկումները և www.azatutyun.am (RFE/RL-ի հայալեզու տարբերակը), www.news.am, and www.1in.am առցանց լրատվական կայքերի քաղաքական բովանդակությամբ հոդվածները:

76 Հայաստան դաշինքի որոշ գովազդներ ներառում էին 2018թ.-ին հայտնի քաղաքական բլոգեր Վիլեն Գայֆեջյանի կողմից ստեղծված մի տեսանյութի աղավաղված տարբերակը, որտեղ նա քննադատել էր նախկին

Հանրային *Հ1* հեռարձակողի եթերում կառավարության լուսաբանմանը նվիրված ժամանակը նախքան քարոզարշավը եղած 66 տոկոսից քարոզարշավի ընթացքում նվազեց մինչև 4 տոկոսի՝ տոնայնության առումով մնալով հիմնականում դրական կամ չեզոք: *Հ1*-ը բոլոր մրցակիցներին լուսաբանել է հիմնականում համադրելի չափով՝ ամենաշատ՝ 12 տոկոս լուսաբանում նվիրելով Քաղաքացիական պայմանագրին, որին հետևում էր Հայ ազգային կոնգրեսը՝ 11 տոկոսով, Հայաստան դաշինքը՝ 8 տոկոսով և Պատիվ ունեմ դաշինքը՝ 7 տոկոսով: Լուսաբանման տոնայնությունը հիմնականում դրական կամ չեզոք էր և, ընդհանուր առմամբ, խուսափում էր կոշտ հռետորաբանությունից:

Հանրային հեռուստեսությունը կատարել է անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու օրենքի պահանջը:[77] Այն նաև թողարկել է մի շարք հարցազրույցներ[78] և ընտրական բանավեճեր, այդ թվում՝ մրցակցող կուսակցությունների ու դաշինքների միջև երկու ուղիղ հեռարձակմամբ բանավեճ:[79] Այդուհանդերձ, մրցակիցների կեսից ավելիի առաջնորդները մերժեցին հանրային հեռուստատեսության վերջնական երկու բանավեճին մասնակցելու հրավերը, ինչը բացասաբար ազդեց այդ բանավեճերի տեղեկատվական արժեքի վրա:[80] Մի շարք ընդդիմադիր կուսակցություններ գանգատվեցին Հ1-ի կողմից ընտրությունների լուսաբանման տարբեր ասպեկտներից, այդ թվում՝ վճարովի գովազդային այնպիսի նյութերի խմբագրումից ու մերժումից, որոնց մեջ պարունակվում էր իշխող կուսակցության և վերջինիս աջակիցների քննադատություն,[81] և բանավեճերի կարգը սահմանելու եղանակից:[82]

իշխանություններին և որն ի սկզբանե օգտագործվել էր Քաղաքացիկան պայմանագրի քարոզչական գովազդներում: Հայաստան դաշինքն օգտագործել էր այդ տեսանյութի մի հատված և այն խմբագրել էր այնպես, որ հղվի այլ քաղաքական ուղերձ՝ ընդդեմ ներկա կառավարության: Բլոգերը բողոք ներկայացրեց հեռուստաալիքներին՝ պնդելով, որ այդպիսի խմբագրումը խախտում էր իր հեղինակային իրավունքները:

77 Բոլոր 25 մրցակից կուսակցություններն ու դաշինքները օգտագործեցին հանրային հեռուստատեսության անվճար եթերաժամանակը և 13-ը՝ հանրային ռադիոյինը: Բացի այդ, նրանցից 20-ը վճարովի գովազդ տեղադրեց հանրային հեռուստատեսության և 6-ը՝ հանրային ռադիոյի եթերում:

78 Հ1-ի հիմնական քաղաքական բանավեճը՝ «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդումը, լրացվել էր մեկ այլ հարցազրույցով, որին մասնակցում էին բոլոր մրցակից կուսակցությունների ու դաշինքների ներկայացուցիչները՝ հյուրընկալելով նրանցից 22-ին (Հայաստան և Պատիվ ունեմ դաշինքները մերժել էին հրավերը): Այդուհանդերձ, մայիսի 10-ին ընտրությունների նշանակման և հունիսի 7-ին քարոզարշավի պաշտոնական մեկնարկի միջև ընկած ժամանակահատվածում Քաղաքացիական պայմանագրի ներկայացուցիչները մասնակցել էին «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդման թողարկումների 50 տոկոսին (ութ անգամ): Հինգ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ հրավիրված էին ինը թողարկումների, սակայն ոչ մեկը երկու անգամից ավելի:

79 Azatutyun.am-ը, մի շարք մարզային և առցանց լրատվամիջոցներ (Ֆակտոր Թիվի, Քյավառ ԹիՎի, Լոռի ԹիՎի, Սևան ԹիՎի և Ցայգ ԹիՎի) և ՀԿ-ներ («Մեդիա կենտրոն» և «Երկխոսության մեդիա կենտրոն») նույնպես կազմակերպեցին բանավեճեր:

80 Ընդդիմության հիմնական առաջնորդները մերժեցին բանավեճի հնարավորությունը իշխող կուսակցության առաջնորդի հետ՝ պատճառաբանելով, որ նրան համարում են երկրի դավաճան:

81 Հայաստան դաշինքը (հունիսի 8-ին) և Պատիվ ունեմ դաշինքը (հունիսի 9-ին) բողոքներ ներկայացրին ՀՌՀ՝ Հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակված հիմնական քաղաքական բանավեճի վարողի կողմից առերևույթ ոչ անաչառ մոդերացման հիմքով: Հունիսի 12-ին Պատիվ ունեմ դաշինքը հրապարակային գանգատվեց իր գովազդային նյութերի նկատմամբ խմբագրական միջամտության երկու դեպքից՝ առերևույթ զրպարտիչ խոսքի հիմքով: Հունիսի 14-ին ՀՌՀ-ն տեղեկացրեց հեռուստաալիքներին, որ այդպիսի խմբագրումները թույլատրելի չեն, և հունիսի 17-ին հանրային հեռուստատեսությունը չեղարկեց մեկ տեսանյութի իր մերժումը և կուսակցությանը տրամադրեց այլ եթերաժամ:

82 Մի շարք կուսակցություններ առարկություն հայտնեցին վերջնական հեռուստաբանավեճերի համար կիրառված ընտրության չափանիշերի առումով, և դրանցից 13-ը որոշեցին չմասնակցել: Հունիսի 16-ին և 17-ին եթեր հեռարձակված բանավեճերին հրավիրվել էին կուսակցություններ և դաշինքներ ըստ վերջիններիս գրանցման ամսաթվի, որի հետևանքով այդ կուսակցությունները գանգատվեցին իշխող կուսակցությանը

Հանրային լրատվամիջոցների խմբագրական անկախությունը և քաղաքացիների համար անաչառ, քննադատական և վերլուծական քաղաքական ծրագրերի հասանելիությունը պետք է առավել խթանվեն: Այս առումով կարելի է դիտարկել հանրային լրատվամիջոցների կողմից ընտրությունների անաչառ լուսաբանման պահանջների տարածումը ընտրական ամբողջ ցիկլի վրա: Դա նաև ներառում է հանրային և պետական պաշտոնատար անձանց գործունեության ոչ նախապատվային լուսաբանում պաշտոնական քարոզարշավի ժամկետներից դուրս:

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում որոշ մասնավոր հեռարձակողներ, մասնավորապես *Շանթ Թիվին*, նկատելի ջանք գործադրեց մրցակիցների մեծ մասին բավական անաչառ կերպով լուսաբանելու համար՝ նպաստելով ընտրողների՝ իրազեկ ընտրություն կատարելու համար անհրաժեշտ հասանելի տեղեկատվության բազմազանությանը: Ալիքն իր քաղաքական լուսաբանման 11 տոկոսը նվիրեց Հայաստան դաշինքին և 10 տոկոսը՝ Քաղաքացիական պայմանագրին: Լուսաբանման տոնայնությունը չեզոք էր կամ դրական: Դրան հակառակ՝ *Արմնյուզ* ալիքը հաճախ ներկայացնում էր միակողմանի և կողմնակալ լուսաբանում ընդդեմ իշխանությունների և Քաղաքացիական պայմանագրի, այդ թվում՝ իր լրագրողների կողմից նսեմացնող հայտարարություններով:

Այն ալիքները, որոնք ընկալվում են որպես բացահայտորեն փոխկապակցված որոշակի կուսակցությունների հետ, նախապատվային կերպով են լուսաբանել վերջիններիս: Օրինակ *Երկիր Մեդիան* իր լուսաբանման 36 տոկոսը, հիմնականում դրական կամ չեզոք տոնայնությամբ, նվիրել է Հայաստան դաշինքին: Նմանապես, *5-րդ ալիքը*, հիմնականում դրական կամ չեզոք տոնայնությամբ, իր լուսաբանման 36 տոկոսը տրամադրել է Հայաստան դաշինքին՝ հաճախ միակողմանի կամ բացասական լուսաբանելով Քաղաքացիական պայմանագիր կուսակցությամբ հանդես եկող կառավարությունը:

Մշտադիտարկված առցանց լրատվամիջոցները ցուցաբերել են տարբեր խմբագրական քաղաքականություն՝ *1in.am*-ը քննադատական լինելով ընդդիմության և մասնավորապես Հայաստան դաշինքի նկատմամբ, իսկ *news.am*-ը հիմնականում բացասական լույսի ներքո ներկայացնելով Քաղաքացիական պայմանագրին: *Azatutyun.am*-ը, մյուս կողմից, հավասարակշիռ է լուսաբանել քարոզարշավը ժամանակային տեսանկյունից, սակայն թեթևակիորեն ավելի դրական է լուսաբանել իշխող Քաղաքացիական պայմանագրին:

XI. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողով,

---

հարցեր ուղղելու հնարավորությունից զրկվելուց: Հունիսի 18-ին վարչական դատարանը մերժեց ՀԱԿ-ի՝ առաջնորդների բանավեճերի ընտրության չափանիշերի վերաբերյալ հունիսի 17-ի հայցը, դրա՝ տվյալ դատարանի իրավասությունից դուրս լինելու հիմքով:

իսկ ԿԸՀ-ի դեմ բողոքներն ընդդատյա են Վարչական դատարանին:[83] Ըստ օրենքի՝ ընտրական հանձնաժողովների որոշումները և գործողությունները կարող են նաև բողոքարկվել դատական կարգով, և զուգահեռ դատական և վարչական վարույթների առկայության դեպքում առաջնահերթությունը տրվում է դատական վարույթին: Համաձայն Վարչական դատարանի՝ դիմումատուները պետք է սպառեն բոլոր միջոցները ընտրական վարչարարության մարմիններում նախքան դատարան դիմելը:[84] Մի քանի բացառություններով՝ դիմումներ և բողոքներ ներկայացնելու իրավունքը սահմանափակվում է անհատական ընտրական իրավունի հնարավոր խախտումներով:[85] 2021թ. ապրիլին մի դիտորդական կազմակերպություն բողոքարկեց Ընտրական օրենսգրքի այն դրույթի սահմանադրականությունը, որով չէր թույլատրվում բողոքներ ներկայացնել հանրային շահի տեսանկյունից: Հայցը մերժվեց Սահմանադրական դատարանի կողմից սեպտեմբերի 2-ին:[86] Օրենքը նախատեսում է քվեարկության արդյունքների բողոքարկումների մի քանի մակարդակ, թեև բողոք ներկայացնելու իրավունքը վերապահվում է ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններին և դաշինքներին ու նրանց ցուցակներում ընդգրկված թեկնածուներին:[87] Վերջիններս կարող են նաև ԸԸՀ որոշումը բողոքարկել ԿԸՀ կամ Վարչական դատարան:

ԿԸՀ-ն նախքան ընտրությունների օրը ստացել է 22 բողոք, ինչպես նաև մի շարք ոչ պաշտոնական դիմումներ և տեղեկատվություն տրամադրելու խնդրանքներ:[88] ԿԸՀ-ում բողոքների քննությունն ընթացել է բաց և կոլեգիալ կերպով, բոլոր մասնակիցները հնարավորություն են ունեցել արտահայտել իրենց տեսակետները, իսկ որոշումները հրապարակվել են օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ: Մի քանի դիմումատուներ բողոքներ էին ներկայացրել քարոզարշավի առերևույթ խախտումների վերաբերյալ՝ կոշտ հռետորաբանության, կամ իրենց որակմամբ «ատելության խոսքի» օգտագործման հիմքով, և պահանջում էին մի քանի ցուցակների ու թեկնածուների գրանցումն անվավեր ճանաչել: Թեև այդ դիմումների մեծ մասը մերժվեց բողոք ներկայացնելու իրավունքի բացակայության հիմքով, ԿԸՀ-ն ընդգծեց խոսքի ազատության

83 Ընտրողների ցուցակների անճշտություններին առնչվող բողոքները ներկայացվում են ԱՎՎ-ին, իսկ վերջինիս որոշումները կարող են բողոքարկվել տվյալ վարչական շրջանի դատարան:

84 Գործնականում դա նշանակում է, որ միայն ԿԸՀ որոշումների դեմ բողոքներն են ընդունելի դատական վերահսկողության համար: Այդուհանդերձ, դա չի վերաբերում ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԸԸՀ որոշումների բողոքարկումներին:

85 Բողոքներ կարող են ներկայացվել ընտրողների, ԶԼՄ ներկայացուցիչների և դիտորդների կողմից իրենց անհատական ընտրական իրավունքի խախտումների հիմքով, իսկ վստահված անձանց և հանձնաժողովների անդամների կողմից՝ իրենց և այլ կուսակցությունների, թեկնածուների ու շահառուների իրավունքների խախտումների հիմքով:

86 Ընտրական օրենսգրքի բողոքարկման իրավունքի մասին դրույթները դիտորդներին իրավունք են վերապահում բողոքներ բերել միայն իրենց իրավունքների խախտման հիմքով:

87 ՏԸՀ անդամները և վստահված անձինք կարող են նաև բողոքարկել տվյալ տեղամասի ընտրությունների արդյունքները: Վստահված անձինք դա կարող են անել միայն եթե ներկա են եղել քվեարկությանը և ձայների հաշվարկին, իսկ ՏԸՀ անդամը՝ միայն եթե գրառում է կատարել ՏԸՀ արձանագրությունում: Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի II.3.3f մասում առկա է հանձնարարական, ըստ որի "Ընտրատեղամասի յուրաքանչյուր ընտրող և ընտրություններին մասնակցող ցանկացած թեկնածու պետք է կարողանա նման բողոք ներկայացնել: Ինչ վերաբերում է ընտրությունների արդյունքներին, ապա ընտրողների կողմից դրանց բողոքարկման հարցում որոշակի քվորում կարելի է կիրառել."

88 ԿԸՀ-ն տեղեկացրեց, որ ստացել է ընդհանուր թվով 85 տարբեր դիմումներ: Այդ թիվը ներառում է թեկնածուների ինքնաբացարկների դիմումները և տեղեկատվության տրամադրման խնդրանքները քաղաքացիների ու դիտորդների կողմից:

իրավունքի կարևորությունը և գտավ, որ Ընտրական օրենսգիրքն իրեն թույլ չի տալիս գնահատել քարոզարշավային ելույթների բովանդակությունը, ինչպես նաև չի սահմանում նման գնահատում իրականացնելու չափորոշիչներ: Բողոքարկումներից մեկի արդյունքում Վարչական դատարանը հայտնեց, որ ԿԸՀ-ի անգործությունը թեկնածու Նիկոլ Փաշինյանի քարոզարշավային ելույթների գնահատման մասով օրինաչափ չէր, սակայն դատարանը չէր մանրամասնում, թե ընտրական օրենսդրության որ դրույթների հիման վրա պետք է գործեր ԿԸՀ-ն քարոզարշավային ելույթների իրավաչափությունը գնահատելու համար:[89]

ԿԸՀ կողմից նախքան ընտրությունների օրը ստացված բողոքներից չորսը վերաբերում էին առերևույթ վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերին:[90] Դրանք մերժվեցին դիմումատուի իրավական կարգավիճակ չունենալու հիմքով, իսկ դիմումների բովանդակությունը միատեսակ կերպով չգնահատվեց՝ թեև ԿԸՀ-ն, ըստ օրենքի, պարտավոր էր դա անել:[91] ԿԸՀ-ն ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին բացատրեց, որ խուսափել է վարչական ռեսուրսի ենթադրյալ չարաշահումների դեպքերի գնահատումից, քանի որ համանման առարկայով բողոքներ են ներկայացված եղել Գլխավոր դատախազություն:[92] Այսպիսի մոտեցումը քարոզարշավի ժամանակ վարչական ռեսուրսի չարաշահման հետ կապված խախտումները թողնում է առանց պատեհաժամ արձագանքելու ընտրական գործընթացի ընթացքում:[93] Քովիդ-19 համավարակի ընթացքում դիմումատուների համար մատչելիությունն ապահովելու համար ԿԸՀ-ն թույլատրել է դիմումներ և գրություններ ուղարկել նաև էլեկտրոնային համակարգով:[94]

Ընտրական օրենսգրքին համապատասխան և քարոզարշավի ընթացքում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով՝ ԿԸՀ-ն պետք է քարոզարշավի ընթացքում տեղ գտած վարչական ռեսուրսի առերևույթ չարաշահման դեպքերը դիտարկի որպես իր իրավասությունների մաս և, կարիք եղած դեպքում, կիրառի ընտրական և վարչական պատժամիջոցներ, ինչպես օրինակ՝ նախազգուշացումներ և տուգանքներ:

Վարչական դատարանը նախքան ընտրությունների օրը ստացել է 21 հայց, այդ թվում՝ բողոքներ հնարավոր թեկնածուների կողմից, որոնց մերժվել էր թեկնածուի գրանցման համար անհրաժեշտ քաղաքացիության և բնակության մասին տեղեկանքի տրամադրումը, ինչպես նաև երեք թեկնածուների գրանցումն անվավեր ճանաչող ԿԸՀ

89 Որոշումը հրապարակվել է ընտրությունների օրվանից հինգ օր անց:

90 ԿԸՀ-ն նմանատիպ մտահոգությունների մասին տեղեկացվել է նաև որոշ գրություններով, որոնք չէին ներկայացվել որպես պաշտոնական բողոք:

91 Ըստ Ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովները վերահսկողություն են իրականացնում քարոզչության ընթացակարգերի պահպանման նկատմամբ՝ *ի պաշտոնե* գործելու լիազորությամբ: Օրենսգրքի 23-րդ հոդվածը սահմանափակումներ է սահմանում քարոզարշավի նկատմամբ՝ ներառյալ վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը: Մի դեպքում ԿԸՀ անգործությունը բողոքարկվել էր, և Վարչական դատարանն ընդունել էր վարչական ռեսուրսի չարաշահման փաստը Քաղաքացիական պայմանագրի քարոզարշավի ընթացքում:

92 Վարչական ռեսուրսի չարաշահումը քրեական հանցանք չէ ինքնին, սակայն միևնույն ժամանակ այն որոշ քրեական հանցանքների համար հանդիսանում է ծանրացուցիչ հանգամանք:

93 Ընտրությունների օրվա դրությամբ քրեական հանցանքերի վերաբերյալ բոլոր քննությունները գտնվում էին ընթացքի մեջ:

94 ԿԸՀ-ն փորձարկել էր բողոքների ներկայացման էլեկտրոնային համակարգը 2020թ. ՏԻՄ ընտրությունների ընթացքում:

որոշումների բողոքարկումներ:[95] Մի դեպքում Վարչական դատարանը վերացրեց նախկին նախագահ Քոչարյանի գիրքը գովազդող վահանակների հեռացնելու մասին ԿԸՀ որոշումը, որտեղ ԿԸՀ-ն գտել էր, որ գովազդն «ասոցացվում է քարոզչության հետ»:[96] Երեք այլ մրցակիցներ ևս բողոքարկեցին իրենց գովազդային վահանակների հեռացման վերաբերյալ ԿԸՀ որոշումները, սակայն օրենքով սահմանված ժամկետներից դուրս:[97] ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված դատական նիստերն ընթացել են թափանցիկ և դոնբաց, մասնակիցները պատշաճ կերպով իրազեկված են եղել նիստերի օրվա և ժամի մասին և հնարավորություն են ունեցել իրենց փաստարկները ներկայացնել դատարանին:

Վարչական դատավարության օրենսգիրքը Վարչական դատարանին պարտավորեցնում է ընտրական վեճերը լուծել յոթնօրյա ժամկետում: Մինչև ընտրությունների օրը շատ դեպքերում Վարչական դատարանը հաշվի էր առել ընտրական ժամկետները՝ որոշումներ կայացնելով առավել սեղմ ժամկետներում լուծման պատեհաժամ տրամադրման նպատակով:[98] Միևնույն ժամանակ, ո՛չ Վարչական դատավարության և ո՛չ էլ Ընտրական օրենսգրքերը չեն ապահովում բոլոր նախընտրական վեճերի լուծումը մինչև ընտրությունների օրը, ինչը կարող է ազդել համապատասխան լուծումների արդյունավետության վրա:[99] Քարոզարշավին վերաբերվող երեք ԿԸՀ որոշումներ Վարչական դատարանն անվավեր ճանաչեց ընտրությունների օրվանից համարյա երեք օր անց, երբ այդ որոշումների կատարումն այլևս անիմաստ էր այս ընտրությունների համար:[100]

Նախընտրական բողոքների քննման օրենքով սահմանված ժամկետները պետք է վերանայվեն ընտրական ժամկետներին համապատասխան՝ երաշխավորելու դատական որոշումների պատեհաժամ կատարումն ու ընտրախախտումների դեմ արդյունավետ միջոցների կիրառումը:

Վարչական դատարանը միշտ միատեսակ մեկնաբանություն չի տվել ընտրական օրենսդրությանը: Մինչ մեկ որոշումով դատարանը մերժել էր գնահատական տալ

---

95 Վարչական դատարանը ուժի մեջ թողեց ԿԸՀ որոշումը երկու դեպքում, իսկ մի դեպքում թեկնածուի գրանցումը վերականգնվեց:

96 Հունիսի 6-ին դատարանը գտավ, որ ԿԸՀ-ն չէր հիմնավորել, թե ինչու էր վահանակները համարել «քարոզչության հետ ասոցացվող»: Ո՛չ Ընտրական օրենսգիրքը, ո՛չ էլ ենթաօրենսդրական ակտերը չեն տալիս «քարոզչության» սահմանումը: Հունիսի 7-ին ԿԸՀ-ն նույն որոշումը կայացրեց ևս մեկ անգամ՝ այս անգամ առավել մանրամասն պատճառաբանությամբ: Այդուհանդերձ, դատարանն այն նորից վերացրեց՝ նշելով, որ ԿԸՀ-ն չէր կարող վերստին ընդունել մի որոշում, որը հակասության մեջ է մտնում Վարչական դատարանի վերջնական որոշման հետ:

97 ԿԸՀ-ն մայիսի 31-ին որոշումներ էր ընդունել Լուսավոր Հայաստանի, 5165 շարժման և թեկնածու Տիգրան Արզաքանցյանի գովազդային վահանակները հեռացնելու վերաբերյալ: Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ բողոք կարող է ներկայացվել հնարավոր իրավախախտումից հետո երեք օրվա ընթացքում:

98 Թեկնածուների գրանցումն անվավեր ճանաչելու հետ կապված գործերը քննվել են այնպիսի ժամկետներում, որպեսզի թեկնածուներին թույլ տրվի սկսել քարոզարշավը և հաշվի առնվի ԿԸՀ-ի կողմից քվեաթերթիկների տպագրության վերջնաժամկետը: Քվեաթերթիկները ներառում են համապատասխան ցուցակի առաջին երեք թեկնածուների անունները:

99 Չնայած բողոքարկումների նախընտրական բովանդակությանը՝ օրենքը բոլոր բողոքների վերջնական լուծումը կապում է ԿԸՀ կողմից ընտրությունների արդյունքների ամփոփման վերջնաժամկետի հետ:

100 Բողոքներ էին ներկայացվել թեկնածու Փաշինյանին լռության օրը խախտելու համար նախազգուշացում տալու մասին ԿԸՀ որոշման, գործողություն կատարելու և թեկնածու Փաշինյանի քարոզարշավային ելույթները գնահատելու մերժման մասին ԿԸՀ որոշման, և քարոզարշավի ընթացում վարչական ռեսուրսի չարաշահումների հետ կապված ԿԸՀ որոշման դեմ:

ենթադրյալ քարոզչական նյութերի, ինչպես օրինակ՝ գովազդային վահանակների բովանդակությանը «ընտրական քարոզարշավ» եզրույթի իրավական սահմանման անբավարարության պատճառով, մեկ այլ դեպքում դատարանը կատարել էր այդպիսի գնահատում՝ հղում անելով Ընտրական օրենսգրքի՝ այս ընտրությունների ժամանակ դեռևս ուժի մեջ չմտած փոփոխություններին:[101] Այդ անհամապատասխանությունները խաթարել են իրավական որոշակիությունը և օրենքի միատեսակ կիրառումը:

Դատարաններն ու այլ դատական մարմինները պետք է օրենքները, այդ թվում՝ Ընտրական օրենսգիրքը, կիրառեն միատեսակ և հետևողական կերպով: Այդ նպատակով ցանկալի կլիներ կազմակերպել վերապատրաստման դասընթացներ և փորձի փոխանակում:

Գլխավոր դատախազությունը մինչև ընտրությունների օրը ստացել է ընդհանուր թվով 861 հաղորդում առերևույթ ընտրական հանցագործությունների վերաբերյալ, որից 371-ը ուղարկվել են նախաքննության մարմիններ, իսկ վարչական բնույթ կրող դիմումներն ուղարկվել են ԿԸՀ: Գլխավոր դատախազությունը հաղորդեց, որ այս ընտրությունների հետ կապված հարուցվել են ընդհանուր առմամբ 78 քրեական գործ, որից 33-ը՝ ընտրակաշառքի առնչությամբ: 86 անձի ներկայացվել է մեղադրանք, որից 24-ը կալանավորվել են: Տարբեր ընտրական հանցանքների մեղադրանքներով ձերբակալված թեկնածուների թիվը ընտրություններից հետո հասավ 8-ի, որից 6-ը՝ ընտրակաշառք տալու մեղադրանքով, մեկը՝ ստորադասների նկատմամբ ճնշումներ գործադրելու, և ևս մեկը՝ տեղամասային կենտրոնին հարող տարածքում բռնություն գործադրելու մեղադրանքով:[102]

ԺՀՄԻԳ ԸԴԱ բազմաթիվ զրուցակիցներ մտահոգություններ հայտնեցին մի կողմից դատական ատյանների քաղաքականացված լինելու, իսկ մյուս կողմից՝ դատարանների անկախությանը միջամտության կապակցությամբ: 2020թ.-ին, մինչ Սահմանադրական դատարանի վարույթում էին գտնվում քաղաքականապես զգայուն գործեր,[103] Ազգային ժողովն ընդունեց Սահմանադրության՝ ՍԴ դատավորների պաշտոնավարման ժամկետների վերաբերյալ անցումային դրույթների փոփոխություններ, որի արդյունքում զգալի փոփոխություններ կատարվեցին Սահմանադրական դատարանի առկա կազմում:[104]

---

101 Դատարանը թեկնածու Փաշինյանի լռության օրը ունեցած ելույթում քարոզչության տարրեր չգտավ և ԿԸՀ նախազգուշացումը ճանաչեց անվավեր:

102 Գլխավոր դատախազության կողմից այս տվյալները հրապարակվել են հուլիսի 23-ին:

103 Սահմանադրական դատարանի կազմը փոփոխության ենթարկող փոփոխություններն ընդունվել են 2020թ. հունիսի 22-ին, նույն օրը երբ ՍԴ-ն աշխատակարգային նիստ էր անցկացրել որոշելու համար նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ մեղադրանքների սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ: 2021թ. մարտի 26-ին Սահմանադրական դատարանն իր նոր կազմով հակասահմանադրական ճանաչեց Քրեական օրենսգրքի հոդվածը, որով մեղադրվում էր Ռ. Քոչարյանը:

104 Սկզբում կառավարությունն առաջարկել էր Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման հետ կապված դրույթների փոփոխությունները դնել հանրաքվեի, որը նախատեսվում էր անցկացնել 2020թ. ապրիլի 5-ին: Հանրաքվեն չեղարկվեց Քովիդ-19 համավարակի պատճառով, իսկ այնուհետև փոփոխություններ կատարվեցին Սահմանադրության անցումային դրույթներում, որոնք քվեարկությամբ ընդունվեցին ԱԺ-ում: Սահմանադրությունը չի նախատեսում իր անցումային դրույթների փոփոխություններ:

XII. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

Իրավական դաշտը նախատեսում է տեղական և միջազգային դիտորդների կողմից ընտրությունների դիտարկում, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների վստահված անձանց ներկայություն տեղամասային կենտրոններում: Հավատարմագրվելու համար տեղական դիտորդների խմբերը չպետք է սատարեն թեկնածուներին կամ կուսակցություններին, ունենան իրենց դիտորդների համար ընդունված վարվելակերպի ներքին կանոններ և պատասխանատու լինեն իրենց դիտորդների վերապատրաստման համար: Չնայած այսպիսի պահանջի վերացման ԺՀՄԻԳ նախկին հանձնարարականների՝ Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ տեղական դիտորդական կազմակերպություններն իրենց կանոնադրության մեջ ներառեն ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հստակ նպատակներ ընտրությունների նշանակումից առնվազն մեկ տարի առաջ՝ դրանով անհարկի սահմանափակում կիրառելով դիտարկման հնարավորության նկատմամբ:[105]

Ինչպես նշվել է նախկին հանձնարարականներից մեկում, նորաստեղծ կազմակերպությունների դիտորդական հավատարմագրումն արգելող դրույթը պետք է վերանայվի:

Որոշ տեղական դիտորդական կազմակերպություններ մտահոգություն հայտնեցին, որ հավատարմագրման դիմումներ ներկայացնելու ընտրություններից 15 օր առաջ սահմանված ժամկետը դժվարություններ է առաջացնում դիտորդներ հավաքագրելու հարցում:[106] Հավատարմագրման դիմումները էլեկտրոնային եղանակով չեն կարող ներկայացվել, ինչն ավելի է ծանրացնում գործընթացը և՛ տեղական դիտորդական կազմակերպությունների և՛ ԿԸՀ-ի համար:[107] Օրենքն ընտրությունների երկրորդ փուլի անցկացման դեպքում նոր հավատարմագրման գործընթաց չի նախատեսում:

Միջազգային կազմակերպություններից յուրաքանչյուրին թույլատրվում է տեղամասային կենտրոնում ունենալ երկու դիտորդ և մեկ թարգմանիչ, իսկ տեղական դիտորդական կազմակերպությունները կարող են միաժամանակ միայն մեկ դիտորդ ունենալ տեղամասում: Հավատարմագրված լրատվամիջոցներից և գրանցված կուսակցություններից ու դաշինքներից յուրաքանչյուրը կարող է տեղամասում ունենալ միաժամանակ մինչև երկու ներկայացուցիչ:[108] Օրենքը ՏԸՀ-ներին թույլ է տալիս սահմանափակել տեղական դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների թիվը տեղամասային կենտրոնում մինչև 15-ի, եթե մարդկային կուտակումները բացասաբար են ազդում քվեարկության սենյակի գործառնությունների վրա: Թեև ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ զրուցակիցներ մտահոգություններ հայտնեցին այս դրույթի հնարավոր կամայական

---

105 Մայիսի 29-ին «Ռեսուրս կենտրոն» բարեգործական ՀԿ-ի հավատարմագրումը մերժվել էր պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

106 Ընտրական օրենսգրքի 2021թ. մայիսի փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնելու 2022թ.-ին, տեղական դիտորդական կազմակերպությունների գրանցման ժամկետը երկարաձգում են մինչև ընտրություններից 10 օր առաջ և թույլ են տալիս անհատ դիտորդների ցուցակներ ներկայացնել մինչև ընտրություններից երեք օր առաջ:

107 Ընտրական օրենսգրքի 2021թ. մայիսի փոփոխություններով ներմուծվում է տեղական դիտորդների էլեկտրոնային գրանցման գործընթաց:

108 Հավատարմագրված ԶԼՄ-ներին թույլատրվում է ունենալ մեկ ներկայացուցիչ տեղամասային կենտրոնում, իսկ հեռուստատեսության պարագայում երկու՝ մեկ լրագրող և մեկ օպերատոր:

կիրառման առնչությամբ, ընտրությունների օրը այն գործնականում խնդիրներ չի հարուցել:

Մինչև հունիսի 5-ի օրենքով սահմանված վերջնաժամկետը ԿԸՀ-ն հավատարմագրեց 19 տեղական դիտորդական կազմակերպության՝ ընդհանուր թվով 8,748 դիտորդով, 8 միջազգային կազմակերպության, ինչպես նաև դիվանագիտական առաքելությունների և օտարերկրյա պատվիրակությունների 70 ներկայացուցչի: ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ զրուցակիցներ պնդուն էին, որ մի շարք տեղական դիտորդական կազմակերպություններ սերտորեն փոխկապակցված են որոշ կուսակցությունների և թեկնածուների հետ: Հավատարմագրված դիտորդական կազմակերպություններից 9-ը որևէ զեկույց, հայտարարություն, կամ այլ տեղեկատվություն ընտրությունների իրենց դիտարկման վերաբերյալ չեն հրապարակել:[109]

XIII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐ

Ընտրությունների օրն ընդհանուր առմամբ խաղաղ էր՝ ԿԸՀ կողմից հաղորդված 49,4 տոկոս մասնակցությամբ: Հունիսի 21-ի առավոտյան վաղ ժամերին ԿԸՀ-ն իր կայքում սկսեց հրապարակել ընտրությունների մանրամասն նախնական արդյունքներն ըստ տեղամասերի:

Բացումը դրական է գնահատվել բոլոր 128 տեղամասային կենտրոններում, որտեղ այն դիտարկվել է: Սահմանված ընթացակարգերն, ընդհանուր առմամբ, պահպանվել են, սակայն դիտարկված տեղամասերից 12-ը բացվել են փոքր ինչ ուշացումով:

Քվեարկությունը դրական է գնահատվել դիտարկված 1,216 տեղամասերից 98-ում: Թեև ԸՄԴԱ դիտորդները գործընթացը բնութագրել են որպես բնականոն, թափանցիկ և լավ կազմակերպված, նրանք հաղորդել են այնպիսի խնդիրների մասին, ինչպիսիք են, օրինակ՝ մրցակիցների կուսակցությունների կամ դաշինքների վստահված անձանց կողմից միջամտությունները, հաճախակի կուտակումները, ինչպես նաև Քովիդ-19 պաշտպանական միջոցառումների համընդհանուր անտեսումը:

Դիտարկված տեղամասային կենտրոնների 3 տոկոսում քվեատուփերը պատշաճ կերպով կնքված չէին: ԸՄԴԱ դիտորդներն արձանագրեցին, որ քվեատուփերի կնքման միատեսակ ընթացակարգ չկար, և որ կնիքների հերթական համարները արձանագրված չէին: Քարոզչական նյութեր ու գործողություններ են նկատվել ԸՄԴԱ դիտորդների կողմից դիտարկված տեղամասերի 7 տոկոսի մերձակայքում: Եղել են 25 հաղորդումներ դիտարկված տեղամասային կենտրոնների մերձակա տարածքում լարվածության և խռովությունների դեպքերի մասին (2 տոկոս), ինչպես նաև ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշումների առանձին դեպքերի մասին: ԸՄԴԱ դիտորդները հաղորդել են, որ դիտարկված տեղամասերի 15 տոկոսում առկա են կուտակումներ, հատկապես Երևանում և այլ քաղաքներում: Շատ դեպքերում կուտակումները բացասաբար են ազդել քվեարկության գործառնությունների վրա: Տեղամասային կենտրոնների մոտ 67 տոկոսը հասանելի չէր ֆիզիկական հաշմանդամություն ունեցող

[109] Դրանցից 2-ը կայք չունեին, 2-ը Դիմատետրի էջ չունեին, իսկ 3-ը չունեին ո՛չ մեկը և ո՛չ մյուսը:

անձանց համար, իսկ 32 տոկոս դեպքերում տեղամասի կառուցվածքը հարմար չէր այդպիսի ընտրողների համար:

Հանրային իշխանությունները պետք է, հնարավորության դեպքում, հաշվի առնեն ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար առավել մեծ հասանելիության հնարավորությունը տեղամասային կենտրոնների տարածքներ ընտրելիս: Իշխանությունները կարող են նաև դիտարկել տեղամասային կենտրոնի տարածքի նվազագույն չափի սահմանում՝ կուտակումներից խուսափելու համար: Կարելի է դիտարկել ԸՀՀ-ներին տեղամասային կենտրոններ ընտրելու գործընթացում ներգրավելը:

Կուսակցությունների և դաշինքների վստահված անձինք ներկա էին դիտարկված տեղամասերի 97 տոկոսում, իսկ տեղական դիտորդները՝ 77 տոկոսում: ԸՄԴԱ դիտորդները չարտոնված անձանց ներկայություն են նկատել դիտարկված տեղամասերի 8 տոկոսում՝ հիմնականում ՏԸՀ նախագահի կողմից քվեարկության սենյակ չհրավիրված ոստիկաններ: Դիտարկված տեղամասերից 74-ում (6 տոկոս) ՏԸՀ անդամ չհանդիսացող անձինք միջամտել կամ ուղղորդել են գործընթացը: Այդ դեպքերից 55-ում խոսքը վստահված անձանց մասին էր: Պաշտոնական բողոքներ ներկայացվել են քվեարկության դիտարկում իրականացվող տեղամասերի 7 տոկոսում, : ԸՄԴԱ դիտորդների կողմից դիտարկված ՏԸՀ-ների մոտ 43 տոկոսում նախագահը կին էր, իսկ դիտարկված ՏԸՀ-ների բոլոր անդամների 65 տոկոսը կանայք էին:[110]

ԸՄԴԱ դիտորդները տեխնիկական սարքավորումների առումով խնդիրներ չեն հաղորդել, և ընտրողների նույնականացման ընթացակարգերը գրեթե համընդհանուր կերպով պահպանվել են: Դիտարկված տեղամասերի 7 տոկոսում մեկ կամ մի քանի ընտրողներ մերժվել են, հիմնականում սխալ տեղամաս ներկայանալու, ընտրացուցակներում իրենց անունը չգտնելու կամ անձը հաստատող վավերական փաստաթուղթ չունենալու պատճառով: 8 տեղամասերում ԸՄԴԱ դիտորդները նկատել են, որ անձը հաստատող վավերական փաստաթուղթ չունեցող անձանց այդուհանդերձ թույլատրել են քվեարկել: Քվեարկության ընթացակարգերը պահպանվել են՝ մի քանի բացառություններով, երբ ոչ բոլոր տեխնիկական սարքավորման կտրոններն են կնքվել ՏԸՀ կողմից կամ մնացել են ընտրողի մոտ քվեարկելուց հետո: ԸՄԴԱ դիտորդները որոշ խնդիրներ են նկատել քվեարկության գաղտնիության հետ կապված, այդ թվում դեպքեր, երբ ոչ բոլոր ընտրողներն են քվեարկել գաղտնի (դիտարկված տեղամասերի 4 տոկոսը), կամ երբ ընտրողներն իրենց չօգտագործած քվեաթերթիկները դուրս են բերել քվեախցիկից (2 տոկոս): ԸՄԴԱ դիտորդները հաղորդել են սահմանափակ թվով խախտումների մասին, ինչպես օրինակ՝ խմբային քվեարկություն (3 տոկոս), ուրիշի փոխարեն քվեարկություն (1 տոկոս) կամ ընտրողներին ուղղորդելու դեպքեր (1 տոկոսից պակաս): Հաղորդվել են առանձին դեպքեր, երբ ընտրողներին չի տրամադրվել քվեաթերթիկների ամբողջական փաթեթ, ինչպես նաև մի դեպք, երբ ՏԸՀ անդամը մի տարեց ընտրողի տվել է արդեն իսկ քվեաթերթիկ պարունակող ծրար: Տեղական դիտորդական խմբերը հաղորդել են, որ տարեց ընտրողներին երբեմն օգնում էին քվեարկել առանց նրանց կողմից այդպիսի խնդրանքի: Նմանապես, ԸՄԴԱ-ն

110 ԿԸՀ-ն ԺՀՄԻԳ ԸՄԴԱ-ին տեղեկացրեց, որ կանայք ներկայացնում էին բոլոր ՏԸՀ անդամների մոտ 67 տոկոսը:

արձանագրեց երկու դեպք, երբ վստահված անձինք էին աջակցում ընտրողներին և երկու դեպք, երբ ընտրողներին թույլ չէին տվել, որ ընտանիքի անդամն իրենց օգնի քվեարկել:

ԿԸՀ-ն պետք է ընդլայնի ընտրողների ուսուցումը ընտրական ընթացակարգերի վերաբերյալ՝ ներառյալ աջակցված քվեարկության, խմբակային քվեարկությունների կանխման և քվեարկության գաղտնիության կարևորության մասին:

Ձայների հաշվարկը դրական է գնահատվել դիտարկված 100 տեղամասերից 94-ում, այն բնութագրվել է որպես շատ թափանցիկ և, ընդհանուր առմամբ, ընթացել է սահմանված ընթացակարգերի պահպանմամբ: Գրեթե բոլոր դիտարկված ձայների հաշվարկներին ներկա էին մրցակիցների վստահված անձինք և տեղական դիտորդները: ԸՄԴԱ դիտորդները հաղորդել են գործընթացին անհարկի միջամտության 10 դեպքի մասին, որից 9-ը՝ վստահված անձանց կողմից: ԸՄԴԱ դիտորդները միայն մի քանի դեպք են արձանագրել, երբ ՏԸՀ-ներին չէր հաջողվում իրականացնել նախքան քվեատուփերը բացելը կատարվող թվային տվյալների համաձայնեցման տարրական ընթացակարգերը: Այդուհանդերձ, ԸՄԴԱ դիտորդները հաղորդեցին, որ դիտարկված 100 ձայների հաշվարկից 20-ի պարագայում աննշան տարբերություններ կային ընտրողների ցուցակում առկա ստորագրությունների և տեխնիկական սարքավորումով տպված կտրոնների թվի միջև: ԸՄԴԱ կողմից ուսումնասիրված ՏԸՀ արձանագրությունների մեծ մասում առկա էին չնչին անհամապատասխանություններ: Ձայների հաշվարկի ընթացակարգերն, ընդհանուր առմամբ, պահպանվել են, և ԸՄԴԱ դիտորդները շատ քիչ թվով զգալի ընթացակարգային սխալներ կամ լուրջ խախտումներ են արձանագրել, ինչպես օրինակ՝ ՏԸՀ անդամների ահաբեկումներ (2 հաղորդում) կամ պաշտոնական ընտրական փաստաթղթերի կեղծման ապացույցներ (3 հաղորդում): Քվեաթերթիկների վավերության սահմանումը ողջամիտ էր և միատեսակ գրեթե ամենուր, բացի համապատասխանաբար հաշվարկի 4 և 1 դեպքերում: Հաշվարկի 14 դեպքերում մասնակցում էին ՏԸՀ անդամ չհանդիսացող անձինք, իսկ 4 տեղամասային կենտրոններում ՏԸՀ անդամները նախապես ստորագրել էին արդյունքների արձանագրությունը: Դիտարկված ՏԸՀ-ներից 21-ի դեպքում նկատվել են արդյունքների արձանագրությունը լրացնելու դժվարություններ: Դիտարկված 4 տեղամասերում ՏԸՀ-ն արձանագրության պատճենը չէր փակցրել հանրությանը տեղեկացնելու համար:

Աղյուսակավորման գործընթացը բացասական է գնահատվել դիտարկված 32 ԸԸՀ-ներից 6-ում: Թեև աղյուսակավորման ընթացակարգերը մեծ մասամբ պահպանվել են, և փոքր թվով ընթացակարգային բացթողումների կամ խախտումների մասին հաղորդումներ են եղել, շատ ԸԸՀ-ներում փաստաթղթերի հանձնման-ընդունման գործընթացը պատշաճ կազմակերպված չէր, և հաճախակի հաղորդումներ են եղել առ այն, որ տարածքի անբավարարությունն ու կուտակումները բացասաբար են ազդել թափանցիկության և գործընթացի վրա: Ինչպես պահանջվում է օրենքով, բոլոր ԸԸՀ-ները պահպանել են երեք ժամը մեկ հավաքագրված միջանկյալ արդյունքները հանրությանը ներկայացնելու համար փակցնելու պահանջը: ԸԴԱ դիտորդները աղյուսակավորման գործընթացին միջամտությունների դեպքերի մասին չեն հաղորդել: Հակառակ տեղամասային հանձնաժողովների՝ վստահված անձինք ներկա էին դիտարկված ընտրատարածքային հանձնաժողովներից միայն 13-ում: ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից ստացված և ուսումնասիրված 68 ՏԸՀ արձանագրություններից 39-ում շեղումներ կային, այդ թվում՝ 11 արձանագրություններ, որտեղ անհամապատասխանություններ կային մրցակիցներին

կողմ քվեարկված ձայների թվում՝ համեմատած ԸԸՀ-ում տվյալների մուտքագրման ժամանակ գրանցված տվյալի հետ: Սա ցույց է տալիս, որ ՏԸՀ և ԸԸՀ անդամների վերապատրաստումների առավել մեծ կարիք կա:

ԿԸՀ-ն պետք է ընդլայնի իր կողմից ստորին օղակի հանձնաժողովների անդամների վերապատրաստումներն արդյունքների արձանագրությունների առումով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՏԸՀ անդամների կողմից ձայների հաշվարկի և արձանագրությունների լրացման և ԸԸՀ անդամների կողմից տվյալների մուտքագրման գործընթացին: Պետք է դիտարկել ԿԸՀ վերապատրաստումներին մասնակցությունը պարտադիր դարձնելը, հատկապես ՏԸՀ նախագահների և քարտուղարների համար:

Ընտրությունների օրը ԿԸՀ-ն գրանցեց 27 խախտումների մասին հաղորդում, որոնցից շատերը հաստատվեցին ԿԸՀ-ի կողմից: Դրանց թվում կային ընտրողների ուղղորդման փորձերի և վստահված անձանց կողմից միջամտության դեպքեր: Դատախազությունը հայտարարեց, որ ստացել է քվեարկության ընթացքում տեղի ունեցած խախտումների մասին 319 հաղորդում, որոնցից 79-ը՝ քվեարկությանը խոչընդոտելու, 89-ը՝ բազմակի կամ այլ անձի փոխարեն քվեարկության, 49-ը՝ քվեարկության գաղտնիության խախտման և 69-ը՝ ընտրակաշառքի դեպքերի առնչությամբ: Բուն ընտրությունների օրը հարուցվել է վեց քրեական գործ:[111] Ի հավելումն նշվածի՝ ոստիկանությունը հայտարարել է, որ ստացել է 87 հաղորդում:

XIV. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Օրենքի համաձայն՝ հունիսի 22-ին ԿԸՀ-ն հայտարարեց և հրապարակեց ընտրությունների արդյունքներն ըստ տեղամասերի: 16 ԸԸՀ-ներում հունիսի 22-ից 25-ը տեղի ունեցան ընդհանուր թվով 83 ձայների վերահաշվարկներ: Ձայների վերահաշվարկի ընթացքում ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի այցելած համարյա բոլոր ԸԸՀ-ները բաց և համագործակցային էին:[112] ԸԴԱ-ի կողմից դիտարկված վերահաշվարկները կատարվել են մասնագիտորեն և թափանցիկ կերպով:[113] Բոլոր վերահաշվարկների ցուցակներն ու արդյունքները հրապարակվել են ԿԸՀ կայքում հունիսի 29-ին: Չորս վերահաշվարկի պաշտոնական դիմում է ստացվել իրավասու սուբյեկտների կողմից:[114] Թեև մի քանի վերահաշվարկ կատարվել է տեղական դիտորդների և կուսակցությունների դիմումների հիման վրա, մեծ մասը կատարվել է ԸԸՀ-ների կողմից սեփական նախաձեռնությամբ՝ խախտումների պնդումների կամ ՏԸՀ արձանագրություններում շեղումների մասին մտահոգությունների հիմքով: Այդ նախաձեռնությունները նպաստել են ընտրությունների արդյունքների նկատմամբ վստահության մակարդակի բարձրացմանը:

---

111 Վերեւք կուսակցության մեկ թեկնածու ձերբակալվեց տեղամասային կենտրոնում տեսախցիկի բացակայության պատճառով տեղի ունեցած վիճաբանության արդյունքում, որի հետևանքով թեկնածուի որդին կրակել էր գազային ատրճանակից:

112 Մի ԸԸՀ-ի նախագահ սխալմամբ ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդներին ասել էր, որ ԸԸՀ-ում վերահաշվարկ չի կատարվում:

113 11-րդ ԸԸՀ-ի նախագահը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդներին մի քանի անգամ ասաց, որ իրենց մոտ ոչ մի վերահաշվարկ չի կատարվում, իսկ այնուհետև բացատրեց, որ իրենից չէր պահանջվում դիտորդներին տեղյակ պահել, քանի որ վերահաշվարկի պաշտոնական դիմում չէր եղել:

114 Օրենքի համաձայն՝ վերահաշվարկներ կարող են պահանջվել ՏԸՀ անդամի կողմից, եթե նա հատուկ կարծիք ունենալու մասին գրառում է արել արձանագրության մեջ, կամ կուսակցության կողմից, որի վստահված անձը ներկա է գտնվել ձայների հաշվարկին:

Վերահաշվարկների մեծ մասի արդյունքում հայտնաբերվել են կամ չնչին շեղումներ, կամ որևէ փոփոխություն չի կատարվել: Ընտրությունների արդյունքներում կատարված ուղղումների մեծ մասը աննշան էին՝ բացառությամբ հինգ տեսամասային կենտրոնների:[115] Վերահաշվարկները չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա: Ընտրությունների վերջնական արդյունքները հայտարարվեցին և հրապարակվեցին ԿԸՀ կողմից հունիսի 27-ին՝ օրենքի պահանջին համապատասխան:

Վարչական դատարանը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ քվեարկության արդյունքների հետ կապված բողոքներ չի ստացել: Թեև ԿԸՀ-ն 18 դիմումներ և բողոքներ էր ստացել ընտրությունների օրվանից հետո,[116] այդ թվում՝ չորս վերահաշվարկի դիմում,[117] դիմումատուներից ոչ մեկը չէր պահանջում որևէ կոնկրետ տեղամասային կենտրոնում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչել: Միևնույն ժամանակ, ԿԸՀ-ն չորս բողոք էր ստացել, որով պահանջվում էր անվավեր ճանաչել ընտրությունների ընդհանուր արդյունքները: Բողոքներից մեկը մերժվեց օրենքով սահմանված ժամկետներից դուրս ներկայացված լինելու հիմքով, մյուս երեք բողոքներում վկայակոչվում էին տարբեր ընտրախախտումներ, որոնք ենթադրաբար տեղի էին ունցել ընտրական գործընթացի ընթացքում: Ըստ դիմումատուների՝ բոլոր առերևույթ խախտումները միասին վերցված խախտել էին ազատ և հավասար ընտրական իրավունքի իրացումը: ԿԸՀ-ն քննեց բողոքները և գտավ, որ ընտրությունների նախապատրաստական փուլում և ընտրությունների օրը այնպիսի խախտումներ չէին կատարվել, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ընտրությունների օրվանից հետո ութ ընդդիմադիր կուսակցություններ և դաշինքներ հայտարարեցին, որ չեն ընդունում ընտրությունների արդյունքները, սակայն բոլորն էլ ձեռնպահ մնացին իրենց աջակիցներին փողոցային պայքարի կոչ անելուց:[118] Պատիվ ունեմ դաշինքը, ի հավելումն նշվածի, պնդեց, որ իր թեկնածուներից չորսի կալանավորումը ընտրակաշառքի մեղադրանքով կատարվել էր օրենքով սահմանված կարգի խախտմամբ, իսկ Հայաստան դաշինքը պնդեց, որ «200,000 քվեներ կասկածելի են»:[119]

Միայն ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքները կարող են Սահմանադրական դատարան բողոքարկել ընտրությունների վերջնական արդյունքները, որն էլ դիմումի ներկայացման պահից ունի 15 օր այն լուծելու համար: Հուլիսի 2-ին Հայաստան և «Պատիվ ունեմ» դաշինքները, «Հայոց Հայրենիք» և «Զարթոնք» կուսակցությունները հայցեր ներկայացրին Սահմանադրական Դատարան՝ վիճարկելով ընտրությունների վերջնական արդյունքների մասին ԿԸՀ որոշումը:

---

115 Հինգ տեղամասային կենտրոնների դեպքում 90-ից360 ուղղում ր կատարվել ի օգուտ կամ Հայաստան, կամ Պատիվ ունեմ դաշինքի: Ըստ ԿԸՀ-ի՝ ՏԸՀ անդամների դեմ Գլխավոր դատախազություն երկու բողոք էր ներկայացվել մինչև հունիսի 29-ը: Օրենքն արգելում է ընտրական հանցանքների համար դատապարտված անձանց ՏԸՀ անդամ նշանակելը:

116 Բողոքների մեծ մասը առնչվում էին տեղամասային կենտրոննում տեղի ունեցած խախտումների:

117 Այլ վերահաշվարկներ ևս իրականացվել են *ի պաշտոնե* կամ տեղական դիտորդների դիմումների հիման վրա:

118 Հայաստան դաշինքը, Պատիվ ունեմ դաշինքը, Ազատ հայրենիք դաշինքը, Ազգային ժողովրդավարական բևեռը, Դեմոկրատական կուսակցությունը, Հայոց Հայրենիք կուսակցությունը, Զարթոնք կուսակցությունը և 5165 կուսակցությունն այդ կապակցությամբ հանդես եկան հայտարարություններով:

119 Հայաստան դաշինքի ցուցակի թիվ մեկ թեկնածու Ռոբերտ Քոչարյանը՝ հունիսի 29-ին կայացած դաշինքի անդամների և փոխկապակցված անձանց հետ հանդիպման ընթացքում ունեցած ելույթի ժամանակ:

Բոլոր դիմումատուները պնդում էին, որ ընտրական գործընթացը խաթարվել էր տարբեր խախտումների պատճառով, որոնք ազդել էին ընտրությունների արդյունքների վրա: Թվարկված խախտումների թվում դիմումատուները նշում էին Ն. Փաշինյանի կողմից վարչապետի պաշտոնը զբաղեցնելու հակասահմանադրականությունը, իշխող կուսակցության կողմից վարչական ռեսուրսի չարաշահումն ու քարոզարշավի ընթացքում սադրիչ հռետորաբանության օգտագործումը, ընտրողների ցուցակների անճշտությունները, ինչպես նաև բուն ընտրությունների օրը տեղի ունեցած խախտումները: Հուլիսի 17-ին Սահմանադրական դատարանը մերժեց դիմումները և ուժի մեջ թողեց ԿԸՀ որոշումը ընտրությունների արդյունքների մասին: Սահմանադրական Դատարանը գտավ, որ ընտրությունների ընթացքում տեղի էին ունեցել առերևույթ մի շարք խախտումներ, որոնք հաստատվել էին իրավասու մարմինների կողմից, և, որտեղ հնարավոր, էր ձեռնարկվել էին միջոցներ,[120] սակայն դատարանի կարծիքով նման խախտումները առանձին դեպքեր էին և չէին կարող ազդել ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա: Դատարանը նաև նշեց, որ շատ դեպքերում տեղի ունեցած խախտումները չէին կարող վերագրվել միայն մեկ քաղաքական ուժի:[121]

XV. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն հանձնարարականները, որոնք ներառված են ամբողջ տեքստում, ներկայացվում են ի աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների անցկացումը բարելավելու և դրանք ԵԱՀԿ կողմիցստանձնած հանձնառությունների և ժողովրդավարական ընտրությունների միջազգային այլ պարտավորությունների ու չափանիշերի հետ լիարժեք կերպով ներդաշնակեցնելու ջանքերին: Սույն հանձնարարականները պետք է ընթերցվեն նախկին՝ դեռևս չկատարված, ԺՀՄԻԳ հանձնարարականների հետ համատեղ:[122] ԺՀՄԻԳ-ը պատրաստակամություն է հայտնում աջակցել Հայաստանի իշխանություններին ընտրական գործընթացի հետագա բարելավման, և սույն ու նախկին զեկույցներում ներկայացված հանձնարարականների կյանքի կոչման գործում:

A. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

---

120 Վարչական դատարանը որոշումներ էր ընդունել վարչական ռեսուրսի չարաշահման և քարոզարշավի կանոնների խախտումների վերաբերյալ, և մի քանի քրեական գործ էր հարուցվել Գլխավոր դատախազության կողմից:

121 Դատարանը գտավ, որ «անթույլատրելիորեն ցածր մշակութային և հանրային՝ բարոյական տեսանկյունից դատապարտելի արտահայտությունների գործելաոճը չի կարող վերագրվել միայն մեկ քաղաքական ուժի եւ դրա ներկայացուցչի: Այն առկա է եղել մրցակցող մի շարք քաղաքական ուժերի եւ դրանց ներկայացուցիչների հրապարակային խոսքում՝ ցավալիորեն դառնալով Հայաստանում քաղաքական խոսքի մշտական բաղադրիչ:»

122 Համաձայն 1999թ. ԵԱՀԿ Ստամբուլյան փաստաթղթի 25-րդ պարբերության՝ ԵԱՀԿ մասնակից պետությունները պարտավորվում են «արագ արձագանքել ԺՀՄԻԳ-ի ընտրական հարցերում գնահատականներին ու հանձնարարականներին»: Նախկին հանձնարարականների կատարումը ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից գնահատվում է հետևյալ կերպ. 2018թ. Արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցի թիվ 17 հանձնարարականն ամբողջությամբ կատարված է: 2018թ. Արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցի ոչ մի հանձնարարական իր գերակշիռ մասով կատարված չէ: 2018թ. Արտահերթ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցի թիվ 1, 2, 5, 6, 7, 8, 10 և 14 հանձնարարականները կատարված են մասամբ: Տե՛ս նաև՝ ԺՀՄԻԳ ընտրական հանձնարարականների շտեմարան:

1. Իրավական որոշակիություն ապահովելու համար, ընտրությունների իրավական կարգավորումներում փոփոխություններ պետք է կատարվեն ընտրությունների անցկացումից բավականաչափ ժամանակ առաջ՝ ներառական գործընթացի միջոցով: Օրենսդրական փոփոխությունների և դրանց կիրարկման միջև ընկած ժամկետները պետք է թույլ տան իրականացնել ընտրողների բավարար ուսուցում, իսկ ընտրական գործընթացի շահառուներին՝ կիրառելի կանոնակարգումներին ծանոթանալու հնարավորություն:

2. Ընտրական ընթացակարգերի վերաբերյալ բոլոր կանոններն ու պարզաբանումները, այդ թվում՝ քվեաթերթիկների վավերությունը, քվեատուփերի կնքումը և ձայների հաշվարկն ու աղյուսակավորումը՝ ներառյալ շրջիկ արկղով քվեարկվածները, պետք է լինեն համապարփակ, ընդունվեն ԿԸՀ պաշտոնական նիստերում և կիրարկվեն միատեսակ կերպով:

3. Միջազգային չափանիշերին համահունչ ընտրական հավասար ընտրական իրավունքի ապահովման համար մտավոր հաշմանդամության հիմքով ընտրելու իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:

4. Վարչական ռեսուրսի չարաշահման մասին օրենքներն ու կանոնակարգերը պետք է առավել մանրամասն մշակվեն, արժանահավատ հաղորդումները պետք է պատշաճ կերպով հետաքննվեն և պետք է սահմանվեն պատշաճ, համարժեք և զսպող պատժամիջոցներ:

5. Հանրային պաշտոնատար անձինք, քաղաքական կուսակցությունները, նրանց թեկնածուներն ու աջակիցները պետք է ձեռնպահ մնան սադրիչ հռետորաբանություն օգտագործելուց: Պետք է ներդրվեն հստակ սահմանված ապաքրեական զսպող միջոցներ՝ միաժամանակ հարգելով խոսքի ազատությունը:

6. ԿԸՀ-ն պետք է կանոնավոր կերպով և համապատասխան ժամկետների պահպանմամբ իր կայքում հրապարակի ԸԸՀ նիստերի օրացույցը, բոլոր ԸԸՀ որոշումները, և ստորագրված ԸԸՀ արդյունքների արձանագրությունները՝ ըստ առանձին տեղամասերի արդյունքների: Բացի այդ, հանրային հետաքրքրություն ներկայացնող ամբողջ տեղեկատվությունն ու բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ նախնական արդյունքների արձանագրությունները և նախնական ընտրացուցակները, պետք է մնան հասանելի առցանց:

7. Հանրային լրատվամիջոցների խմբագրական անկախությունը և քաղաքացիների համար անաչառ, քննադատական և վերլուծական քաղաքական ծրագրերի հասանելությունը պետք է առավել խթանվեն: Այս առումով կարելի է դիտարկել հանրային լրատվամիջոցների կողմից ընտրությունների անաչառ լուսաբանման պահանջների տարածումը ամբողջ ընտրական ցիկլի վրա: Դա նաև ներառում է հանրային և պետական պաշտոնատար անձանց գործունեության ոչ նախապատվային լուսաբանում պաշտոնական քարոզարշավի ժամկետներից դուրս:

8. Ընտրական օրենսգրքին համապատասխան, և քարոզարշավի ընթացքում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով, ԿԸՀ-ն պետք է քարոզարշավի ընթացքում տեղ գտած վարչական ռեսուրսի առերևույթ չարաշահման դեպքերը դիտարկի որպես իր իրավասությունների մաս և, կարիք եղած դեպքում, կիրառի ընտրական և վարչական պատժամիջոցներ, ինչպես օրինակ՝ նախազգուշացումներ և տուգանքներ:

9. Ընտրական գործընթացի նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով մեծ ջանքեր են անհրաժեշտ ընտրակաշառքի կիրառման ու ընտրողների վրա ճնշումների դեպքերին արձագանքելու համար՝ ինչպես քաղաքացիական իրազեկման արշավների, այնպես էլ հետաքննությունների ու քրեական հետապնդումների միջոցով:, Ճնշումների և ընտրակաշառքի դեպքերի մասին հաղորդումը ապահովելու համար, արդեն իսկ առկա անանուն ահազանգումների տարբերակները պետք է միավորվեն և գործեն որպես առանձին կառուցակարգ՝ գործարկվելով վստահելի կազմակերպության կողմից: Ավելին, ընտրողների վրա ճնշումների և ձայների գնման դեմ համարժեք պատժամիջոցները պետք է հետագայում սահմանվեն օրենքով:

10. ԱՎՎ-ն պետք է պարբերական և մանրամասն տեղեկություններ հրապարակի կատարված թարմացումների և ուղղումների տեսակի ու թվի վերաբերյալ՝ այդ թվում՝ նոր ներառված և մահացած ընտրողների մասին:

B. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Ընտրությունների վարչարարություն

11. Պետք է դիտարկել լրացուցիչ միջոցների ներդրումը հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրական գործընթացներին մասնակցությունը խթանելու համար:

12. Ընտրական վարչարարության մարմինների և ընտրական գործառնությունների արհեստավարժությունն ու ազնվությունը բարձրացնելու նպատակով ԿԸՀ-ն պետք է դիտարկի ՏԸՀ նախագահների և քարտուղարների նկատմամբ նվազագույն որակավորման չափանիշների կիրառումը և ապահովի կուսակցությունների կողմից առաջադրված հանձնաժողովների բոլոր անդամների բավարար վերապատրաստումը: Խորհրդարանական խմբերն ու կուսակցությունները պետք է դիտարկեն առավել որակավորված թեկնածուներին առաջնահերթության տրամադրումը:

13. Միջազգային չափանիշերին համապատասխան՝ պետական մարմինները, ինչպես օրինակ ԿԸՀ-ն և ԱՎՎ-ն, պետք է տրամադրեն ընտրական գործընթացներում սեռային բաշխվածության մասին տվյալներ՝ ներառյալ նախնական և վերջնական ընտրացուցակներում գրանցված ընտրողների, ստորին օղակի ընտրական հանձնաժողովների կազմի, ընտրացուցակներում ընդգրկված թեկնածուների քանակի և ընտրությունների մասնակցության մասին:

Ընտրողների գրանցում

14. Ընտրողների ցուցակներին պատշաճ մուտք ապահովելով հանդերձ՝ պետք է դիտարկել ընտրողների տվյալների պաշտպանության և մասնակցության գաղտնիության երաշխավորման հնարավորությունը՝ այդ թվում՝ գաղտնիության միջոցների կիրառմամբ:

Թեկնածուների գրանցում

15. Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց ընտրվելու իրավունքի սահմանափակումները պետք է վերանայվեն, և այդ առնչությամբ քրեականացումը պետք է վերացվի:

Քարոզարշավի ֆինանսավորում

16. Ինչպես նախկինում նշվել է ԺՀՄԻԳ հանձնարարականներում, իրավական դաշտը պետք է փոփոխվի՝ սահմանելով բոլոր քարոզարշավային ծախսերի և մուտքերի հայտարարագրում և հաշվառում՝ ներառյալ կազմակերպչական և նախքան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը կատարված ծախսերը, իսկ քարոզարշավի ֆինանսավորման վերստուգիչ լիազորություն ունեցող կազմակերպությունները պետք է օժտվեն իրենց պարտականությունները կատարելու համար բավարար ռեսուրսներով:

ԶԼՄ

17. ԶԼՄ սեփականության լիարժեք թափանցիկությունն ապահովելու համար պետք է ձեռնարկվեն օրենսդրական միջոցներ՝ սահմանելու, որ լրատվամիջոցների սեփականատերերի մասին ամբողջ տեղեկատվությունը բացահայտվի հանրության համար, իսկ այդպիսի բացահայտումը պետք է պարտադրված լինի օրենքով:

18. Կարելի է դիտարկել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կարողությունների ամրապնդումը՝ քաղաքական լուսաբանման լիարժեք և անկախ մեդիա մշտադիտարկում իրականացնելու համար, այդ թվում՝ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Հանձնաժողովը պետք է իրականացնի իր՝ կանոնավոր կերպով այդպիսի մշտադիտարկում իրականացնելու օրենքով սահմանված իրավունքը, քաղաքական ծրագրերի բազմազանությունն ապահովելու նպատակով:

Դիմումներ և բողոքներ

19. Նախընտրական բողոքների քննման օրենքով սահմանված ժամկետները պետք է հարմարեցվեն ընտրական ժամկետներին համապատասխան՝ երաշխավորելու դատական որոշումների պատեհաժամ կատարումն ու ընտրախախտումների դեմ արդյունավետ միջոցների կիրառումը:

20. Դատարաններն ու այլ վճռահատող մարմինները պետք է օրենքները, այդ թվում՝ Ընտրական օրենսգիրքը, կիրառեն միատեսակ և հետևողական կերպով: Այդ նպատակով ցանկալի կլիներ կազմակերպել վերապատրաստումներ և փորձի փոխանակումներ:

Տեղական և միջազգային դիտորդներ

21. Ինչպես նշվել է նախկին հանձնարարականներից մեկում, նորաստեղծ կազմակերպությունների դիտորդական հավատարմագրումն արգելող դրույթը պետք է վերանայվի:

Ընտրությունների օր

22. Հանրային իշխանությունները պետք է, հնարավորության դեպքում, հաշվի առնեն ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար առավել մեծ հասանելիության հնարավորությունը տեղամասային կենտրոնների տարածքներ ընտրելիս: Իշխանությունները կարող են նաև դիտարկել տեղամասային կենտրոնի տարածքի նվազագույն չափի սահմանում՝ կուտակումներից խուսափելու համար: Կարելի է դիտարկել ԸԸՀ-ներին տեղամասային կենտրոններ ընտրելու գործընթացում ներգրավելը:

23. ԿԸՀ-ն պետք է ընդլայնի ընտրողների ուսուցումը ընտրական ընթացակարգերի մասով՝ ներառյալ աջակցված քվեարկության, խմբակային քվեարկությունների կանխման և քվեարկության գաղտնիության կարևորության վերաբերյալ:

24. ԿԸՀ-ն պետք է ընդլայնի իր կողմից ստորին օղակի հանձնաժողովների անդամների վերապատրաստումը արդյունքների արձանագրությունների առումով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՏԸՀ անդամների կողմից ձայների հաշվարկի և արձանագրությունների լրացման և ԸԸՀ անդամների կողմից տվյալների մուտքագրման գործընթացին: Պետք է դիտարկել ԿԸՀ վերապատրաստումներին մասնակցությունը պարտադիր դարձնելը, հատկապես ՏԸՀ նախագահների և քարտուղարների համար:

ՀԱՎԵԼՎԱԾ I – ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գրանցված ընտրողների ընդհանուր թիվ	2,595,512
Քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվ	1,281,997
Մասնակցություն	*49.4%*
Անվավեր քվեաթերթիկների թիվ	4,593
Շրջիկ արկղով քվեարկության քվեների թիվ	2,451
Արտերկրից էլեկտրոնային եղանակով քվեարկության քվեների թիվ	500

Կուսակցություն / դաշինք	Ստացած քվեների թիվը	Ստացած քվեների տոկոսային արտահայտությունը	Հիմնական մանդատներ	Փոքրամասնությունների մանդատներ	Լրացուցիչ մանդատներ	Մանդատների ընդհանուր թիվ	Մանդատներ՝ տոկոսային արտահայտությամբ
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	688,761	53.9%	68	3		71	66%
Հայաստան դաշինք	269,481	21.1%	26	1	2	29	27%
«Պատիվ ունեմ» դաշինք	66,650	5.2%	7			7	7%
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	50,444	4.0%					
«Հանրապետություն» կուսակցություն	38,758	3.0%					
«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	19,691	1.5%					
«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք»	19,212	1.5%					
«Ազգային - ժողովրդավարական բևեռ» կուսակցություն	18,976	1.5%					
Լուսավոր Հայաստան կուսակցություն	15,591	1.2%					
«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	15,549	1.2%					
Ազատական կուսակցություն	14,936	1.2%					

«Հայոց Հայրենիք» կուսակցություն	13,130	1.0%					
Մեր տունը Հայաստանն է կուսակցություն	12,149	1.0%					
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	5,020	0.4%					
«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	4,619	0.4%					
Ազատ Հայրենիք դաշինք	4,119	0.3%					
«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	3,915	0.3%					
«Արդար Հայաստան» կուսակցություն	3,914	0.3%					
«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	3,775	0.3%					
Հայաստանի եվրոպական կուսակցություն	2,440	0.2%					
Ազատություն կուսակցություն	1,844	0.1%					
Վերելք կուսակցություն	1,233	0.1%					
Միասնական հայրենիք կուսակցություն	964	0.1%					
Համահայկական ազգային պետականություն կուսակցություն	803	0.1%					
«Ազգային օրակարգ» կուսակցություն	719	0.1%					
ԸՆԴԱՄԵՆԸ՝	**1,276,693**	100.0%	101	4	2	**107**	100%

Աղբյուր՝ *ԿԸՀ ԱԺ ընտրությունների քվեարկության արդյունքների արձանագրություն*

ՀԱՎԵԼՎԱԾ II: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով

Margareta	Cederfelt	Հատուկ համակարգող	Շվեդիա
Kari	Henriksen	Պատվիրակության ղեկավար	Նորվեգիա
Ditmir	Bushati		Ալբանիա
Elona	Hoxha		Ալբանիա
Harald	Troch		Ալբանիա
Reinhold	Lopatka		Ավստրիա
Katerina	Kosarikova		Չեխիայի Հանրապետություն
Jan	Hornik		Չեխիայի Հանրապետություն
Jan	Zaloudik		Չեխիայի Հանրապետություն
Karla	Marikova		Չեխիայի Հանրապետություն
Pavel	Plzak		Չեխիայի Հանրապետություն
Josef	Hajek		Չեխիայի Հանրապետություն
Silvia	Andrisova		Չեխիայի Հանրապետություն
Lars Aslan	Rasmussen		Դանիա
Heljo	Pikhof		Էստոնիա
Anti	Poolamets		Էստոնիա
Vilhelm	Junnila		Ֆինլանդիա
Tom	Packalen		Ֆինլանդիա
Sereine	Mauborgne		Ֆրանսիա
Nikoloz	Samkharadze		Վրաստան
Tim	Knoblau		Գերմանիա
Paul Viktor	Podolay		Գերմանիա
Christoph	Neumann		Գերմանիա
Andreas	Schwarz		Գերմանիա
Daniela	De Ridder		Գերմանիա
Jürgen	Martens		Գերմանիա
Luigi	Augussori		Իտալիա
Francesco	Mollame		Իտալիա
Paolo	Grimoldi		Իտալիա
Mauro	Del Barba		Իտալիա
Vito	Vattuone		Իտալիա
Paola	Taverna		Իտալիա
Giuseppe	Trezza		Իտալիա
Gumar	Dyussembayev		Ղազախստան
Aurelijus	Veryga		Լիտվա
Vilija	Targamadze		Լիտվա
Tomas	Tomilinas		Լիտվա
Milda	Zviniene		Լիտվա
Charles Romain	Margue		Լյուքսեմբուրգ

Robert	Kwiatkowski	Լեհաստան
Radoslaw	Fogiel	Լեհաստան
Agnieszka	Soin	Լեհաստան
Agnieszka	Pomaska	Լեհաստան
Dariusz	Rosati	Լեհաստան
Antonio	Maló De Abreu	Պորտուգալիա
Alexandra	Tavares De Moura	Պորտուգալիա
Gábor	Hajdu	Ռումինիա
Alexandru	Kocsis-Cristea	Ռումինիա
Costel Neculai	Dunava	Ռումինիա
Marius-Andrei	Miftode	Ռումինիա
Elena-Ruxandra	Cazacu	Ռումինիա
Lucian	Romascanu	Ռումինիա
Cătălin-Daniel	Fenechiu	Ռումինիա
Vadim	Dengin	Ռուսաստանի Դաշնություն
Maria	Zholobova	Ռուսաստանի Դաշնություն
Michele	Muratori	Սան Մարինո
Marta	Rosique Saltor	Իսպանիա
Fredrik	Svensson	Շվեդիա
Simona	De Ciutiis	Շվեդիա
Ardina	Gerkens	Նիդերլանդներ
Farah	Karimi	Նիդերլանդներ
Pavlo	Frolov	Ուկրաինա
Vadym	Halaichuk	Ուկրաինա
Volodymyr	Voronov	Ուկրաինա
Yaroslav	Yurchyshyn	Ուկրաինա
Janice	Helwig	ԱՄՆ
Stephanie	Koltchanov	Ֆրանսիա
Roberto	Montella	Իտալիա
Freyja	Koci	Գերմանիա
Sophie	Jackson	Իռլանդիա
Roberto	Ferrari	Իտալիա
Daria	Boyarskaya	Ռուսաստանի Դաշնություն

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով

Georgios	Katrougkalos	Պատվիրակության ղեկավար	Հունաստան
George-Louis	Bouchez		Բելգիա
Ivi-Triin	Odrats		Էստոնիա
Gael	Martin-Micallef		Ֆրանսիա
Alexandra	Louis		Ֆրանսիա
Ulrich	Oehme		Գերմանիա
Franck	Heinrich		Գերմանիա
Christian	Petry		Գերմանիա
Bela	Bach		Գերմանիա

Richard	Barrett	Իռլանդիա
Francesco	Scoma	Իտալիա
Catia	Polidori	Իտալիա
Alberto	Ribolla	Իտալիա
Arminas	Lydeka	Լիտվա
Arkadiusz	Mularczyk	Լեհաստան
Paulo	Pisco	Պորտուգալիա
Luis	Leite Ramos	Պորտուգալիա
Bogdan	Torcatoriu	Ռումինիա
Gerardo	Giovagnoli	Սան Մարինո
Sibel	Arslan	Շվեյցարիա
Olivier	Francais	Շվեյցարիա

ԺՀՄԻԳ ԸԴԱ կարճաժամկետ դիտորդներ

Radovan	Bouska	Չեխիայի Հանրապետություն
Jan	Šotola	Չեխիայի Հանրապետություն
Josef	Orisko	Չեխիայի Հանրապետություն
Petr	Franc	Չեխիայի Հանրապետություն
Petr	Piruncik	Չեխիայի Հանրապետություն
Aneta	Subrtova	Չեխիայի Հանրապետություն
Dan	Macek	Չեխիայի Հանրապետություն
Pavel	Neuberg	Չեխիայի Հանրապետություն
Olga	Nezmeskalova	Չեխիայի Հանրապետություն
Jan	Plesinger	Չեխիայի Հանրապետություն
Merete	Laubjerg	Դանիա
Lise	Thorsen	Դանիա
Silja	Kasmann	Էստոնիա
Kirsti	Narinen	Ֆինլանդիա
Maiwenn	Ratinet	Ֆրանսիա
Emilie	Brückmann	Ֆրանսիա
Rémi	Pellerin	Ֆրանսիա
Arthur	Langlois	Ֆրանսիա
Virginie	Thiollet	Ֆրանսիա
Khalil	Zerargui	Ֆրանսիա
Damien	Hentry	Ֆրանսիա
Julien	Arnoult	Ֆրանսիա
Philippe	Dardant	Ֆրանսիա
Stephanie	Marsal	Ֆրանսիա
Zsuzsanna	Nagy	Ֆրանսիա
Hubert-Félix	Delattre	Ֆրանսիա
Clément	Mondamert-Chartron	Ֆրանսիա
Diane	Jeremic	Ֆրանսիա
Nadia	Yakhlaf-Lallemand	Ֆրանսիա
Véronique	Lasserre-Fy	Ֆրանսիա
Ambroise	Mazal	Ֆրանսիա

Thomas	Nadjar	Ֆրանսիա
Sabine	Ohayon	Ֆրանսիա
Vladimir	Bozhadze	Վրաստան
Kristina	Tolordava	Վրաստան
Gesa	Karrenbrock	Գերմանիա
Kim	Grundbacher	Գերմանիա
Stefan	Schneck	Գերմանիա
Maxim	Menschenin	Գերմանիա
Benedict	Göbel	Գերմանիա
Hildegard	Rogler-Mochel	Գերմանիա
Maria	Papamikhail	Հունաստան
Riccardo	De Mutiis	Իտալիա
Francesca	Chessa	Իտալիա
Valeria	Aldighieri	Իտալիա
Taiki	Kohno	Ճապոնիա
Rika	Onodera	Ճապոնիա
Galymzhan	Zhalmurzayev	Ղրղզստան
Ulan	Murzaev	Ղրղզստան
Kanyshai	Mamytova	Ղրղզստան
Romante	Silyte	Լիտվա
Jonas	Mensonas	Լիտվա
Mindaugas	Nakvosas	Լիտվա
Mindaugas	Genys	Լիտվա
Egle	Mazele	Լիտվա
Martynas	Barkauskas	Լիտվա
Gabija	Lukšaitė	Լիտվա
Indrė	Vileitė	Լիտվա
Gediminas	Dapkevicius	Լիտվա
Paulius	Narvydas	Լիտվա
Ieva	Baubinaite	Լիտվա
Mindaugas	Skačkauskas	Լիտվա
Cornelis	Ros	Նիդերլանդներ
Sellina	Van Bruggen	Նիդերլանդներ
Esther	Van Den Heuvel	Նիդերլանդներ
Alena	Gudkova	Նիդերլանդներ
George	Monsanto	Նիդերլանդներ
Turid	Polfus	Նորվեգիա
Nina	Wessel	Նորվեգիա
Seim	Øyvind	Նորվեգիա
Carl	Petersen	Նորվեգիա
Paulina	Pielech	Լեհաստան
Igor	Pronobis	Լեհաստան
Kaja	Krawczyk	Լեհաստան
Ewa	Polak	Լեհաստան
Halszka	Lachowicz	Լեհաստան
Łukasz	Żygadło	Լեհաստան

Agnieszka	Żygas	Լեհաստան
Natalia	Andreeva	Լեհաստան
Michal	Grodzki	Լեհաստան
Anna	Pogwizd	Լեհաստան
Jakub	Pieńkowski	Լեհաստան
Radoslaw	Sadowski	Լեհաստան
Regina	Jurkowska	Լեհաստան
Mateusz	Bajek	Լեհաստան
Weronika	Garbacz	Լեհաստան
Krzysztof	Wasowski	Լեհաստան
Filipe	Patricio	Պորտուգալիա
Sergei	Chashchikhin	Ռուսաստանի Դաշնություն
Ivan	Zavorin	Ռուսաստանի Դաշնություն
Platon	Ratskevich	Ռուսաստանի Դաշնություն
Vsevolod	Perevozchikov	Ռուսաստանի Դաշնություն
Elizaveta	Borisova	Ռուսաստանի Դաշնություն
Alexander	Vladychenko	Ռուսաստանի Դաշնություն
Sergey	Baburkin	Ռուսաստանի Դաշնություն
Inna	Romanchenko	Ռուսաստանի Դաշնություն
Sviatoslav	Terentev	Ռուսաստանի Դաշնություն
Vladislav	Korablev	Ռուսաստանի Դաշնություն
Boris	Diakonov	Ռուսաստանի Դաշնություն
Elena	Balandina	Ռուսաստանի Դաշնություն
Oksana	Pekusheva	Ռուսաստանի Դաշնություն
Artem	Toporkov	Ռուսաստանի Դաշնություն
Ivan	Glushko	Ռուսաստանի Դաշնություն
Olga	Karsanova	Ռուսաստանի Դաշնություն
Dmitry	Bondarets	Ռուսաստանի Դաշնություն
Dmitry	Verchenko	Ռուսաստանի Դաշնություն
Mikhail	Shurgalin	Ռուսաստանի Դաշնություն
Lars	Bjorklund	Ռուսաստանի Դաշնություն
Peter	De Haan	Ռուսաստանի Դաշնություն
Karina	Bagieva	Ռուսաստանի Դաշնություն
Aleksandr	Savinov	Ռուսաստանի Դաշնություն
Andrei	Borodin	Ռուսաստանի Դաշնություն
Roman	Korolev	Ռուսաստանի Դաշնություն
Sergey	Paltov	Ռուսաստանի Դաշնություն
Ilya	Chernyshev	Ռուսաստանի Դաշնություն
Anna	Gozhina	Ռուսաստանի Դաշնություն
Dmitry	Makarov	Ռուսաստանի Դաշնություն
Anna	Makarenkova	Ռուսաստանի Դաշնություն
Andrey	Ostvald	Ռուսաստանի Դաշնություն
Marina	Borodina	Ռուսաստանի Դաշնություն
Ivan	Minkevich	Ռուսաստանի Դաշնություն
Argo	Avakov	Ռուսաստանի Դաշնություն
Zuzana	Sorocinova	Սլովակիա

Augusto	Delkader Palacios	Իսպանիա
Carmen	Claudin Urondo	Իսպանիա
Eduardo	Ramos Suárez	Իսպանիա
Maria Amparo	Tortosa-Garrigos	Իսպանիա
Sandra	Gutierrez Hernandez	Իսպանիա
María	Romero Pardo	Իսպանիա
Antonio	Alonso Marcos	Իսպանիա
Linda	Cederblad	Շվեդիա
Mats	Ekholm	Շվեդիա
Inga	Sundberg	Շվեդիա
Bernt	Karlsson	Շվեդիա
Åke	Haggren	Շվեդիա
Monica	Green	Շվեդիա
Eric	Fey	Շվեդիա
Erik	Persson	Շվեդիա
Sara	Lindblom	Շվեդիա
Håkan	Nyman	Շվեդիա
Hans	Nareskog	Շվեդիա
Karl	Lindberg	Շվեդիա
Lars	Tollemark	Շվեդիա
Latifa	Gharbi	Շվեդիա
Werner	Thut	Շվեյցարիա
Anina	Weber	Շվեյցարիա
Dara	Erck	Շվեյցարիա
Francine	John	Շվեյցարիա
Martin	Damary	Շվեյցարիա
Robin	Sellers	Միացյալ Թագավորություն
Peter	Hurrell	Միացյալ Թագավորություն
Katherine	Igras	Միացյալ Թագավորություն
Scott	Martin	Միացյալ Թագավորություն
Madeleine	Cowley	Միացյալ Թագավորություն
Ben	Jones	Միացյալ Թագավորություն
Thomas	Barrett	Միացյալ Թագավորություն
Martin	Brooks	Միացյալ Թագավորություն
Robert	Mangham	Միացյալ Թագավորություն
Haris	Sofradzija	ԱՄՆ
Jennifer	Bourguignon	ԱՄՆ
Barbara	Jacksonmcintosh	ԱՄՆ
Timothy	Scott	ԱՄՆ
Rokey	Suleman	ԱՄՆ
Kelly	Beadle	ԱՄՆ
Christopher	Beck	ԱՄՆ
Russell	Raymond	ԱՄՆ
Nabil	Al-Tikriti	ԱՄՆ
Nicholas	La Strada	ԱՄՆ
Azita	Ranjbar	ԱՄՆ

Steven	Fenner	ԱՄՆ
John	Winter	ԱՄՆ
Christopher	Barber	ԱՄՆ
Kathyrne	Harper	ԱՄՆ
Syeda Sameera	Ali	ԱՄՆ
Oiena	Lennon	ԱՄՆ
Jennifer	Plante	ԱՄՆ
Kimberly	Mccabe	ԱՄՆ
Anush	Klimczyk	ԱՄՆ
Polina	Khoreva	ԱՄՆ
Mario	Barfus	ԱՄՆ
Anthony	Barilla	ԱՄՆ
Kevin	Deegan-Krause	ԱՄՆ
Kelly	Clark	ԱՄՆ
Jeffrey	Erlich	ԱՄՆ
Elizabeth	Callahan	ԱՄՆ
Rene	Valdiosera	ԱՄՆ
April	Neubauer	ԱՄՆ
Eda	Matchak	ԱՄՆ
Marie-Celeste	Marcoux	ԱՄՆ
Jenny	Sowry	ԱՄՆ
Deborah	Walker	ԱՄՆ
Emily	Rome	ԱՄՆ
Lisa	Tilney	ԱՄՆ
Kristina	Mitchell	ԱՄՆ
Lauren	Skompinski	ԱՄՆ
Ismail	Amirah	ԱՄՆ
Farkhod	Nasriddinov	Ուզբեկստան
Kamola	Arslanova	Ուզբեկստան
Polina	Pak	Ուզբեկստան

ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդներ

Iryna	Shuliankova	Բելառուս
Patrik	Taufar	Չեխիայի Հանրապետություն
Torsten	Juul	Դանիա
Matti	Heinonen	Ֆինլանդիա
Camille	Forite	Ֆրանսիա
Sylvain	Ollier	Ֆրանսիա
Mariam	Tabatadze	Վրաստան
Ingo	Buettner	Գերմանիա
Susanne	Greiter	Գերմանիա
Noemi	Arcidiacono	Իտալիա
Cristiano	Barale	Իտալիա
Marianne	de Wit	Նիդերլանդներ
Marcia Andrea	Haugedal	Նորվեգիա

Narve	Rio	Նորվեգիա
Kinga	Bacewicz	Լեհաստան
Arkadiusz	Legieć	Լեհաստան
Alexander	Bedritskiy	Ռուսաստանի Դաշնություն
Varvara	Dronova	Ռուսաստանի Դաշնություն
Robert	Hall	Շվեդիա
Ewa	Jacobsson	Շվեդիա
Loïc	Degen	Շվեյցարիա
Stefan	Ziegler	Շվեյցարիա
Mark	Waller	Միացյալ Թագավորություն
Joseph	Worrall	Միացյալ Թագավորություն
Andrew	Gridinsky	ԱՄՆ
Sheila	Jaghab	ԱՄՆ

ԺՀՄԻԳ ԸԴԱ հիմնական թիմ

Eoghan	Murphy	Առաքելության ղեկավար	Իռլանդիա
Caroline	Gonthier		Ֆրանսիա
Stefan	Krause		Գերմանիա
Martin	Kunze		Գերմանիա
László	Belágyi		Հունգարիա
Roman	Railean		Մոլդովա
Tomasz	Jańczy		Լեհաստան
Svetlana	Chetaikina		Ռուսաստանի Դաշնություն
Ruslan	Ovezdurdyyev		Ռուսաստանի Դաշնություն
Jelena	Stefanović		Սերբիա
Ivana	Stanojev		Սերբիա
Ivan	Godársky		Սլովակիա
Max	Bader		Նիդերլանդներ
Yevheniia	Zamrii		Ուկրաինա
Auset	Mitchell		ԱՄՆ

ԺՀՄԻԳ-Ի ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է, որն աջակցում է մասնակից պետություններին «ապահովել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք պահպանումը, համապատասխանել իրավունքի գերակայությանը, խթանել ժողովրդավարական սկզբունքները և (…) կառուցել, ամրապնդել ու պաշտպանել ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև բարձրացնել հասարակության շրջանում հանդուրժողականությունը» (1992թ. Հելսինկյան գագաթնաժողովի փաստաթուղթ): Սա կոչվում է ԵԱՀԿ մարդկային հարթություն:

Վարշավայում (Լեհաստան) տեղակայված ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990թ. Փարիզի գագաթնաժողովում, որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991թ. մայիսից: Մեկ տարի անց գրասենյակի անունը փոխվում է՝ ընդլայնված մանդատը արտացոլելու և մարդու իրավունքներն ու ժողովրդավարացումը ներառելու համար: Այսօր այն ունի ավելի քան 150 աշխատակից:

ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում **ընտրությունների դիտարկման** ոլորտում առաջատար կազմակերպությունն է: Ամեն տարի այն համակարգում և կազմակերպում է հազարավոր դիտորդների գործուղում՝ գնահատելու, թե արդյոք ԵԱՀԿ տարածքում ընտրությունները իրականացվել են ԵԱՀԿ-ի առջև ստանձնած հանձնառություններին, ժողովրդավարական ընտրությունների միջազգային այլ պարտավորություններին ու չափանիշներին և ներպետական օրենսդրությանը համապատասխան: Նրա եզակի մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս խորությամբ ուսումնասիրել ընտրական գործընթացներն իրենց ամբողջության մեջ: Աջակցության ծրագրերի միջոցով ԺՀՄԻԳ-ը օգնում է մասնակից պետություններին բարելավել իրենց ընտրական համակարգերը:

Գրասենյակի **ժողովրդավարացման** գործունեությունն ընդգրկում է իրավունքի գերակայությունը, օրենսդրական աջակցությունը, ժողովրդավարական կառավարումը, միգրացիան ու տեղաշարժման ազատությունը և գենդերային հավասարությունը: ԺՀՄԻԳ-ը ամեն տարի իրականացնում է մի շարք աջակցության թիրախային ծրագրեր՝ նպատակ ունենալով զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԺՀՄԻԳ-ը նաև աջակցում է մասնակից պետություններին կատարել իրենց ստանձնած՝ **մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների** խթանման և պաշտպանության հետ կապված պարտավորությունները՝ ԵԱՀԿ մարդկային հարթության պարտավորություններին համահունչ: Դա ձեռք է բերվում տարբեր գործընկերների հետ համատեղ աշխատանքով՝ նպատակ ունենալով խթանել համագործակցությունը, զարգացնել կարողությունները և փորձաքննություն տրամադրել թեմատիկ ոլորտներում, որոնք ներառում են ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում մարդու իրավունքները, թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը, մարդու իրավունքների ոլորտում կրթությունն ու վերապատրաստումը, մարդու իրավունքների մշտադիտարկումն ու զեկուցումը և կանանց իրավունքներն ու անվտանգությունը:

Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտներում ԺՀՄԻԳ-ը մասնակից պետություններին տրամադրում է աջակցություն՝ ուժեղացնելու ատելության հիմքով հանցագործությունների և ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության այլ ձևերի դեմ իրենց պայքարը: Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտում ԺՀՄԻԳ-ի գործողությունները կենտրոնացած են հետևյալի վրա՝ օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, մշտադիտարկում, ատելության հիմքով հանցագործությունների և միջադեպերի մասին հաղորդում և դրանց դեմ պայքարի գործում հետևողականություն, ինչպես նաև հանդուրժողականության, հարգանքի և փոխըմբռնման խթանմանն ուղղված կրթական միջոցառումներ:

ԺՀՄԻԳ-ը մասնակից պետություններին խորհրդատվություն է տրամադրում **Ռոմա և Սինթի** համայնքներին առնչվող իրենց քաղաքականության հարցում: Այն աջակցում է **Ռոմա և Սինթի** համայնքների կարողությունների զարգացմանը և նրանց միջև փոխադարձ կապերի կառուցմանը, ինչպես նաև խրախուսում է **Ռոմա և Սինթի** համայնքների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականություն մշակող մարմիններում:

ԺՀՄԻԳ-ի բոլոր միջոցառումներն իրականացվում են ԵԱՀԿ մասնակից պետությունների, ԵԱՀԿ հաստատությունների և դաշտային առաքելությունների, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների հետ սերտ համակարգմամբ և համագործակցությամբ:

Առավել մանրամասն տեղեկություններ հասանելի են ԺՀՄԻԳ կայքում (www.osce.org/odihr):